


37

7-30



MAR 2010

37  
7-30

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍՈՒՔԻՆՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի Ս. — ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՀՈԳԵԻՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆՈՒԷՐ ՄԵԾԱՐԳՈՅ ԳԷՈՐԳ ԵՒՆԳՈՒԼԵՆՅՈՒՆ.

Արսասպուած Արարատ ամսագրից

370  
2258-ՊԱ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Եկեքաւարժ Տպարան սրբոյ Էջմիածնի

1907 (3.)

37  
7-30  
148

33

370  
2258-ՊԱ

# ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍՈՒՔԻՆԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի Ս.—ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՀՈԳԵԻՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Գրեցաւ ի 10 Յունիսի 1885 թուին:

1004  
1550

ՆՈՒԷՐ ՄԵԾԱՐԳՈՅ ԳԷՈՐԳ ԵՒՆԵԳՐՈՒԼԵՆՅԻՆ.



Արտատպած Արարատ ամսագրից



Վ.Ա.ՂԱՐՇԱՊԱՏ  
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի  
1907

18 JUL 2013

44.695

Հ ր ա մ ա ն ա լ

Տ. Տ. Մ Կ Ր Տ Ձ Ի

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ե Ի Ս Ր Բ Ա Ջ Ն Ա Գ Ո Յ Ն Կ Ա Ք Ո Ի Ղ Ի Կ Ո Ս Ի

Ա մ Ե Ն ա յ Ո ճ Հ ա յ ո ճ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1884 թուականին՝ սրբազան Սինոդի հրամանով, Պետերբուրգ դպրոցական գործով պատուիրակ գնացած լինելով, մի համառօտ հաշուետուութիւն էի դրած պատգամաւորութեանս վերաբերմամբ, որպէս զի տպագրութեան յանձնուի: Որովհետև այն ժամանակին թէ՛ Ռուսահայոց և թէ՛ Տաճկաստանի ազգային լրագրական հրատարակութեանց մէջ յարձակողական գրութիւններ յայտնուեցին իմ գործելու եղանակի անհարազատութեան մասին, ուստի այն գրքոյկը մի ընծայականով՝ 1885 թուի յունիսի 10-ին, նուիրեցի ի Տէր հանգուցեալ բարեյիշատակ Գէորգ Եւանգուլեանցին, որ՝ իմ խնդրագրերի շարագրողը լինելով, ջերմեռանդ գործակից էր և մանրամասնօրէն ծանօթ կատարուած իրողութիւններին, ուրեմն և ձեռնհաս վկայել ճշմարտութեանը հրապարակախօս ձայնով: Եւ որովհետև առանց հաւանութեան մեծաւորիս—Մակար արքեպիսկոպոսի, ոչինչ չէի համարձակիլ հրատարակել, վասն որոյ իսկութեամբ մատուցի նորան կարգալու և թոյլատրելու՝ յանձնել մամուլի առանձին գրքուկով: Լուսահոգի Հայրապետը վաղաժամ գտնելով նորա հրատարակութիւնն՝ պատուիրեց այդ գործն առ ժամանակ յետաձգել: Դպրոցական գործին վերաբերեալ ամէն մի գրուած՝ որքան և թերակատար լինի այն, այժմէութիւնից գուրկ չ'համարելով՝ արժան զատեցի նոյնութեամբ հրատարակութեան տալ այն փոքրիկ աշխատութիւնն:

ՍՈՒՔԻԱՍ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՁԵԱՆՑ.

18 Մայիսի 1907 ամի  
ի սուրբ Էջմիածին.

Մեր ներկայ «Պատուիրակութիւն ի Սանկտ-Պետերբուրգ» հոգևոր դպրոցների մասին վերտառուած գրքոյկ նուիրում ենք Ձեր Յարգութեան անուան, ոչ իբրև ընծայաբերութեան արժանաւոր-պարգևողի և ընդունողի յատկութեանց վերաբերութեամբ-մէկ աշխատութիւն. այլ իբրև մեր անձին արդարացուցումն այն ամեն չարաբանութեանց դէմ, որոնք հրապարակներում բանիւ և գրով հրատարակուեցան, Որովհետև Ձեզ առաւել՝ քան այլ ումեք, յայտնի են Բարձրագոյն Հայոց հոգևոր իշխանութեան քաղաքական վարչութեան հետ ունեցած գրագրութիւնք 1884 թուականի Փետրվարի 16-ին Բարձրագոյն Կայսերական հաճութեամբ հաստատուած դպրոցական հրահանգի գործադրութեան յետաձգելու մասին. Ուստի և Դուք նախ քան զամէն ունիք իրաւունք ձգելու մեզ վերայ կամ դատապարտութեան և անարգանաց քար, կամ մխիթարութեան և գովասանաց ծաղիկ:

Իրաւունք չհամարեցինք մեզ դպրոցական կառավարութեան պատճառաւ ի սկզբանէ անտի և այսր Գէորգ Դ. Վեհափառ Հայրապետի և Կովկասեան Փոխարքայութեան մէջ շարունակուած գրագրութեանց վերայ խօսիլ կամ տեղեկութիւնք աւանդել. դոքա վերապահուած են սրբազան Սինոդին՝ որ ի հարկաւոր դէպս զանց չէ առնում ըստ մարթելոյն հրատարակել: Արձակուրդի ամիսներ են և մեք զՁեզ մատնացոյց ենք առնում հետաքրքիր հասարակութեան առաջ իբրև ականատես վկայ նախանցեալ գործողութեանց: Պարգևեն մեզ երկինք այն բարեբախտ օրն և ժամ, երբ յաղթական օրհնութեամբ բացուին Ազգային Հոգևոր դպրոցների դռներ առաւել դիւրատար պայմաններով, որպէս զի ի լուր հեռաւոր և մերձաւոր որդւոց Հայութեան բռնադատուինք գոչել. «անգիտութեամբ սխալեցանք և երկչոտութեամբ վաղվաղեցինք»:

Ա.

Մեզ վերայ մի մեծ պարտականութիւն և անփախուստ պատասխանատուութիւն կայ ինչպէս ուսումնարանական խնդրով զմեզ ի Սանկտ-Պետերբուրգ ուղարկող հոգևոր իշխանութեան յառաջ, նոյն և դպրոցների բուն սեփականատէր Հայ ժողովրդեան դիմաց: Այս սուրբ պարտականութիւն անտեսելը զմեզ ապագայից դատաստանով այնքան վնասապարտ ցոյց կտայ, որքան ազգային հոգևով դատտիրակութեան և ուսման խնդիրը կարևոր է Հայ հասարակութեան որդւոց համար: Սրբազան Սինոդին համառոտութեամբ յայտնած եմք իւր ժամանակին մեր առաքելութեան ապարդիւնաւորութեան մասին, այժմս գամք ծանուցանել բարեմիտ ժողովրդեան դպրոցական խնդրոյ այն ամեն մանրամասնութիւններ, որոնք անձանօթ մնալով շատերին գայթակղութեան առիթ դարձած են մեր հաւատարմութեան վերայ վստահութիւնն: Որպէս զի ընթերցողք մեր անցեալ և վերջին ընթացից և գործողութեան մասին որոշ գաղափար կազմեն, այս տեղ իսկութեամբ մէջ ենք բերում մեր յանուն Սինոդին ուղղած ի 20 Յուլիսի 1883 ամի ընդ համարաւ 96 յայտարարութիւնը:

«Ի մասնաւոր հաւաստի լրոց տեղեկացայ, զի քաղաքական Բարձրագոյն իշխանութիւնն ի վերջին աւուրո «գրաւորաբար արժարժեալ է զխնդիր կառավարութեան «ազգային հոգևոր դպրոցաց: Որովհետև այս կենսական «գործ միմիայն երաշխաւորէ զգոյութիւն Հայոց եկեղեցւոյ և ազգութեան ի Ռուսաստան, և զարգիւ չունի զբարոյական գլուխ եկեղեցին Հայաստանեայց, ուստի ես «ամենախոնարհաբար՝ իբրև մի ոք օգնական կաթողիկոսի

«Հայոց ի գործ կառավարութեան հոգևոր դպրոցաց, հայ-  
«ցեմ՝ զայդ խնդիր հաղորդել համայն վիճակաւորաց ազ-  
«գին, և ապա խորհրդով նոցին պատասխանի առնել որոց  
«արժանն է, եթէ միայն ստիպողական է. իսկ թէ ոչ յե-  
«տաձգել ցգումարումն ազգային ժողովոյ ընտրութեան  
«Հայրապետի, կամ ցնոյն իսկ հաստատութիւնն ծայրա-  
«գոյն Պատրիարքի»:

Մէջ ենք բերում իսկութեամբ և մէկ քանի նախա-  
դասութիւնք մեր յանուն Կերպատիւ Ներսէս սրբազան  
եպիսկոպոսի ուղղած յ2-ն յ30-ն Հսկտեմբերի և ի 11-ն  
Նոյեմբերի 1884 ամի նամակներից:

«Սրբազան եղբայր. դպրոցների գործն օր ընդ օր  
«ձանրանում է: Անդադար ինձանից պահանջում են դրով  
«ժողովրդական դպրոցների արքունի տեսուչները, ծխա-  
«կան վարժոցների մէջ ընդունել այն եղանակներն՝ որոնք  
«որոշուած են տարւոյս Փետրուարի 16-ին Բարձրագոյն  
«հաստատուած կանոնադրութեան մէջ: Մէկի համար ար-  
«դէն Սեպտեմբերի 11-ին համարաւ 268, յայտնեցի սըր-  
«բազան Սինոգին. իսկ միւսը ստացայ այսօր, որոյ մասին  
«դարձեալ նոյն ճանապարհն, այսինքն պահպանողական  
«դիրք, պէտք է բռնեմ: Չգիտեմ, Սրբազան Սինոգական-  
«ննր ի՞նչ կարծիքի են, և ի՞նչ են կամենում առնել ի  
«խաղաղութիւն սրտի հայտգրի ժողովրդեան: Յաւալին  
«այն է, որ այսպիսի ժամանակ մեր աշխարհական անհե-  
«ռատես հոգաբարձուք և հասարակութիւնք՝ անհանգիստ  
«աղաղակելով արտաքին միջամտութեան տեղիք են տա-  
«լիս, և կարծես թէ՛ հրաւիրում են իրենց ձեռքից այդ  
«ուսումնական հաստատութեանց կառավարութեան գոր-  
«ծը յետ ստանալ:

«Ի դէպ, դիցուք պարօն Արգար Յովհաննէսեանց կար-  
«գարանայ այն մասին՝ որ Արծրունովի Քարվանսարան  
«ընկերովի չգնուեց, և սուրբ էջմիածնի ճեմարանին իբրև  
«ապահովութիւն չյանձնուեց. ըստ որում Ներսէսը կա-  
«թողիկոս չհաստատուեց, որոյ ի շնորհս միայն ճեմարանը  
«պիտի ապրէր. այժմս նա ի՞նչ է ասում ազգային գըպ-

«րոցների վերաբերութեամբ. չէ՞ որ ձայն էր տարածել  
«թէ՛ Տիխիսում այդ մասին ազգասէրները գործում են  
«և յատակագիծ են պատրաստում: Լուրջ խօսենք. Սինո-  
«գի անդամք քաջութիւն ունին մէկ գեղեցիկ առաւօտ  
«բոլորն ի միասին կամ առանձին գրուած հրատարագիր  
«գնենն ատենի կարմիր չուխայի վերայ և ասեն. մենք այլ  
«ևս Սինոգի անդամ չենք, և չենք կամենում գործել իբրև  
«ի կողմանէ Կաթողիկոսի, երբ որ խստագոյն պահանջ  
«լինի դպրոցների համար ծրագրուած կանոնադրութիւնն  
«ընդունելու մասին: Կարծեմ՝ թէ՛ ոչ է պատասխանն,  
«ուրեմն՝ ինչու համար է տարապայման լութիւնն. ան-  
«չուչտ պէտք է պատասխանել, որ դպրոցական խնդիրը  
«գուտ հոգևոր գործ է, ինչպէս և իրենցում նոյնն է հո-  
«գևոր վարժարանների կառավարութիւն. մեզ համար  
«ինչու այլակերպ պէտք է լինի»:

«Այսպիսի խառն ժամանակ՝ ես կարծում եմ, շատ  
«մեծ խոհեմութիւն կլինի՝ որ Սինոգն ընդհանրապէս  
«կարգադրէ դպրոցական բոլոր գումարները հոգևոր իշ-  
«խանութեան ձեռք ժողովել և հոգաբարձուների ամսե  
«ամիս տուած ցուցակին համաձայն գումար բաց թողնել  
«վարժարանների ծախուց համար հոգևոր կառավարու-  
«թիւններից, Կոնսիստորիայներից և բարեկարգութիւն-  
«ներից: Աստրախանի դպրոցների գումարները մօտ 30,000՝  
«հանգուցեալ Գէորգ Արքեպիսկոպոսի խնդրանօք և Կա-  
«թողիկոսի սրշմամբ վիճակային Կոնսիստորիայումն է  
«եղել պահպանուած, պատճառ բերելով հոգաբարձու-  
«ների անյուսալի անձինք լինելն: Առանց այսպիսի վտանգ-  
«ների նախատեսութեան՝ տարւոյս սկզբներն ես Կոն-  
«սիստորիային պատուիրեցի յանձնել հոգաբարձուաց այդ  
«գումարներ. այսպիսի գեղեցիկ խորհրդով, որ երբ ժո-  
«ղովուրդ և հոգևոր իշխանութիւն ազգի երկսեռ զաւա-  
«կաց կրթութիւն նոցա են հաւատում, որ հաղար անգամ  
«առաւել է քան զմիլիոնաւոր գումարներ, պէտք է և  
«դպրոցական դրամները նոցա ձեռք յանձնեն: Բայց շատ  
«սխալեցայ, ըստ որում հոգևոր իշխանութիւնն երբ և

«իցէ գիմադրելով արտաքին միջամտութեան՝ կարող էր «իւր հոգևոր ատեաններին գրել՝ դադարեցրէք ուսումնարաններին գումար տալը. թնդ քաղաքական իշխանութիւնը պահպանէ այդ իւր ձեռք ձգած դպրոցներ «իրեն միջոցներով, եկեղեցական գումարները հոգևոր «իշխանութեան կ'պատկանին»...»

«Սրբազան Սինոդի առ Կառավարչապետ ուսումնարանների մասին գրածը արդարութիւն և իւր նուիրական պարտքն են. թէ և յոյս չկայ յարգութեան, բայց մինչև ընտրական գործողութեանց ժամանակ կարելին է քաշ տալ: Եթէ այդ միջնորդութիւնն ընդունելութիւն չգտնէ, վարժում եմ, որ մարդ ուղարկելն ևս սպասուած օգուտը չի ունենալ և Մակար Սրբազան դժուար թէ յանձն առնէ գնալ: Այս հարցի մէջ Սինոդն ինձ ինչ որ հրաձայէ, ընդունելի է. բայց առանց Կառավարչապետի գիտութեան և տեսակցութեան ուղղակի Պետերբուրգ գնալը ասուր բնաւորութիւն կտանայ: Շատ ուրախ եմ, որ ես սխալ կարծիք ունէի Սրբազան Սինոդի սրբազնագոյն անդամոց քաջատրտութեան վերայ. մեզայ յերկինս և առաջի ազգասիրութեան նոցա. ամեն ոք նոցանից այս ասուրք գործում ինձ համար նուիրական է և յարգելի: «Երանի՛ թէ ցընտրութիւն Կաթողիկոսի այնպիսի կտրուկ բնաւորութիւն ստանար այս ինդիր՝ որոյ մէջ ամեն Հայ «եպիսկոպոս—Սինոդի անդամք և առաջնորդք—ցոյց տար «իւր Եղիայի նախանձախնդրութիւն, որով կառավարութիւնը համողութե՛ թէ՛ արտաքին հանգամանքների ուժգնութիւն միշտ կարող են Հոյսոց և կեղեցւոյ շրջապարջուպին մօտեցած ժամանակ Ղևոնդներ տեսնել անխռով, «անվե՛հեր սրտիւք դիմագրու հանդիսացողներ: Աստուած «ի բարձանց հովանաւորէ չորս հազարեան ամաց ժամանակի չարատանջ ազգիս իրաւանց: Անդադար դիմում «են ինձ ժողովրդական դպրոցների արքունի տեսուչք և պահանջում, որ վարժարանների մէջ ընդունեմ այն «հրատարակուած հրահանգները. միշտ պատասխանս այս «է, որ ես դպրոցների բացարձակ տէրը չեմ:»...»

«Իերապատիւ Սրբազան եղբայր: յերեկեան օրը ստացայ Ձեր Հոկտեմբերի 27 թուով արձակած նամակն և «առանց ժամանակ կորցնելու պատասխանում եմ Ձեզ գործոյն կարևորութեանը նայելով՝ որոյ մասին Սրբազան Սինոդ շատ վաղուց հեռանկատ լինելով՝ պէտք էր որ «առաջնորդներին մասնակից անէր այդ գործը վճռելում. «ինչպէս ես առ Սինոդն անցեալ տարուայ յուլիս ամսոյ «20-ին թուահամարաւ 96 յայտարարութեամբ խնդրած «էի: Ի՛նչ և իցէ «Լաւ է անագան քան ո՛չ երբէք» առաձին հետևելու է. ահա թէ ի՛նչ պէտք է անէք Դուք, բոլորեքեան միացած: Ես առաւել խոհական եմ համարում՝ որ Սինոդը կրկնէ իւր վերջին գրութիւնն: Շատ «խելօք է այն դիտումն թէ՛ որքան կարելին է, գործել պէտք է, փախուստ տալ հարկաւոր չէ: Մակայն եթէ «չկամենաք կրկնել Ձեր գրածն, տուաւել լաւ էր իբրև «վսեմ՝ խնդիր՝ վիճակաւորներ և վանհայրերը հրաւիրել «ի խորհուրդ, ի թիւս որոց և էջմիածնի միաբանութեան «անդամներից մէկ քանիսը, յաջորդներն անգամ. այս «եղանակ առաւել սրտկառելի և ընդհանուր Հայ հոգեւորականութեան կերպարանք կտանար: Վերջապէս, «եթէ Սինոդի կողմանէ հաստատուն գիմադրութիւն լինի «և կարողանայ գործը յետաձգել ցընտրութիւն և հաստատութիւն Կաթողիկոսի, այն ժամանակ մեծ փոփո« խութիւնք կարող են մտցնուել նախարարական ժողովով «պատրաստած հրահանգի մէջ, որ բոլորովիմք բառնում «է հոգևոր իշխանութեան իրաւունքն: Ո՛չ մի կարծեաց «բաժանմունքից երկիւղ անելու չէ. այդ ամէն ժամանակ, «ամէն դէպքում, ամէն ազգաց մէջ կատարուում է. բա«ւական է միայն մի ձայնի առաւելութիւն և խնդիրը «վաստակուած է յաջողութեամբ» \*):»

\*) ձշմարտութիւնը հարկադրում է մեզ՝ որ ընդօրինակենք այստեղ և երկու հատուած սրբազան Ներսէս եպիսկոպոսի առ մեզ ուղղած յ8 և ի 16 հոկտեմբերի 1884 թուականի գրութիւններէց՝ որոնք դպրոցական հարցի մասին յետագայքն են պատմում: «Աւսումնարանների մասին այստեղից Մեարովպ

Մէջ բերենք այս տեղ և մեր երկու պաշտօնական գրութեանց պատճէնները յանուն վերատեսչաց ժողովրդական դպրոցների Բաքուայ նահանգի—Պաղատանու գաւառի և Կուպանի շրջանի ի 28 մայիսի և ի 11 սեպտեմբերի 1884 ամի թուահամարօք 127 և 267, որոնք ուղարկելով առ մեզ Բարձրագոյն կամօք հաստատուած հրահանգները՝ պահանջում էին նոցա գործադրութիւն, որպէս զի մեր բնաւորութիւնը վարժարանական յեղափոխութեան գործում առաւել ևս բացայայտ լինի:

«Եպիսկոպոսին ուղարկեցինք Տիխիս խորհրդակցելու բանագէտ անձանց հետ և նոցա խորհրդով գործենք ինչ որ հարկաւոր է: «Այն տեղից դբել էին մի բան՝ որը և ուղարկեցինք բոլոր անգրամոց ստորագրութեամբ Դոնդուկովին, յորում բացարձակ «ասում ենք, որովհետև Կաթուղիկոսի իրաւունքն է, մենք չենք «կարող կատարել կառավարութեանդ հրամանը: Դեռ ևս այս «թղթի պատասխանը ստացած չենք, տեսնենք ի՞նչ կգրեն: «Մտադիր ենք՝ որ եթէ այլ ևս ստիպեն, մարդ ուղարկենք Մի- «նիստերին. այս մասին մեզ խորհուրդ են տալիս Տիխիսից, որ «եթէ մարդ հարկաւորի ուղարկել՝ Մակար սրբազանին դիմել: «Բայց ես այս խորհրդին չհամաձայնեցի այն պատճառաւ, որ «եթէ չյարգուի՝ պիտի զանազան շարաբանութիւններ անեն «նորա գէմ. հարկաւոր է նորան ծանր գիւրքի մէջ պահել:» . . . «Ուսումնարանաց հարցի մասին արդէն գրած եմ սրբութեանդ «համառօտ կերպով՝ բայց այժմ լրացնելով այն թերութիւնները «ուղարկում եմ Սինոդի առ գլխաւոր կառավարութիւնն գրած «գրութեան պատճէնը՝ ու Մեսրոպը Եպիսկոպոսին ուղարկեցինք «Տիխիս խորհրդակցելու բանագէտ անձանց հետ և գրել տալով «այն տեղ բերեց մեզ, որ արդէն ուղարկեցինք, որին տակաւին «չէ՛ հետևած՝ որ և է մի պատասխան:—Կսխալուիք եթէ ասէք, «Անդամք սիրա և քաջութիւն չունին իրանց հրաժարագրերն «գնելու Սինոդի Ատենի չուխայի վերայ, Անդամք հենց այդ «գիրը գրելու փոխարէն՝ այժմէն իսկ կամենում էին այդ անել: «Բայց այս անգամ խոհեմութիւն համարուեց, դեռ ևս այսպէս «գրել: Եւ ի՞նչպէս չանեն՝ քանի որ կենաց և մահու խնդիր է «այս գործը մեզ համար, և քանի որ մեր իրաւունքից շատ «բարձր է այդ կանոնների կատարումն տալը: Սինոդը մտադիր «է՛ եթէ այս մեր գրած գրութեանը հակառակ պատասխան «ստանանք, մի բարձրատանձան հոգևորական ուղարկէ Պետրե-

«նորին գերազանցութեան, Տեառն վերատեսչի ժողովրդական դպրոցաց Բաքուայ նահանգի և Պաղատանու գաւառի: Առ հաղորդագրութիւն Ձերդ գերազանցութեան ի 24 ապրիլի տոյն ամի համարաւ Յ14, ունիմ չնորհ «հաղորդել Ձեզ, որդրմած Տէր, թէ տնօրէնութիւնը ամենու «ղորմածագոյն կառավարութեան Ռուսիոյ, վերաբերեալք «վարչութեան Հայոց-Գրիգորեան եկեղեցեաց և դպրոցաց, «հաղորդին Հայոց Լուսաւորչական Սինոդի Սրբոյ Էջմիած- «նի, իսկ ի ձեռն վերջնոյս հրամանագրի վիճակային իշ- «խանութեանց յանձերի կատարումն: Եւ որովհետև ըստ «էյիշատակեալ գործոյ չէ հետևեալ յանուն իմ ո՛չ մի «տնօրէնութիւն ցայսօր, մինչև ցատացումն նոյնպիսոյ ի

«բուրդ Թագաւոր Կայսեր ողորմածութիւնը խնդրելու: Այս «մասին թէ և Տիխիսից մեզ խորհուրդ են տալիս թէ՛ եթէ երբ «և իցէ հարկաւորուի մարդ ուղարկել Պետրեբուրգ, ոչ ոքի չէ «կարելի հաւատալ այդ մեծ գործը, այլ միայն Մակար սրբա- «զանին, որ իւր խոհեմութեամբ կարող է գործը չփչացնել», «բայց մեր (այսինքն իմ, Մամբէ վարդապետի և քանխոնների) «կարծիքն այն է՝ որ այդ գործը նորան չտալ այժմ. վասն զի «նախ որ ինքն դժուար թէ յանձն առնի, երկրորդ՝ որ եթէ «անյաջողութիւն գտնէ՝ պակասութիւն է նորա անուան, «և ո՛ր քիտէ մեր հողմարածեանները ի՞նչ ինչ զրպարտական «քամբատանքներ այսուհետև չեն յորինել նորա մասին: Դեռ մի «անգամ թագադրութեան հանդիսին ներկայ գտնուեցաւ՝— «հազար տեսակ զրպարտութիւններ արեցին, ռամիկ ժողովուրդը «գրգռելու և ժողովրդի աչքից հանելու համար: Այսպէս էլ ես «գրեցի Տիխիս Սրչակին՝ որ բարեկամներին յայտնէ. չգիտեմ, «Ձեր կարծիքն ի՞նչ է այս մասին: Իսկ իմ սեփական կարծիքս «այն է այս գործի վերաբերութեամբ՝ որ եթէ հարկաւոր լինի «մարդ ուղարկելու, Ձեզ միայն հաւատալ այս մեծ գործը՝ որ «յուսով եմ սրբազան Նոր խորհրդով Ձեր վարմունքը այս մա- «սին մի լաւ յաջողութեան կառավորողէ մեր ուսումնարա- «նական գործը և միանգամայն վերջ կտրուի բոլոր այդ մասին «գրագրութեանցը»: Դպրոցական գործին վերաբերուած բաւա- «կանին նամակներ կան մեզ մօտ զանազան տեղերից գրուած. «տակայն նոցա անփոփոմն ժամանակի յաջողութեանց կարօ- «տելով՝ առ ժամա զանց ենք առնում:

«Մայրագոյն Հոգևոր իշխանութենէ, յիմոյս կողմանէ չկարեմ առնել զոչ մի տնօրէնութիւն»:

«Պարոն Տեսչի ժողովրդական վարժարանաց Կուսանու շրջանի: Առ հաղորդագրութիւն Ձեր, ի 4-էն սեպտեմբերի տարւոյս համարաւ 1313, պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ, ողորմած Տէր, թէ ի պատճառս չստանալոյ իմ մինչև ցայսօր ի Սինոդէն սրբոյ էջմիածնի զկարգադրութիւն յաղագս ի կատար ածելոյ զԲարձրագոյն հաստատեալ ի 16 վետրվարի այսր ամի կանոնս վասն եկեղեցական Հայոց դպրոցաց, ես չհամարիմ ինձ իրաւունս անընդմիջաբար առնել ըստ այսմ առարկոյի զորպիսի և իցէ կարգադրութիւն. ուստի այսօր իսկ ընդ համարաւ «268, ես ի վերայ հիման Ձերդ գրութեան դիմեցի առաջարկութեամբ ի Սինոդն սրբոյ էջմիածնի»:

Բ.

Դեռ ևս չձեռնարկած արձանագրելու այն իրողութիւններ՝ որոնք յանձնառու եղանք դպրոցական մասին, դարձեալ անհրաժեշտ կարևոր ենք համարում զենել այս տեղ բառ առ բառ գերապատիւ Ներսէս սրբազան եպիսկոպոսի յանուն մեր ի 27 հոկտեմբերի և ի 29 նոյեմբերի արձակած նամակներ. որպէս զի ակն յայտնի նշմարուի գործոյն ստիպողականութիւն հանդերձ արտաքին հրահանգներով ըստ որոց ամենակարևոր էր դատուում յատուկ մարդ ուղարկել Սանկտ-Պետերբուրգ: Այս օրերում ստանում ենք հրահանգող նամակներ և Տիխիսից պարոն Սիմէոնեանցից գրուած՝ որով նա զմեզ ապահովում է թէ՛ Կայսերական մայրաքաղաքում պատրաստ են արդէն հարցի յաջողութեան օգնել խորհրդով և գործով ինչպէս նորին գերազանցութիւն Կարապետ Յարութիւնեան եզեանց, մեծապատիւ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանց, պայծառափայլ իշխան Սիմէոն Դաւթեան Աբամելիք-Լազարեանց, բարձր գերազանց Նախարար լուսաւորութեան Յովհաննէս Դաւթեան Դիլիանով և այլք, նոյնպէս և Տիխիսիէն անձամբ նոյն տեղը հասնող պարոն Գէորգ Եւանգուլեանց. և թէ

առաջինների անուամբ ծանօթ մարդկանցից մեր մասին արդէն յանձնարարական գրութիւնք ևս եղած են:

«Գերապատիւ Սրբազան Հայր: Օր աւուր բղխէ զբան» «մարգարէն լաւ է ասել. իսկ այսօրուայ մեր անգլուխ Կառավարութեան համար շատ յարմար է գալիս: Խօսքս ադարձեալ ուսումնարանաց նոր կանոնների մասին է, զի այս օրերս ստացանք Դոնդուկով-Կորսակովից մեր թղթի պատասխանը, որով կրկին անգամ սպառնալեօք գրում է կատարել իւր հրամանը, և մինչև նոյեմբերի 10-ն իրեն տեղեկութիւն հաղորդել: Տիխիսից ինձ գրում են՝ որ «երբ իշխանն ընդունում է մեր գրութիւնը, մեծ զայրոյթ է զգում, և նախ քան Նախարարին ուղարկելը մեր գրութիւնը՝ խորհուրդ է հրաւիրել իւր մօտ և կարծիք է յայտնել, անյապաղ Նախարարից լուծումն ինդրել մտցնելու նոր կանոնների գործադրութիւնն առանց Հոգևոր «Իշխանութեանը զիմելու: Բայց այդ կարծիքը չէ ընդունուել՝ խիստ համարուելով. յետոյ առաջակել է՝ որ իբր «Նախարարին գրել, որ յարգուի Սինոդի ինդիքը, այդ էլ չէ ընդունուել: Վերջ ի վերջոյ ասում են՝ որ մեր թուղթն «արդէն մի շաբաթ է՝ որ ուղարկել են Նախարարին, և «ինչպէս երևում է՝ դեռ չսպասած նորանից պատասխան «ստանալուն, Սինոդին՝ շփոթացնելու դիտմամբ երևի, «գրում է փութով կատարել և մինչև նոյեմբերի 10-ն «իրեն տեղեկութիւն տալ: Տակաւին այս թղթի վերայ «մտածում ենք թէ՛ ինչ պատասխանենք, ոմանք ասում «են՝ որ ամենևին չպատասխանենք. ոմանք՝ թէ նոյն պատասխանը կրկնենք, ինչ որ մինչև հիմա գրել ենք. ոմանք՝ «թէ հրաժարական տանք պաշտօնից, այսպէս ոչինչ եզրա- «կացութեան եկած չենք: Մի բան աւելի յարմար համարեցինք՝ որ միաբանութիւնը պատրաստէ մի գրութիւն «յանուն Սինոդի, յորում յիշելով Կաթողիկոսական իրաւունքները և ժամանակի Կառավարութեան ուսումնարանաց մասին պահանջը՝ պարտք դնէ Սինոդի վերայ չդիպ- «չել այն նուիրական իրաւունքներին՝ որոնք միայն Կաթո- «ղիկոսներին են պատկանում, և այն թուղթը Սինոդն

«իրրև ընդհանուր հոգևորականութեան ձայն ընդունելով՝  
 «ուղարկէ Կառավարութեան ասելով ի միջի այլոց թէ՛»  
 «ահա ընդհանուր Հայոց հոգևորականութիւնն ևս մեզ  
 «վերայ պարտք է դնում չղիպչենք Կաթողիկոսական  
 «իրաւանց, գուցէ մի ժամանակ ևս այսպիսով ընթա-  
 «նանք — մինչև ընտրութեան ժամանակները: Չգիտեմ,  
 «այսքան յիշած մտքերից որն աւելի Ձեզ յարմար թուի-  
 «ւ Դուք ինչ կարևոր խորհուրդ կտաք մեզ այս մասին.  
 «Վնդրեմ՝ շուտով հաղորդէք, որպէս զի ըստ այնմ վա-  
 «րուինք մենք: Թէ և կասկածում ենք՝ որ Պրովոքորը  
 «գուցէ մեզ բաժանէ միմեանցից և մի կամ երկու հոգի  
 «իրան կողմ դարձնէ, սակայն այդ ևս մեզ չէ կարող  
 «վհատեցնել, դարձեալ բազմութեամբ ձայնի կանենք ինչ  
 «որ հարկաւորն է. բայց ի հարկէ ցանկալի էր կասկա-  
 «ծանքներս միայն կասկած մնար և իրականութիւն չստա-  
 «ւնար: Ոմանք այժմէն հրաժարական տալը վաղ են համա-  
 «րում ասելով՝ որ քանի կարելի է գործել՝ փախուստ  
 «տալ հարկաւոր չէ: Ամօթ և նախատինք նոցա երեսնե-  
 «ներին՝ որոնք այսօրուայ վիճակին հասցրին մեզ, եթէ  
 «չինէր մի դուրս, այսքան մտածմունքը այսօր աւելորդ  
 «էր. բայց ինչ արած, անցածն անցած է»:

Արբազան Հայր Գերապատուութեանդ գրած նոյեմ-  
 «բերի 11 թուականու պատուական նամակը ստացայ  
 «ամենայն յարգանք, որուն կիւրթամ պատասխանելը  
 «Ուսումնարանական հարցը օրուայ խնդիր է դարձած մեզ  
 «համար. անդադար գրագրութեան մէջ ենք Տիփսիսի բա-  
 «րեկամաց հետ: Երեկեան օրն ստացանք նամակներ՝ որ  
 «Էրոնդուկովը վերջապէս համոզուել է մեր գրածի վերայ՝  
 «թէ Սինոդը ստորագրեալ լինելով վախում է Կաթողիկո-  
 «սից, հետեաբար այնպէս պէտք է վարուի այս գործում  
 «Վնչպէս որ գրում է. ուրեմն կմնայ՝ որ գործը յանձնենք  
 «Նախարարի վճռահատութեան, այսպէս է մտածել Իչ-  
 «խանը: Այժմ մեր բարեկամները շատ կարևոր են հա-  
 «մարում՝ որ մարդ գնայ Ս. Պետերբուրգ, ուր և կլինի  
 «Էրոնդուկով Իչխանը, այնտեղ նորան տեսնելուց յետոյ՝



«գիւմէ նախարարին և մինչև անգամ ինչպէս յարմար  
 «քա ողորմութիւնը և ազատէ այն վտանգից մեր ազգային  
 «գրպրոցներն՝ ինչ որ սպառնում է նոցա: Սինոդում՝ այսօր  
 «խորհուրդ արինք և վիճակուեցաւ Արբազանութեանդ այդ  
 «առաքելութեան պատիւը. Ձեզ միայն վայել է, Դուք  
 «միայն կարող էք գործը մի խոհեմ ճանապարհի մէջ  
 «դնել: Արդէն Ձեզ առաջին նամակաւ հաղորդած եմ, որ  
 «Արբազնութեանդ վերայ միայն կարող ենք մատնանիչ  
 «լինել, որչառած վերջացած է այդ խնդիրը, և Դուք  
 «պէտք է գնաք Ս. Պետերբուրգ: Այժմ Սինոդը պատրաս-  
 «տում է կարևոր գրութիւնները՝ որոնք այս կիւրակէ  
 «աւուր փոշտայիւ կուղարկուին Ձեզ, ուրեմն Դուք ստա-  
 «ւնալուն պէս, առանց ժամակորոյս լինելու պէտք է աճա-  
 «պարէք Պետերբուրգ և հոգալ ինչ որ հարկաւորն է: Դի-  
 «տեմ, որ ծանր է պաշտօնը և յանձնարարութիւնը, բայց  
 «այն ևս գիտեմ թէ՛ ի սէր ազգի և եկեղեցւոյ սիրով  
 «յանձնառու կլինիք այդ ծանրութիւնը բառնալու: Ես  
 «սոյն իսկ փօստայիւ գրեցի Պետրոսին՝ որ ինչ որ խոր-  
 «հուրդ ունի՝ գրէ Ձեզ. և Պետերբուրգ հարկաւոր մարդ-  
 «կանց գրէ՝ որ Ձեզ օգնեն գործը յաջողութեամբ գլուխ  
 «տանելու մասին»:

ԵՍՏՆ

Վերադրուած նամակներից առաջինը ստացած իսկ  
 «օրն, այսինքն Դեկտեմբերի 13-ին, գրութեամբ դիմելով  
 «Ամենապատիւ Մակար սրբազան Արքեպիսկոպոսին՝ եղե-  
 «լութեանց մասին ծանօթութիւն ենք տալիս և ի միջի  
 «այլոց ասում ենք. «յատկապէս խնդրեմ զօգնականութիւն  
 «Ձեր և զխորհուրդ. կարեմ արդեօք նախ առ Ձեզ գալ և  
 «հրահանգիլ, ապա ի Պետերբուրգ ելանել. կամ բարեհա-  
 «ճիք տալ զնամականիս յանուն Եղեանի, Սանասարեանի,  
 «Դեղիանովի, Աբամելիք Լազրիի և այլոց: Բէյն Հնչեստի  
 «պիտոյանայ յայսպիսի խնդիրս, կամ առ մեծ Իշխան  
 «Փոխարքայ—Կայսրեղբայր դուքս Միխայէլ Նիկողայեվիչն  
 «հաճեցիք տալ զգիր խնդրանաց»: Տակաւին պատասխան  
 «չստացած Արբազան Մակարից հասնում է սրբազան Սի-  
 «նոդի կառավարչական մասին յ30-ն նոյն Դեկտեմբերի

3342 թուահամարով յանուն մեր տրուած առաջադրու-  
թիւնն՝ որոյ հարազատ օրինակն է հետեւեալս:

«Կառավարչի Հայոց թեմին Աստրախանայ գերապա-  
տիւ Սուքիաս Եպիսկոպոսի. Ձկնի երրորդական միջնոր-  
դական գրագրութեանց Սինոդիս ընդ Նորին Պայծառա-  
պիայութեան Կառավարչապետի քաղաքական մասին  
«Կովկասու վասն ազգային և եկեղեցական դպրոցաց Հայոց  
«և երրորդ անգամ՝ ընկալնլոյ ի նմանէ զմերժողական  
«պատասխանիս, Սինոդս նկատէ, զի առանց առաքման  
«քի կողմանէ սորին յատուկ և բանիբուն խոհական անձին  
«քի Ս. Պետերբուրգ ի միջնորդութիւն առ գլխաւոր պաշ-  
«տօնեայո Տէրութեան Ռուսիոյ, անհնարին է ի ձեռս բե-  
«րել զցանկալին յառաջադիմութիւն գործոյս: Սորին աղա-  
«պաւ Սինոդս գնելով զլոյս իւր ի վերայ Գերապատուու-  
«թեանդ և քնն իշխողատելով, զի Դուք Ձերով խոհեմ՝  
«և հեռատես նկատողութեամբ ունիք արդարացուցանել  
«զլոյս իւր, որոշեաց առ այս նպատակ նշանակել զՁեզ և  
«առաքել ի Կայսերական մայրաքաղաքն Ս. Պետերբուրգ:

«Ուստի և Սինոդս Սրբոյ Էջմիածնի համաձայնու-  
«թեամբ բոլոր անգամոց իւրոց հրաւիրէ զգերապատիւ  
«Սրբազնութիւն Ձեր և յանձն առնէ Ձեզ, ընդ ստանալ  
«գորոյս՝ առանց ժամակորոյս լինելոյ, աշխատութիւն յանձն  
«կալեալ՝ փութով յոյժ գնալ անձամբ ի Ս. Պետերբուրգ  
«և խորհրդակցութեամբ ընդ երևելի անձինս ի մերազ-  
«նէից՝ որք անդ, հասուն մտօք և խոհական միջոցօք զելս  
«հնարից ի գործ գնելով նախապէս ներկայանալ Տեառն  
«Կառավարչապետին Կովկասու Կնեազ Կորսակով-Գոնդու-  
«կովին, որ քանի աւուրքք յառաջ ուղևորեալ է ի Ս. Պե-  
«տերբուրգ, և հայցել ի նմանէ զչնորհս և զբարեմիտ  
«միջնորդութիւն Նորին առ Տէր Նախարարն Ներքին գոր-  
«ծոց և կամ առ նոյն ինքն ամենողորմած Կայսրն Ռու-  
«սաց, որպէս զի՝ միջնորդութեամբ Նորին և խնդրանօք  
«Ձերովք ամենողորմածաբար բարեհաճեսցի թագաւոր  
«Կայսրն, եթէ ոչ իսպառ, գէթ յետաձգել զգործադրու-  
«թիւն այնր նորոց կանոնաց մինչ ցընտրութիւն և ցհաս-

«տատութիւն նորոյ Կաթողիկոսի ազգիս: Իսկ եթէ ան-  
«հաճոյ իցէ Նորին Պայծառապիայութեան Կորսակովի մի-  
«ջամտել յայս գործ, յայն դէպս մատչիլ առ Տէր Նախա-  
«արարն Ներքին գործոց այսու յատուկ միջնորդական  
«պրութեամբ Սինոդիս (որ ընդ սմին առաքի), և խնդրել  
«զմիջնորդութիւն նորա առ այս: Եւ եթէ խնդրարկու-  
«թիւնը Ձեր առ Նախարարն Ներքին գործոց անօգտաբեր  
«և անբաւարարք մնացեն ի կողմանէ նորին ևս, ի վերջին  
«դէպս ամենախոնարհ պաղատանօք արկանել ընդ գար-  
«չապարօք Նորին Կայսերական Մեծութեան զազերս Սի-  
«նոդիս և հայցել զչնորհս յերեսաց Նորին Կայսերական  
«Մեծութեան, որպէս զի բարեհաճեսցի հրամայել՝ գոնէ  
«զգործադրութիւն նորոց Բարձրագոյն հաստատեալ կա-  
«նոնադրութեանց վասն եկեղեցական դպրոցաց մերոց  
«յետաձգել մինչ ցհաստատութիւն Վեհափառ Կաթողի-  
«կոսի, որով և ազատել զՍինոդս յայսմ դժուարատար և  
«յանդանելի դրութենէ: Վասն զի՝ ցանկութիւն և խնդիր  
«Սինոդիս չէ բնաւ դիմադրել ընդդէմ բարեհաճ կամաց  
«թագաւոր Կայսեր կամ օրէնադրութեանց նորին, այլ զի  
«նուիրական և ի նախնի սրբոց Հարց եկեղեցւոյ աւանդա-  
«բար հասեալ ցայս վայր իրաւասութիւնք Կաթողիկոսաց  
«ազգիս մի եղծցին, որով Սինոդս պարտաւոր գտցի առաջի  
«ազգընտիր Հովուապետի իւրոյ, եկեղեցական կանոնաց և  
«առաջի խղճի»:

«Առդ՝ քաջայոյս է Սինոդս, զի գերապատուութիւն  
«Ձեր ըստ ազգասիրական եռանդեացդ և ըստ քնն հրմ-  
«տութեանցդ ունիք զամենայն ճիգն աշխատանաց թափել  
«և զհնարաւոր միջոցս ի կիր ածել առ բարւոք ի յանդ  
«հանել զայս վսեմ գործ և յանձնարարութիւն ի պար-  
«ձանս ազգի և եկեղեցւոյ մերոյ սրբոյ»:

«Ընդ սմին Սինոդս ընդարձակէ Ձեզ զլիակատար  
«իրաւունս, զամենայն ծախս ուղևորութեան և կեցութեան  
«Ձերոյ ի Ս. Պետերբուրգ առնել ի վիճակային գումարաց  
«Աստրախանու և կամ յեկեղացական արդեանց թեմիդ,  
«յարակցելով թէ՛ վասն նշանակելոյ Ձեզ ի պէտս բնա-

«կութեանդ զվայելուչ սենեակս՝ Սինոդս ի միասին ընդ  
«այսմ առանձին գրութեամբ խնդրեաց զպատշաճաւոր  
«անօրէնութիւն իշխան Հոգաբարձուի եկեղեցւոյն Հայոց  
«Սանկտ-Պետերբուրգայ»:

«Իսկ վասն տեղեկութեան և կարևորն հրահանգու-  
«թեան՝ Սինոդս ընդ սմին առաքէ առ Ձեզ զամենայն  
«գործս դիւանատան հանգուցեալ Կաթողիկոսի ազգիս և  
«զբոլոր գրագրութիւնս յարուցեալս ի Սինոդիս վասն այսր  
«առարկայի»:

Սրբազան Սինոդի ներկայ պատուիրանագրութիւն  
դեռ ևս մեր ձեռք չհասած՝ ստանում ենք նորա հեռա-  
գիրը մի և նոյն Դեկտեմբեր ամսոյ 19-ին առաւօտեան 11  
ժ. քարշուած արժանապատիւ Մամբրէ վարդապետի ստո-  
րագրութեամբ, որով հարցուում է. «Մտացմբ Դուք Սինոդի  
«առաջագրութիւն, և երբէք մտադիր դուրս գալու»:  
Ամսոյն 20-ին պատասխանում ենք՝ որ Սինոդի պատուի-  
րանագրութիւն տակաւին ստացած չենք: Որովհետև Կով-  
կասեան Կառավարչապետի մասին ռուս լրագրութեանց  
մէջ հրատարակուում էր թէ՛ Դեկտեմբեր ամսոյ սկզբները  
Պետիդորսկի պէտք է գտնուի տեղական զօրաց տօնա-  
հանդիսին, ռուսի անդորրութեան համար և ստուգիւ  
տեղեկութեան՝ նոյն իսկ օրը հեռագրով խնդրեցինք Տփիսի-  
սու Առաջնորդ գերապատիւ Արխեպիսկոպոսից  
հաղորդել, երբ է Կառավարչապետն գնացած Պետերբուրգ  
և երբ է սպասուում նորա վերադարձ ի Տփիսիս: Այս  
հարցին նորին Սրբազնութիւնը 21-ին պատասխանում է.  
«Կառավարչապետը դուրս է գնացած Նոյեմբերի 25-ին.  
Իսկ թէ երբ կվերադառնայ՝ անյայտ է»:

Գ.

Քանի որ սրբազան Սինոդի հրովարտակ չէինք ստա-  
ցած և անորոշութեան մէջ տատանուում էինք՝ դարձեալ  
մէկ ազօտ յոյս մեր սրտի անհանգստութեան ձայնին  
անդրադարձ էր լինում թէ՛ ո՞ր գիտէ այս չարչարանաց

քաժակ թերևս անցնի մեզանով, ըստ որում և մասամբ  
անհամաձայնութիւն կար Սինոդի անդամոց մէջ Սանկտ-  
Պետերբուրգ մարդ ուղարկելու վերաբերութեամբ: Սակայն  
երբ խնդիրն որոշ կերպարանք ստացաւ՝ օր ըստ օրէ մտա-  
հոգութիւնը սկսաւ մեղ տանջել: Մէկ կողմից յիշելով՝ որ  
Ռուսաստանի մէջ Բարձրագոյն հաճութեամբ հրատարա-  
կուած ամենայն օրէնք յընթացս երեքօրեայ ժամանակի  
անշուշտ կատարուած իրողութեանց կարգն է անցնում,  
և չէ կարող այն փոփոխուիլ՝ մինչև որ գործադրութեան  
մէջ ընդերկար փորձերով նորա փաստակարութիւն կամ  
թերութիւն չստուգուի, այն ինչ մեր դպրոցաց համար  
եղած հրահանգ ամբողջ տասնամսեայ օրերում երբէք չէ  
գործադրուած և այժմս փոփոխութիւն կամ յետաձգու-  
թիւն է պահանջուում: Միև կողմից աչքի առաջ ունե-  
նալով՝ սրբազան Սինոդի նման Հոգևոր Բարձրագոյն  
Ատենի երրակի խնդրարկութիւնը Կառավարչապետից ան-  
պատասխան կամ անկատար թողնուած՝ ինքն իսկ իբրև  
բողոքաւոր Կայսերական մայրաքաղաքն է գնացած և ոչ  
մի երաշխաւորութիւն չկայ մի անձի խնդիր և աղաչանք  
յարգուելուն, մանաւանդ մեզ նման մի անյայտ և անծա-  
նօթ անձնաւորութեան, տարակուսութիւնը մեզ բոլորովին  
տիրեց, Անհանգարտութիւնն այլ ևս դադար չտուաւ մեզ:  
Աճապարեցինք Աստրախանի մէջ մեզ ծանօթ հոգևորա-  
կան և աշխարհական բանագէտների կարծիք հարցնել  
գործի յաջողութեան մասին, և միօրինակաբար ամենքից  
վարանական պատասխան լսեցինք: Փորձեցինք հին և նոր  
յիշատակարաններից քաղուածներ անել Հայոց ժողովըր-  
դեան՝ սկսած մեծին Պետրոսի Կայսրութիւնից ցայսօր,  
Ռուսաց արքայական գահոյից մատուցած հաւատարիմ և  
օգտակար ծառայութեանց համար. որպէս զի մեր ապա-  
գայ աղերսագրութեանց նիւթ դառնան. բայց ինքնին  
առողջադատութիւնից յանդիմանուեցանք. մեզ չէն հարցնիլ  
թէ՛ Հայոց ժողովուրդին այժմս ո՞վ է անհաւատարիմ կամ  
անօգտակար ճանաչում: Այսպիսի երեքմանց միջոցին  
գայթակղութիւն էր գալիս մեզ վերայ առաքեալի պար-

ծենկոտութիւնը՝ նորա ուրացութիւնից յետոյ, արդարացնելով որ՝ «թէ մեռանիլ ևս հասանիցէ, սակայն ոչ ուրացայց զՔեզ» խօսքերը մահուան վտանգի բացակայութեան ժամանակ են արտաբերուած: Նոյնպէս իմ՝ Ներսէս եպիսկոպոսին գրածս՝ «այս հարցի մէջ Սինոդն ինձ ինչ որ հրամայէ, ընդունելի է» սոյն ճղնաժամից շատ յառաջ են գծագրուած:

Մի անգամ եղածն այլ ևս յետս դարձնելու հնար չկար, կամայ ակամայ պէտք էր յանձն առնել և որքան կարելին է շուտով թողնել Աստրախան, որպէս զի Կովկասեան Իշխան Կառավարչապետին Պետերբուրգ տեսնելու հնար լինի: Դեկտեմբերի 21-ին ստանալով Սինոդի հրովարտակ՝ նոյն իսկ օրն գրաւորաբար խնդրում ենք պարօն Նահանգապետի և փոշտային Կառավարչի բարեհաճ կարգադրութիւնք, որպէս զի հարկաւոր համարուած տնօրէնութիւնք լինին մեզ համար անարգել ճանապարհորդութեան մինչև Յարիցին՝ որ 410 մղոն ճանապարհ է և դժուարագնայի՝ մշտական աղմուտ և ճահճային լինելուն պատճառաւ: Խնդրում ենք արքունի ժողովրդական ուսումնարանների Տեսչի յօժարութիւնն՝ Ազաբաբեան Հայոց գաւառային վարժարանի կրօնուսոյց արժանապատիւ Մելքոնցի քահանայ Քալանթարեանցին ամսօրեայ ժամանակով արձակուրդ տալու, որպէս զի հետերնիս առնենք իբրև յաջողակ թարգման և չկարօտենք այս և այն անվրտահելի, անփորձ անձնաւորութեանց դիմելով՝ տարապարտ դժուարութեանց դուռն բանար Առաջադրում ենք Վիճակային Կոնսիստորիային ի միջի այլոց՝ Քալանթարեանց քահանային առժամանակ անդամակցական պարտաւորութիւնից ազատ կացուցանելով՝ տալ մեզ յուղեկից և նորա տեղ կարգել բարեկրօն Գաբրիէլ քահանայ Բախրեանցին, մեր անունն իբրև բացտկայ օրագրութեան մէջ ցոյց չտալ նաև կարգադրել հասուցանել մեր ձեռքը երկու հազար ռուբլի արծաթոյ վիճակային և եկեղեցական գումարներից թէ ճանապարհածախուց համար յերթ և ի դարձն, և թէ՛ մայրաքաղաքում կեցութեան անհրաժեշտ պիտոյից համար:

Այն ինչ մէկ մէկից յետոյ ստանում ենք ժողովրդական դպրոցների Վերատեսչի, Նահանգապետի և փոշտային Կառավարչի գրութիւնք՝ թէ մեր խնդիր յարգուած է նոյանից, հասնում է լուր մեր ականջներին. Աստրախանի եկեղեցիների երեսփոխանները թեմական Առեւնի հրամանով չեն կամենում մեզ ճանապարհածախս տալ, այլ մտադրութիւն ունին ժողովրդական ժողովներ բանալ և թոյլտուութիւն ստանալ նոյանից այսպիսի արտակարգ ծախսարարութեան համար: Չեն բարեհաճում անգամ փոխարինաբար ի հաշիւ մեր սննդադրամոց տալ գումար, որպէս զի անարգել կարողանանք ուղևորել և իշխանութիւնից մեզ վերայ գրուած յանձնարարութիւնք կատարել: Լուր է հասնում մեր ականջներին նաև, որ բարեկրօն քահանայք զանազան պատճառաբերութիւններով հրաժարուում են Մելքոնցի քահանայի ժողովուրդը հովուել յանձն առնելուց: Իսկ մերձակայ ծննդեան օրերում հարիւրաւոր տուն բարեպաշտ հասարակութիւն քրիստոնէական միութարութիւններից զրկել արգարութիւն չէր: Երկայնամիտ համբերութեամբ և ընդարձակասիրտ վեհութեամբ տանում ենք այսպիսի անախորժութեանց, յանձն ենք առնում միայն Վիճակային Կոնսիստորիայի գանձարանում եղած հինգ հարիւր ռուբլի դրամն ստանալ՝ պակասորդն անձնականից հոգալու յօժարութեամբ: Հրաւիրում ենք մեզ մօտ քանի մի երիցունք և նոցա մէջ բաժանում ենք Քալանթարեանցի ծխականաց օրինակատարութիւնք՝ ոմանց բաժին տալով պատարագի հերթակալութիւնն, ոմանց տնօրհնէք և ոմանց տօն շնորհաւորէքներ հանդերձ պատահական օրինակատարութեամբք: Որպէս զի ամենայն ինչ կարգաւ եղած լինի և մտահոգութիւն կամ խղճահարութիւն չունենանք՝ Դեկտեմբերի 23-ին Կիւրակէ օր, սուրբ Աստուածամօր աւագ եկեղեցում՝ պատարագի սրբազան խորհրդից յետոյ, կատարում ենք հոգեհանգստեան կարգ ի յիշատակ այն օրհնեալ ննջեցելոց՝ որոց ժառանգները մեր հրաւէր յարգելով յօգուտ շինութեան աղքատանոցի դրամաւոր ըն-

ծայաբերութիւններ ունին արած: Այս պարտք մեր ուխտագիր էինք կատարել ամսոյն 26-ին Սրբազան Պօղոս-Պետրոս առաքելոց եկեղեցում ի պատիւ նոցա տօնին անձամբ մատուցանելով սուրբ պատարագ. ըստ որում աղքատանոցի տան շինութեան համար անցեալ 1883 թուականին նոյն սուրբ առաքելոց տօնի օրն, նոյն աստուածային տաճարում խրատական յորդորով նախապատրաստական սկիզբն արած էինք, ուրեմն և այն տեղ վայել էր վերջնական դօժութիւն մատուցանել Աստուծոյ և շնորհակալութիւն ժողովրդեան՝ որ մի տարուայ ընթացքում յաջողեցին մէկ ազգային սեփական հաստատութիւն ունենալ, հաստատութիւն՝ որ 13,000 բուրլիից առաւել արժէք ունեցաւ, և այդ փոքր բան չէր, մանաւանդ այս պիտի ժամանակում. սակայն վերահաս ճանապարհորդութիւնն՝ որ տեղի պէտք է ունենար ամսոյն 26-ին, առաւօտեան 10 ժամին, դորա կարգը յեղափոխեց:

Մինչդեռ ամենայն արգելք վերջացած էինք համարում՝ ահա նոր առիթներ յառաջ եկան: Արժանապատիւ Մելքիսեդեկ քահանայն յայտնուում է և ծանուցանում՝ որ ծխոց հովուատարութիւնն յանձն առնող երիցունք առահի միայն խոստացած են իւր պարտքեր կատարել, մեր բացակայութիւնից յետոյ ժողովրդեան իրաւացի տրտունջներ կբարձրանան և ինքը պատասխանատու կհամարուի, որ որոշակի տնօրէնութիւն չէ արած նոցա մասին: Ասում է՝ որ Աստրախանից մինչև Յարիցին փոշտային ճանապարհն սաստիկ ցելս լինելուն պատճառաւ չէ կտրելին սահնակով գնալ. իսկ բաց-հասարակ իջևանի սայլակով դժուար է այնքան հեռաւորութիւն, որ և գիշեր ուղևորութեամբ վճարել: Ծանուցանում է նոյնպէս՝ որ ժամադրուած օրն անհնարին է ճանապարհ դուրս գալ, ըստ որում Վոլգայ գետի վերայ ոչ նաւ է բանում, և ոչ սառույցն է այնքան ամրացած՝ որ կարողանայ ծանրութեան տեղի տալ. այդ իսկ պատճառաւ արքունի փոշան երեքչորս օր է չէ ուղարկուած. ուրեմն առաւել լաւ չէ սպասել մինչև ծննդեան տօնի կատարումն՝ որից յետոյ ամե-

նայն դժուարութիւններ վերացած կլինին և անդորր հոգևով կլինի մեր բացակայութիւն: Ընտանեկան դժտութիւնը զլուխ է բարձրացնում մեր մէջ, և ուղղակի քահանայի պատճառաբերութեանց պատասխանում ենք: Ձեր ծխականաց օրինակատարութիւնը ստանձնողը յարգեն իրենց խոստումն և մեր յանձնարարութիւն կամ ոչ, Դուք երբէք պատասխանատու չէք հասարակութեան առաջ, այլ մեք: Մեզ համար դժուար չէ եկեղեցեաց մէջ ծանուցումն առնել՝ որ Քալանթարեանցի ժողովրդականք ազատ են նորա բացակայութեան ժամանակ, ինչ քահանայի կամենան ծուխ լինել և արդիւնք նոցա յանձնել կարող են, իսկ Դուք հասութից մասին մեզանից կտանաք բաւակալութիւն: Ծանապարհական դժուարութեանց համար Ձեզ հոգալ պէտք չէ. մեք այդ մասին նախատես լինելով՝ յանձնած ենք թեմական Ատենի անդամոց ծածկութիւն կառք վարձել կամ գնել: Քաջագէտ ենք՝ որ ընտանեաց և զաւակաց տէր անձնաւորութիւն էք, ուստի և ամենայն հնարաւորութիւն ձեռք կառնենք զՁեզ անվնաս և անփորձ տանել և բերել. որպէս զի ոչինչ ծանրութիւն չբերենք մեր խղճին և անախորժութիւն Ձեր գերդաստանին: Արգէն հեռագրաւ Մինոգին ծանուցած լինելով՝ որ ամսոյս 26-ին պէտք է դուրս գանք՝ չենք կարող յետաձգել ուղևորութիւնը մինչև ծննդեան տօնի կատարումն և տնօրհնեաց աւարտն. եթէ գիտենանք՝ որ անշուշտ Վոլգայի սառույց պէտք է մեր ստից ներքև կտարուի և ընկղմուինք, դարձեալ չենք յօժարիլ զանց առնել, կամ օր ընդ օր ձգել մեր դուրս գալ: Եթէ Դուք պատճառներ էք որոնում մեզ հետ չգալու. լաւ իմացէք՝ նախապէս զՁեզ կարգելենք քահանայադորձութենէ, և նպա կերթանք. որպէս զի դարձեալ ժողովրդականք Ձեր հովուութեան միայն և եթ ապաստան մնացած չհամարուին:

Ինչպէս յետոյ անձնական փորձերից հաւատարմացայ՝ արժանապատիւ Մելքիսեդեկ քահանայն ունէր իրաւունք վերոյբերեալ առիթները, մանաւանդ ժողովրդականաց հովուութեան անորոշութիւնն, ասացուածի առարկայ շի-

ներ. ըստ որում նախանձից յառաջացած ընկերական չկամութիւնն ամենայն մանրիկ գէպքերից մեծամեծ իրողութիւններ կարող էր յառաջ բերել. Ինչ և իցէ, Գեկտեմբերի 25-ին ստացանք դերապատիւ Մակար սրբազանից հեռագիր ի պատասխանի մեր նամակին՝ որով ծանուցանում է. «Ձեզ հաւատացած յանձնարարութիւնը շատ «կարևոր է և կրեքէ Ձեզ պատիւ: Յանկալի էր և ինձ «տեսակցել Ձեզ հետ, բայց որովհետև ժամանակն չէ ներում, այս պատճառաւ փութացէք ուղղակի Պետերբուրգ: Աշխատեցէք գործել խոհականութեամբ և հանդարտութեամբ, և լինելով ճիշտ արտայայտող Սինոդի «զգացմանց՝ ձեռնարկուիլ մի միայն նորա Ձեզ տրուած «հրահանգներով: Ատուած թնոյ օգնական լինի Ձեզ»: Առանց փոփոխելու մեր նախագիծը՝ նշանակած օրուայ առաւօտեան 10 ժամին թողինք Աստրախան: Դեռ ևս սահնակով կամ սայլերով չէին երթեկելում գետի վերայով պաղի անհաստատութեան պատճառով, այլ ոտով: Անվտանգ երկիւղածութեամբ քայլերնիս փոխելով՝ յաջմէ և յահեկէ զգուշացողներ ունենալով, անփորձ, անօտան օտք դրինք աջ ափի վերայ. մտանք փօշտային իջևանն, ճանապարհային դղեստներ հազանք, ուղի օրողներին հրաժեշտի օղջոյն կարգացինք և արդէն պատրաստի կառքի մէջ տեղաւորուեցանք: Ո՛վ ուղևորութիւն արած է, գիտէ՝ որ ամենից դժուար տանից դուրս գալն է, այնուհետև ոչ մի արգելք այնքան չէ ճնշում՝ մարդու. ժամ առ ժամ յառաջանում է, որքան և դանդաղ քայլերով լինի, և նպատակին մերձենում: Սակայն ինձ համար ոչ ծովային, ոչ երկաթուղիով և ոչ հասարակ փօշտայով գնացքները չունին իրենց ուշագրաւ տպաւորութիւն, այլ տանից դուրս գալն է հանդիստ, ընթացքը դժուարին, մանաւանդ երբ ընդ երկար լինի ճանապարհն և քանի մի օրեր տևէ:

Չգիտեմ, ինչ տղայական միտք էր ինձ տիրել, անդադար իջևաններ համարելով, քաղաք և գիւղեր անցնելով, օր և գիշերներ հաշուելով աշխատում էի Յունվարի առաջին օրը, վաղքաջ ընդ առաւօտն, Կայսերական մայ-

րաքաղաք հասնել և ոչ մի հանգստութիւն չառած՝ եկեղեցի մտնել, սուրբ պատարագ տեսնել, զգեստաւորուիլ գոհացողական մաղթանք կատարել, դառնալ առ պանդուխտ հայազգիս և կաղանդի շնորհաւորէք խօսիլ: Ինձ յանձն եղած դպրոցական գործի յաջողութիւնն հաւատացած էի թէ կախուած է նոր տարուայ սկզբում Արքայական տոհմի համար կատարած օրհներգութենէն: Այնքան յեղյեղեցի այս թեթև կարծիք՝ մինչև արժանապատիւ ուղեկցիս սկսաւ ձանձրութիւն դառնալ այն և սուր ուրեմն զուարճութիւն: Ո՛չ Յարիցին, ոչ Իրեազի, ոչ Մոսկուայ՝ առաւել քան շոգեկառաց համար սահմանուած ժաւանակ, մնալ չկամեցանք, ոչ որի հեռագրով ձանձրութիւն տալ յանձն չափեր: Թէ և ոչ առաւօտուն, բայց ընդ երեկս 9 ժամին, Յունվարի առաջին օրը միլիոնաւոր էլեքտրական, շրացնող ճրագարանների հոսանաց տակ հասանք Պետերբուրգ, և ուղղակի Դեմուտ անունով հիւրանոցում իջևանեցանք, որոյ խուլ առանձնասենեակներին չեն կարողանում հասնել փողոցային խլացուցիչ տղաղակներ կամ կառքերի գլորգիւն:

Դ.

Հետեւեալ օրը, Յունուարի 2-ին առաւօտեան ժամը 11-ին այցելութեան են գալիս մեզ մայրաքաղաքի Հայ հոգևորականք, յայտնում են՝ որ եկեղեցւոյ դաւթում յարմարաւոր կացարաններ չկային Ձեզ համար պատրաստելու, ըստ որում եկեղեցական կառավարութեան խորհրդոյ անօրինութեամբ սենեակների տարեվճար վարձեր բարձրացած լինելով դեռ աչնան օրերից դատարկացած են նորանք և ամբողջ ձմեռ վառուած չլինելով՝ բոլորովին անյարմար են բնակութեան համար, մանաւանդ որ և վայելուչ կահաւորութիւն չկայ նոցա մէջ: Յայտնում են դարձեալ՝ որ պայծառափայլ Իշխան Աբամելիք-Լազրեմն արդէն Սրբազան Սինոդից ստացած է յանձնարարական՝ Ձեր մասին պատշաճաւոր կացարան պատրաստելու և յանձնած է խորհրդի

անդամներին կարգադրելու, իսկ նոքա տակաւին նիստ չեն ունեցած, որպէս զի մի տնօրէնութիւն արած լինէին: Թէ և մեր կողմանէ ոչինչ հարց չէր տրուում բարեկրօն քահանայից մեր վերաբերութեամբ եղածների համար պատմել, բայց ծերունի Տէր Յովհաննիսի սիրելութիւնը բարեհաճում էր մեզ օտարութեան մէջ կարեկցութիւն ցոյց տալ: Յայտնում են նոյնպէս՝ որ Սրբազան Մակար Արքեպիսկոպոսից մեզ վերայ յատուկ դրութիւն կայ Հոգևոր Կառավարութեան մէջ, բայց դրան բանալին պարօն գործավարի մօտ լինելով՝ չկարողացան բերել և յանձնել: Ուր ուրեմն երեկոյեան 10 ժամին ձեռքերնիս հասաւ այդ նամակն, որ գրուած է Դեկտեմբերի 28-ին և ունի այսպիսի բովանդակութիւն:

«Բերապատիւ Սուքիաս Եպիսկոպոսի Քրիստոսական ողջոյն: Յետ իրազեկ լինելոյ ի հեռագրոյդ զյանձնարարութենէ Սինդիին Սրբոյ Էջմիածնի, արժան դատեցաք պարութեամբս այսուիկ հաղորդել Սրբազնութեան Ձերում զինչ ինչ պարագայս կարևորս գործողութեանց Ձերոց: «Նախ ի խօսակցութիւնս Ձեր ընդ մեծաց և փոքունց, պարտիք բնաւ ամենեկին չցուցանել զդժկամակութիւն ինչ ընդ Պետական կարգադրութիւնն, այլ գուն գործեալք ողբաբական բանիւք և համոզողական խօսակցութեամբ ցուցանել թէ՛ որովհետեւ ի սղկբանէ անտի գրագրութիւնն ի մասին հոգևոր և ծխական դպրոցաց եկեղեցեաց Հայոց եղեալք են ընդ մէջ հանգուցեալ Հայրապետին և զլիաւոր պառավարութեան նախկին Փոխարքայութեան Կովկասու, պասն որոյ Սինդոն չվտահանայ միջամտել ի գործն վերապահեալ մի միայն Պատրիարք Կաթողիկոսի, այլ խնդրեալ է և այժմ ևս խնդրէ՝ թողուլ զայս խնդիր ցհաստատութիւն նորոյ Հայրապետի Երկրորդ՝ Անձինք, առ որս խնդրէք տալ զիր յանձնարարութեան, գուցէ առ երկիւղի չյօժարեացին յայտնապէս տեսաւորիլ ընդ Ձեզ. սակայն Ձեր հաւատն մեծ է և կենդանի, յայդպիսի դէպս ամենեկին մի վհատիք, այլ գործեցէք հաստատամտութեամբ և յուսով առ Աստուած: Երրորդ՝ ջանացէք նախ ընդ Իշխան

«Ռոնդուկովին տեսակցել և ապա ընդ Նախարարին Ներքին գործոց, որոյ Հոգևոր գործոց Դեպարտամենտի Դիւրեկտորն է Կնեազ Կանդակուզէն, այր բարի և խոնարհաւոր: Իսկ ընդ մերոց ազգայնոց պարտք են ի հարկէ տեսակցել և խօսակցել, ծանօթանալ և մտերմանալ: Չորրորդ՝ Եթէ դէպ լիցի քարոզել յեկեղեցւոյ, բաւոք լինի «յառաջնում նուագի ձեռնարկել ի բանն Առաքելոյն «յԱստուծոյ երկերնուք, զԹագաւորս պատուեցէք», և ի պերայ հաւատարմութեան Հայոց պարծանօք խօսելով՝ «չարունակել զբանն ըստ աստուածատուր ձրիցդ: Եւ հինգերորդ՝ դրեցի զիր յանձնարարութեան առ գերազանց Կարապետն Եղեանց, զի առաքինի և ազգասէր անձն այն «օժանդակեսցէ Ձեզ ի խորհուրդս, ի բանս և ի գործս, այլ «գեր ի վերոյ քան զամէն Աստուած է՝ որոյ օժանդակութեան, օգկանութեան և հովանաւորութեան յանձն «արարեալ զՁեզ և զյաջողութիւն գործոյդ՝ մնամք ազօթարար»:

Յունուար ամսոյ 3-ին սկսանք այցելութիւններ, տեսնուեցանք Պայծառափայլ Իշխան Սիմէոն Դաւթեան Արաւելիք—Լազարեանցին, Բարձր գերազանց Յովհաննէս Դաւթեան Դեկրանեանցին, Պայծառափայլ Միխայէլ Ռոզիտնովիչ Կնեազ Կանդակուզէն, գրաֆ Սպերանսկիին, որին յայանեցինք Ներքին Գործոց Նախարարից տեսակցութիւն խնդրել մեզ համար, տեսնուեցանք նախարարաց օգնական Իւան Նիկոլայեվիչ Դուրնովոյին, Անիչկինին, Վալկոնսկիին: Հետեւեալ օրն, վաղքաջ ընդ առաւօտ Կնեազ Կանդակուզէն այցելեց մեզ և ասաց, Նախարարը հիւանդութեան պատճառով Ձեզ չէ կարող ընդունել: Այս ժամանակ ծանուցինք Նորին Պայծառափայլութեան՝ որ սրբազան Սինդի յանձնարարութեամբ եկած լինելով՝ Նորին Վսեմութեան անուամբ ծրար ունինք. պէտք է տեսակցենք և յանձնենք: Նա պատշաճ տեսաւ այցելութեան գնալ Նախարարին ծրարը ձեռքի ունենալով՝ եթէ փոքր ինչ կազդուրուած կլինի և կընդունի, բարի. իսկ եթէ ոչ՝ գրութեան պահարանը հանդերձ այցատուածով կարելի է թողնել

սենեկապետի մօտ և խնդրել յանձնելու ում պէտք էր։ Այցելուի դուրս գնալուց անմիջապէս յետոյ՝ փութացինք Ներքին Գործոց Նախարարի տուն. բարապանք ընդունեցին նախասենեակ, յայտնեցին մեր գալտեան համար, պատասխան բերին հիւանդ է, չէ կարող ընդունել. թողինք այն տեղ Սինոզի գրութիւն մեր այցատուածի հետ և վերագարձանք։ Սոյն օրն մեք այցելութիւն տուինք մերազգի պարոններին՝ Կերականց Կարապետ Յարութիւնեան Եղեանցին, Մեծարգոյ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցին, Պրաֆեսոր Քերովբէ Տէր Պետրոսեան Պատկանեանցին, Լեոնիդէս Մազերովին և այլոց։ Սորա միւս օրն էր կարծեմ, գնացինք Պետրոս-Պողոս ամրոցն և ջերմեռանդագին յարգանաց հաւաստեօք դրինք ծաղկեայ պսակ Նահատակ Թագաւորի դամբարանի վերայ, մտովի յիշատակելով աշխարհի որդւոց սխրագործ բարերարների երախտեացն ի տրիտուր չափած վարձատրութիւն և բերանով կարգալ համառօտ հոգեհանգստեան արարողութիւն, որոյ մասին Նովոստի լրագիր յետագայ տողերս տպագրեց իւր Ծ-րդ համարումն։ «Հաղորդում են մեզ, որ Յունուարի 2-ին ժամանեց մայրաքաղաքս, ըստ յանձնարարութեան «Լուսաւորչական Հայոց սուրբ Էջմիածնի Սինոզին Աստրա-ւխանայ վիճակի Հայոց Կառավարիչ Սրբազան Սուքիաս Եպիսկոպոսն նոյն թեմի վիճակային Կոնսիստորիայի անադամ Մելքիսեդեկ քահանայ Քալանթարեանցի ուղեկցութեամբ։ Երեկեան օրը, Յունուարի 5-ին սրբազան «Հովուապետն իւր պաշտանակցի հետ՝ ամենահպատակօրէն «հաւատարմութեան և խորին երախտագիտութեան զգացմունքներով լցուած առ Նահատակ Սրբայի յիշատակը, դրին արուեստական ծաղիկներով հիւսուած մի շքեղ պսակ Ազատարար Թագաւորի և Հայաստանեայց եկեղեցւոյ յատկական Խնամակալի գերեզմանի վերայ, և ձուռնկ խոնարհելով իրենց անմոռաց Բարերարի շիրմին «յառաջ՝ իւրեանց ջերմեռանդ աղօթքն, ըստ ծիսի հայ-րենի եկեղեցւոյ, վերառաքեցին առ Աստուած՝ ի լոյս երեւոյս հանգուցանել յաւերժացեալ Սրբայի սիրելի հոգին»։

Ինչպէս սրբազան Սինոզի պատուիրանագրութենէն և Մակար Սրբազան Արքեպիսկոպոսի հրահանգիչ թղթէն կտեսնուին՝ մեք պարտաւորուած էինք նախապէս ներկայանալ Կովկասեան Կառավարչապետ Իշխան Դանդուկով-Կորսակովին, նոյնպիսի պարտականութիւն դրաւ մեզ վերայ և Նորին Կերականցութիւն Կարապետ Եղեանց։ Փութացինք Նորին Պայծառափայլութեան կացարան, բայց նա բացակայած էր իւր կալուածք, այս պատճառաւ այցելեցինք նորա գլխաւոր կառավարութեան կառավարիչ գեներալ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Շեպելեվին, սորան չկարողանալով պատահել՝ տանը չգտնուելուն առթիւ, վերագարձանք մեր հանգիստ և մի քանի օր սպասեցինք մինչև Ծննդեան և Մկրտութեան տօնի հանդիսագրութիւնը տւարտուին, և ապա շարունակենք մեր այցելութիւնք։ Եթէ չենք սխալում՝ այս հանդիսական տօներից յետոյ էին՝ որ իւրեանց առանձին գործերով յայտնուեցան Պետերբուրգում՝ գերազնիւ պարոնայք՝ Կէսրգ Եւանգուլեանց, Յովհաննէս Ստեփաննոսեան Խատիսեանց և Միքայէլ Սարգսեան Շահպարտեանց, որոնք թէ փոխադարձ տեսակցութեամբ սիրաշահում էին մեր պանդխտութիւն, և թէ հետաքրքրութեամբ ոգևորում էին մեզ երբէք չվհատիլ, ամենակերպ ձեռքէ գալիք աշխատութիւնը յանձն առնել, շնայելով՝ որ ամէն ոք՝ որոց կարողացել էինք հանդիպել՝ անհնարին էր համարած մեր խնդրանաց յարգութիւն գտնելն։

Մկրտութեան տօնի շնորհաւորութեամբ՝ երբ գեներալ Շեպելեւ կգտնուի լուսաւորութեան Նախարարի տան, մեր մասին խօսք կբացուի և ինք դժուարութիւն կյայտնէ մեր հետ տեսակցելուն՝ թարգման չունենալու պատճառաւ. իսկ այցելութիւն չվերագարձենն անքաղաքավարութիւն կհամարի. այս վարանումէն նորան կազատէ բարձր գերականց Դելիանով՝ ասելով՝ որ մեք ունինք գերարժան թարգման։ Տակաւին նա մեզ այցելութիւն չտուած Յունուարի 9-ին արժանապատիւ Տէր Մելքիսեդեկ քահանային ուղարկեցինք նորա մօտ իմանալու՝ երբ ժամա-

նակ կունենայ մեզ ընդունելու և երբ կվերագառնայ Իշխան Կառավարչապետ: Սիրալիր ընդունելութիւն գտնելով քահանայն՝ պատասխան բերաւ, որ վաղիւն ուղիղ ժամ 10-ին առաւօտուն մեզ կսպասէ տանը և Իշխանի վերագարձի մասին կխօսի մեզ հետ տեսակցութեան ժամանակ: Միւս օրն, որոշուած միջոցին ներկայացանք Նորին Գերագանցութեան, որոյ հետ ունեցանք ընդ երկար տեսակցութիւն: Բարեկամք արդէն մեզ զգուշացրած էին՝ որքան կարելին է նորա հետ խօսիլ համարձակ և ամենայն նախանկատ կարծիքներ չթագուցանելով նորահաստատ դքսութեան հրահանգի գործադրութեան գծուարութեանց մասին: Նախ և առաջ խօսեցանք սրբազան Սինոդի գծուարին կացութեան համար ապագայ Հայրապետին տալիք պատասխանի մասին, ըստ որում ուսումնարանական կառավարութեան գործ և հրահանգ ի սկզբանէ անտի և այսր գտնուում է Հայոց Կաթողիկոսաց ձեռքում, և ոչ ոք չունի վստահութիւն մտնել նոցա իրաւանց սահմանի մէջ: Ապա խօսեցանք այն անհրժեշտ վտանգների մասին՝ որոնք այդ հրահանգի գործադրութենէն պէտք էր յառաջանային. ըստ որում պարտ ու պատշաճ դպրոցներ չլինելով բոլոր թեմական քաղաքներում, եկեղեցական Իշխանութեան միակ յոյսն է իւր միջնակարգ, դաւառային յաջորդական քաղաքներում գտնուած դպրոցներով եկեղեցական պաշտօնեաներ պատրաստել: Այլ որովհետև նոր օրէնսդրութիւն այդ ուսումնարաններ, իբրև ժողովրդական հաստատութիւնք, արքունի տեսչաց կառավարութեան է յանձնում, որով զրկուում է հոգևոր Տեսչութիւն իւր պարտք առ ազգ և եկեղեցի կատարելէն, ուրեմն կմնայ նորան միայն ամենախոնարհ խնդիր, յետաձգել այս հրահանգի կատարումն ցհաստատութիւն ազգընտիր Հայրապետի, որոյ իրաւունք են միայն դառնալ առ իւր ընտրող ժողովուրդ հնար և գումար պահանջելու Ռուսաստանում գտնուած ամէն մի Հայոց վիճակում Սեմինարիայ բանալու և դորանց կանոնադրութիւնք կազմելու և առաջարկելու ի հաստատութիւն Թագաւոր Կայսեր, որպիսի գոր-

ծողութեանց Սինոդ չէ կարող ձեռնաձիգ լինել:

Նորին Գերագանցութիւն առաջին առարկութեան պատասխանելով՝ դպրոցական կառավարութիւն Սինոդի վարչական շրջանակէն դուրս չհամարեց, որովհետև այն սոսկ կրօնական խնդիր չէ, որ Հայաստանեայց եկեղեցւոյ Քահանայապետի եղական տնօրէնութեան պատկանի, և ոչ մի ժամանակ Կաթողիկոսի մահուանէ յետոյ ուսումնարանական ընթացք չեն կասած մինչև նորոյն ընտրութիւն, մանաւանդ որ Սինոդ ոմանց դպրոցաց հոգաբարձութիւնք հաստատած ևս է: Առ երկրորդ առարկութիւն ասաց, որ քաղաքական իշխանութիւն միահաւասար պարտք ունի առ իւր ենթադրուած բոլոր ազգութիւնք ժամանակայամար կրթութիւն տալով նոցա և հաւատարիմ հպատակութեան զգացմունք զարթուցանելով նոցա սրտից մէջ: Հայոց ժողովուրդ այլ հպատակ հասարակութիւններէն դուրս չէր կարող առանձնութիւն կազմել իւր դատարարկութիւն ինք մատակարարելով: Այդ հրամանին ենթարկուած է նոյն իսկ ուս ժողովրդեան մտաւոր հրահանգութեան գործ:

Միմեանց պատճառաբերութեանց փոփոխակի պատասխանելով հուսկ ուրեմն խօսք այն տեղ հասաւ, որ ասացի. Ձերդ Գերագանցութիւն անտարակոյս քաջազէտ է և մերձաւորապէս վերահասու Կովկասեան ուսումնական շրջանի տարեկան հաշուէտուութեանց, նոցա մէջ օրքան և մթին գոյներով նկարագրուած լինին հայկական ծխական վարժարանաց կրթութեան գործում յառաջ բերած արդիւնք, սակայն և այնպէս բացերևակի կխոստովանին ամէն միջնակարգ ուսումնական հաստատութեանց վարչութիւնք թէ՛ ուսման և վարուց համար բաշխուած բարձր թուանշաններ միշտ բաժին կլինին այն հայազգի ուսանողաց, որոնք ազգային ծխական վարժարաններէն օժանցուած են ի դիմնադիայ: Կը խոստովանին նոյնպէս՝ որ ներքին կարգապահութիւն, յիշխանաւորաց ակնածութիւն, առ բարերարս երախտագիտութիւն, ի նիստ ու կացս համեստութիւն՝ առաւելապէս Հայ հոգևորակա-

նութեան հովանաւորութեան ներքոյ կրթուած և տղայութիւննին անցուցած աշակերտաց կպատկանին: Ուրեմն՝ Հայոց եկեղեցական տեսչութիւն որքան արթնն է իւր ուսուցանելու Յիսուսաւանդ իրաւունք յառաջին դարուց քրիստոնէութեան ցայսօր անվթար պահպանելու մասին, նոյնքան բարեխիղճ է և երկրաւոր Թագաւորին հասանելի հաւատարիմ հպատակութեան ներշնչութիւնն աւանդելուն մէջ: Թողունք մէկ կողմ ընկերհաշտական կենցաղավարութեան համար ունեցած ամենօրէական խիստ հսկողութիւնք, մանկանց վերայ ի դպրոցս, զարգացելոց վերայ յեկեղեցիս: Այս իսկ է գլխաւոր առիթն, որ Ռուսաց օրհնաբանեալ Պետութեան ինքնակալք՝ յօրէ անտի էջմիածնի Մայր Աթոռոյ նոցա հովանաւորութեան ներքոյ անկանելոյն, ազատ ի ձեռս Հայրապետաց թողած են իւր եկեղեցւոյ սրբւոց հրահանգութիւնն: Ի թիւս այդ Կայսերաց և յաւերժական օրհնաբանութեան արժանի նահատակ Աղէքսանդր երկրորդ Վեհապետն դեռ 1874 թուականին իւր հրովարտակաւ յանուն Նախարարի Ներքին Գործոց ընդ մէջ հանգուցեալ Գէորգ Կաթողիկոսի և Կովկասեան Փոխարքայութեան տեղի ունեցած տարածայնութիւնք, ժողովրդական ուսումնարանաց վերատեսչաց հսկողութեան վերաբերութեամբ Հայոց ուսումնարանաց մէջ—վերացոյց. բոլորովին ի ձեռս Հոգևոր Իշխանութեան յանձնելով կրթութիւնք, ինչպէս և միջին դարերում անգամ եղած են:

Դուք հոգևոր վարժարաններ մերձաւոր հսկողութիւնից մեկուսացնելով՝ ասաց Նորին Գերազանցութիւն, առաւել կասկածանք էք յարուցանում Ձեր ընթացից վերայ: Օրէնք միշտ փոփոխութեան ենթակայ է, 1874 թուականի ժողովրդական տեսչաց համար եղած հսկողութեան պարտուց բացատրութիւն է անցեալ տարուան Փետրուարի 16-ին Բարձրագոյն հաճութեամբ տրուած հրահանգն, զոր եկեղեցական վարչութիւն պարտի սրբութեամբ կատարել:

«Եկեղեցական ուսումնարաններ, ասացինք, երբէք չենք

ցանկացած, որ ամենակերպ հսկողութիւններէ դուրս լինին. մեր պարծանքն է հաւատարիմ հպատակութիւն և համարձակ քրիստոնէական վարդապետութիւն ուսուցանելն. «Աստուծոյ երկրպագութիւն, Թագաւորի պատուադրութիւն», սակայն եթէ կան անձնաւորութիւնք՝ որոնք արգելք եղած են հսկողութեան, արդարութիւն կպահանջէ պատժել այն մասնաւորը և ոչ թէ նոցա յանցանաց պատիժ հասարակութեան վերայ տարածել. Այո, օրէնք միշտ փոփոխական են և այն այսպիսի ժամանակ. բայց Հոգևոր Տեսչութեան համար վիշտ է, ինչու 1836 թուականի օրէնք, Հայաստանեայց եկեղեցւոյն վարչութեան վերաբերութեամբ իւր շատ փոփոխութեան կարօտ թերութիւններով ցայսօր անյեղափոխ կմնայ. իսկ 1874 տարւոյն ծրագիր, առաւել մերձ ժամանակի գործ, նորոգութեան կկարօտի: Որովհետև հայկական դպրոցաց մէջ գործող ուսուցչաց և ուսանողաց ձեռք չէ տեսնուած, և հաւատով ենք շտեմնուի ևս, ոչ պայթող ուսմբ, ոչ վնասակար քաղաքական վարդապետութիւնք և ոչ արդար օրինաց դիմադրութիւնք, այս պատճառաւ ևս շատ դժուարին է համարուում դաստիարակութեան գործի Հոգևոր Վարչութեան ձեռքից աւնուելն միջին դպրոցաց մէջ»:

Ամբողջ ժամ տեւեց մեր վիճաբանական տեսակցութիւն. քաղաքավարութեան պարտք զմեզ հարկադրեց այս առաջին անգամ բաւականանալ եղած խօսակցութեամբ. ոտք ելանք, խնդրեցինք Նորին բարեսրտութիւն առ Իշխան Կառավարչապետ այս գործոց մասին միջնորդ լինել և մեզ տեսակցութեան ժամանակ որոշել: Ասաց՝ Նորին Պայծառափայլութիւն ամօրս 13-ին իւր կալուածքից քաղաքս կվերադառնայ, Դուք ուղղակի երկուշաբթի օր, Յունուարի 14-ին առաւօտեան ժամ 11-ին, եկէք նորա կացարանն, սենեկապետ աստիճանաւոր Ձեզ կընդունի և կներկայացնէ. միայն խնդրեմ, առանց ակնածութեան, միևնոյն կերպով խօսիք և Իշխան Կառավարչապետի մօտ:

Վերադիր խօսակցութիւններ՝ իբրև հաւատարիմ հաշուատու, մի առ մի պատմեցինք մերազգի պարոններին,

մանաւանդ Գերազանց Եղեանցին, որք խրախուսեցին չկասիլ այդ ուղիղ ճանապարհից: Հասաւ ժամադիր օրն և բազդաւորութիւն ունեցանք ներկայանալ Պայծառափայլ Իշխան Կորսակով-Դոնդուկովին՝ որոյ մօտ էր և պարօն Շեպելա: Առանց թողոյ մեզ առաջարկութիւնք առնել՝ սփորական ընդունելութեան ողջունից յետոյ, սկսաւ սպառնազին եղանակաւ խօսիլ. «Էջմիածնի Սինոդի դիտաւորութիւնն ինչ է, որ Պետական հրաման չէ կատարում: Քանիցս անգամ ես առաջադրեցի կատարել՝ անտի պատճառաբանութիւններ մէջ բերելով յետաձգեց. իսկ այժմս վեր է առել և Ձեզ՝ արտաքոյ կարգի դեօսպանութեամբ, Նախարարի և Կայսեր մօտ է ուղարկել: Միթէ կարծուում է, որ Կայսերական հրամաններ չկատարելն իրաւունք են Հայոց Հոգևոր Տեսչութեան համար: Միթէ ամբողջ Հայ ժողովրդեան դաստիարակութեան գործ պէտք է գտնուի եկեղեցական վարչութեան ձեռք, ինչ է ուրեմն քաղաքական Իշխանութեան կողմն և պարտք իւր հպատակաց վերաբերութեամբ: Եկեղեցւոյ համար պաշտօնեայք պատրաստելու բաւական են էջմիածնի ձեմարանն և բոլոր վիճակներում գտնուած դպրոցներն, իսկ լեզու և կրօն ուսուցանելու համար Հայոց մանկանց՝ գեռ շատ են երկգասեան և մի գասեան վարժարաններն: Դուք առաւել էք կամենում արտօնաւորել դպրոցական գործում՝ քան զնոյն իսկ ուղղափառ հոգևորականութիւն: Ասացէք խընդրեմ, ինչ իրաւունքով Հայոց եկեղեցական Իշխանութիւն արքունի միջնակարգ ուսումնարաններին հաւասար դասընթացքով օրիորդական դպրոցներ է պահպանում, վանուհի և կուսանք է կամենում պատրաստել նորանցից: Այս բաւական չէ, այլ Հոգևոր Վարչութիւն կամենում է՝ որ իւր ուսումնական շրջանն բոլորովիմբ անթափանցելի մնայ լուսաւորութեան Նախարարի վերահայեցող ատիճանաւորաց և քաղաքական հսկող պաշտօնատարաց համար: Այսպիսի կամայականութիւնները վերջ ի վերջոյ բանն այն տեղը կհասցնեն, որ Կառավարութիւնը բոլոր Հոգևոր դպրոցներ կփակէ, ինչ պէտք է անէք այն ժա-

մանակ: Գիտեմ, պէտք է Կոստանդնուպոլսոյ ազգային լրագիրներին մէջ տպագրուին բողոքներ, տպագրուին և քանի մի եւրօպական քաղաքների պարբերական թերթերում տրառուջներ: Թերևս գտնուին և Ռուսաստանի մէջ խմբագրութիւններ, որոնք յանձն առնեն հիւրընկալել իւրեանց հրատարակութեանց մէջ քանի մի յօդուածներ այդ մասին: Սակայն ինչ օգուտ դորանցից, այդ առ առաւելն կտուէ քանի մի ամիս, այնուհետև Հայ ժողովուրդ՝ որ այնքան ուսման և դաստիարակութեան պէտք իւր որդւոց համար զգացած է, գունդագունդ պէտք է դիմէ քաղաքական Իշխանութեան և թախանձէ՝ իւր հաշուով ուսումնարաններ բանալ և ժողովրդական Արքունի տեսուչների հսկողութեան ներքոյ կառավարել: Իսկ Հոգևոր Իշխանութիւն պէտք է կորցնէ իւր այն վսեմ նշանակութիւնը ժողովրդեան աչքում՝ զորս ունէր կրթելով նորա երկսեռի դաւակունքը»:

«Ձերդ Պայծառափայլութիւն, ասացինք, սրբազան Սինոդ ուրիշ ոչ այլ ինչ դիտումն չունի Կայսերական հաւանութեամբ հրատարակուած հրահանգի գործադրութիւն ցայս վայր յետաձգելով՝ քան զայն զպերաններ, զորս կրկնած է առ Ձեզ և այժմս մեղնով կթախանձէ, այսինքն ապագայ պատասխանատուութիւնից ազատել իւր անգամներ, ըստ որում Կաթողիկոսին վերապահուած է ուսումնարանաց կառավարութիւն: Զիս ուղարկած է Հոգևոր Իշխանութիւն յատկապէս Ձեր Պայծառափայլութեան մօտ՝ գիտենալով որ Տփլիս չէք, այլ մայրաքաղաքումս, հարկադրուեցայ այստեղ գալ: Եթէ Դուք շնորհ կանէք քանիցս առ Ձեզ կրկնուած ինդիրն առաջարկել ի բարեհաճ տնօրէնութիւն Նախարարին՝ ինչպէս Սինոդի սրբազան անդամոց սուրբ զգացմունքն է և խորին հաւատարիմ հպատակութեան մեծարանք, յոյս ունիմ որ կյարգուի Ձեր միջնորդութիւն և Հայ հոգևորականութիւն իւր ներկայ անելանելի դրութիւնից կազատուի: Հայոց Հոգևոր Իշխանութիւն երբէք ամբարշտած չէ օրինաւոր իշխանութեանց, անգամ և լինին նորա հեթանոս, կանոնաւոր

հրամաններն անգործ թողուլ. այդ իւր բարձր կոչման և նուիրական պարտականութեանց՝ որ է հնազանդութիւն, հիմնովին հակառակ է: Հայազգի հասարակութեան կըրթութեան գործ ի սկզբանէ անտի քրիստոնէութեան ցայսօր բացառապէս Հայ հոգևորականութեան ձեռքն է եղած, մինչև իսկ իւր քաղաքական անկախութիւն ունեցած ժամանակներ: Սորանց վկայք են մեր ամբողջ գրականութիւն՝ որ կրօնական-բարոյական ուղղութիւն ունի. վկայք են աստուածահաճոյ վանական հաստատութիւնք, որոնք համաճամայն ուսումնաւարներ են եղած. վկայք են և վաղադարեանի աւուրց հետէ և այսր անկապտելի Հայոց կաթողիկոսաց ձեռք եղած ամեն իշխող ազգերէ տրուած արածութիւնք: Հայոց սուրբ եկեղեցին ուրիշ նպատակ չունի ժողովրդեան կրթութեան գործում, քան որ ունի նոյն ինքն կառավարութիւն, ինչպէս լիովին խօսած եմ նորին գերազանցութեան, (ակնարկելով Շիպելին): Արդարև, էջմիածնի ձեմարան և Սեմիարիաներ բաւական կլինին եկեղեցականներ պատրաստելու: Բայց ցաւալին այն է՝ որ ամբողջ Ռուսաստանի մէջ երկու Սեմիարիայ միայն կայ. Տիբիսում ներսիսեան դպրանոց իսկ նոր նախիջևանում Բեսսարաբիոյ վիճակի Սեմիարիան, որ նորերս բացուած լինելով՝ դեռ կազմակերպուած չէ. իսկ սոքա երկուսն հազարաւոր հոգևորականներ հասուցանել ազգի ներկայ պահանջին համաձայն կարող չեն: Հայոց հոգևորականութիւն ոչ միայն ուղղափառ եկեղեցականութենէն առաւել պահանջ ունի՝ անկախ հոգևոր վարժարաններ ունենալու գործում, այլ շատ ուրախ կլինի՝ եթէ նորանց շնորհուած արտօնութիւն տարածուի և իւր դպրոցաց վերայ: Արդարև, վանուհիք և կուսանք չէ պատրաստում հոգևոր իշխանութիւնք, բայց միանգամ երկնաւոր Վարդապետից և երկրաւոր իշխանաւորներից ուսուցանելու իրաւասութիւն ստանալով՝ չէր կարող կըրթութեան և դաստիարակութեան շնորհաց սեղան միմիայն աղայոց առաջ բանալ և աղջկանց զրկել. այս պատճառաւ է, որ օրիորդական դպրոցներ ևս բացած է: Ժո-

ղովրդեան կրթութեան գործում միահաւասար նշանակութիւն ունին հօր և մօր ազդեցութիւնք իւրեանց զաւակաց վերայ, միակողմանի կլինի եկեղեցական Տեսչութեան հաւատարիմ հպատակներ և քաղաքացիներ պատրաստելու աշխատութիւն, եթէ աղջկանց ուսում տալուց հրաժարուի: Իրաւունք՝ զոր եկեղեցական իշխանութիւնն ունեցած է ութերորդ դարէն ի վեր, հասուցանելով անգամ կին հեղինակներ, եկեղեցական սրտաշարժ բանաստեղծական երգերի և ընդօրինակողներ Աստուածաշունչ սրբազան մատենից: Երբէք և երբէք հսկողութիւնից չէ խորշած Հայոց դպրոցական վարչութիւն և ամէն ժամանակ պահանջուած հաշիւներ ճշտութեամբ մատուցուած են հարկաւոր իշխանութեանց: Եթէ մասնաւոր զանցառութիւնք կան, նոքա ընդհանուր կերպարանք ստանալ չեն կարող, այլ պատշաճ միջոցներով կուղղուին: Ի վերջոյ՝ Հայոց եկեղեցական իշխանութեան բարոյական նշանակութիւն ժողովրդեան մօտ պակասեցնելով՝ քաղաքական իշխանութիւնն առաւել վաստակ չէ կարող ունենալ, ըստ որում նոյն է ազդեցութիւնն՝ բարոյական լինի այն կամ նիւթական. և սորա պտուղ ու արդիւնք սկսում է տեսնել ֆրանսիական Հասարակապետութիւնն:

Ամենայն առարկութեանց վախճան տրուեցաւ, երբ խնդրեցինք նորին Պայծառափայլութիւնից միջնորդել ուր հարկն է Ռուսաց հոգևորականութեան տրուած ուսումնարանական հրահանգը տարածուի և Հայոց վարժարանաց վերայ: Թղթով դիմել առաջարկեց մեզ և արձակուեցանք: Չմտանանք ասել, որ բոլոր խօսակցութեան միջոցին Շեպելև ներկայ գտնուելով և իւր հետ ունեցած խորհրդակցութիւնք ըստ զլիաւոր մասանց կրկնուեցան:

Ե.

Այստեղ ամենայն հարազատութեամբ մէջ բերենք մեր նամակ առ ամենապատիւ Տէր Մակար Սրբազան Արքեպիսկոպոս՝ ուղղուած ի 19 Յունուարի, ապա նոյն թիւ-

Իշխան Կառավարչապետին յանձնած գրութիւն և ի 22 նոյն ամսոյ թուահամարաւ 2 յանուն Սրբազան Սինոդին մատուցած յայտարարութիւն, որպէս զի իւրաքանչիւր որ կարող լինի զուգակշիռ կազմել մեր գործողութեան և հաշուետուութեան վերաբերութեամբ:

Սմենապատիւ Սրբազան Տէր, Որպէս հեռագրաւ արդէն ծանուցի՝ հասին ի ձեռս հեռագիր Ձեր և հրահանգիչ գրութիւն, Որքան հնար է ճգնիմ՝ չեղանել ընդ սահման յանձնարութեանց Սինոդի: Երկիցս խօսեցայ յեկեղեցւոյ, յաւուր Զորհնեաց և Անուանակոչութեան Տեառն, զգուշաւոր բանիւք: Ընդ մերաշգեաց բազմաց տեսակեցեցայ, այլ սատար գործոյն կայ գերազանց եղեանց, արգարև այր խոհական, ազգատէր և անաչառ: Պատճառաբացակայութեան Կառավարչապետին Կովկասու ի կալուածքս իւր՝ տեսակցեցայ ընդ Նախարարին լուսաւորութեան և իւրոց օգնականաց, ընդ Իշխան Արամելիք — Լազրեւի, ընդ Կանգակուզենի և այլոց, ամենեքին սորա անհնարին համարեցան զյետաձգութիւն գործադրութեան հրահանգելն: Ի 14 ամսոյս տեսակցեցայ ընդ Իշխան Կորսակով — «Իննգուկովի՝ որ յետ ընդ երկար բանից խօստացաւ միջնորդել առ Նախարար Ներքին գործոց վասն տարածանեալոյ ի վերայ հոգեորականութեան Հայոց զիրաւունս՝ «տուեալս եկեղեցականաց Ռուսաց ի մասն ազատ վարչութեան ծխական վարժարանաց, ի մի և նոյն ժամանակ ի անհնարին ճանաչելով զգործ յետաձգութեան Կայսերական հրահանգացն կատարման: Այսօր ունիմ յայս ամիսս ներկայացուցանել նորին Պայժառափայլութեան զլինդրագիր, տեսցուք զինչ յաշողեսցեն Երկինք»:

Ողորմա՛ծ Տէր,

ԹԵՒԱՆ ԱՂԷԲԱՆՈՐ ՄԻՍԱՅԵԼՈՎԻՅ:

«Հայոց Կրիդորեան Սինոդն Էջմիածնի եզ յիմ վերայ զպարտականութիւն միջնորդել առաջի Բարձրագոյն»

«Կառավարութեան յաղագս տնօրէնութեան, որպէս զի ճնորդ կանոնադրութիւնք Եկեղեցական — Հայոց ծխական զպարոցաց գործադրեցին զինի ընտրութեան Մայրադոյն «Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց և ստանձնելոյ ճնորին Սրբութեան զկատարումն պաշտաման: Քանզի ըստ «սովորութեան և աւանդութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ, դարաւոր ժամանակօք սրբագործելոց, ձեռնարկել թի հոգեւոր և ի բարոյական լուսաւորութիւն հօտին՝ սեփական է Կրիդոյն եկեղեցւոյ, որպէս քաջայայտ է այդ Կառավարութեան ի գրագրութենէ ամացն անցելոց՝ ըստ այսմ առարկայի:

«Սինոզն Էջմիածնի, զգածեալ ամենահաւատարիմ «հպատակութեան զգացմամբ, վարկաւ ինքեան ի պարտականութիւն ի կիր արկանել զայս միջնորդութիւն՝ գորով այսիմ համոզման, զի Սմենաբարեպաշտ Թադաւոր Կայսւրն, Բարձր Հովանաւորն Հայաստանեայց եկեղեցւոյ, «նչ ունի պահանջել ի պաշտօնէից նորին զպարտազանցութիւն առաջի սուրբ եկեղեցւոյ և զսեփականումն ինքեանց «նչ պատկանեալ, ըստ եկեղեցական կանոնաց, իրաւասութեան: Յետաձգութիւն գործադրութեան վերայիշեալ կանոնադրութեան տեսլոց է «նչ ընդ երկար, որովհետեւ ընտրութիւն Մայրադոյն Պատրիարգի լինելոց է զինի քանի «մի ամսոց, և «նչ կարէ ունիլ զն և իցէ գործնական անյարձարութիւնս: քանզի տարին ուսումնական արդէն մօտի «յաւարտ և ատիճանաւորք ուսումնական Տեսչութեան «անարգել յայց եղանն մերոց զպարոցաց և ընտելանան, «որպէս ընդ կարգաց եղելոց ի նոսին, նոյնպէս և ընդ «ուսանողացն յառաջադիմութեան:

«Ի բարեհաճ ուշադրութեան յայս միջնորդութիւն «Եկեղեցին Հայաստանեայց և բոլոր բազմաթիւ մանկունք ճնորին, բնակեալք ի Ռուսիայ և յարտասահմանի, տեսանել ունին զնոր իմն առհաւատչեայ Կայսերականն առ «նոսս սղորմութեան»:

«Եթէ ի կազմելն զյիշեալ կանոնադրութիւնն, հարցեալ լինէին կարծիք կամ գննէ, բացատրութիւն Սինո»

զրի ըստ տարակուսանացն, որոց հետեանք են կանոնա-  
 գրութիւնքն այնորիկ, ուրեմն Սինոդն կարէր ունիլ թե-  
 րևս զմիջոց զառաջս առնելոյ ներկայ դժուարութեանց  
 էջիւրումն ժամանակի և առաջարկել զհաւաստիս յայնմ՝  
 թէ Հոգևորականութիւնն Հայոց կայ որպէս զդէտ ու-  
 սումնարանաց իւրոց. անքուն աչօք պահպանէ զնոսա ի  
 աներջնչմանէ ժամանակակից մոլար վարդապետութեանց  
 և ջան ի դործ արկանէ ի տարածումն գիտութեան Պե-  
 տական լեզուի, համաձայն ձգտողութեան բնակչաց և  
 ըստ չափու տեղական միջոցաց, և թէ՛ պակասումն ազ-  
 գեցութեան նորին ի վերայ դպրոցի դիւրացուցէ զմուտ  
 զի նոյն այնպիսի ազգեցութեանց, որք միօրինակ թշնամի  
 հանդիսանան Եկեղեցական և Պետական շահուց, անան-  
 զըրպետ յինքեանս շողկապելոց և միշտ համամիտ և հա-  
 մակարիք երևելոց միմեանց».

Եւ մասին արարեալն ինձ ցուցման, յակն յանդիման  
 բացատրութեան, թէ Հոգևոր Վարչութիւնն Հայոց ձգտի  
 սեփականել ինքեան զիրաւունս, որովք ոչ շահի անգամ  
 և Ուղղափառ Եկեղեցին, պարտ անձինս համարիմ բա-  
 ցատրել թէ՛ ի բաղդատելն զկանոնս յաղագս Հոգևոր—  
 Ծխական դպրոցաց Հայոց ընդ Բարձրագոյն հաստատե-  
 ցելոց, ի 13 Յունիսի անցելոյ 1884 ամի, կանոնաց վասն  
 «Հոգևոր—Ծխական դպրոցաց Ուղղափառաց, արտայայ-  
 տի, զի Եկեղեցին Հայաստանեայց, ունելով զնոյն կոչումն  
 և ձգտելով ի նոյն Բարձրագոյն խնդիր, գտանի ըստ բա-  
 ւականին յանձուկ դրութեան ի կատարումն նպատակի,  
 ցուցելոյ յերկնաւոր վարդապետէն իւրմէ, այն ինչ կա-  
 նոնադրութիւնքն վասն Ծխական դպրոցաց Ուղղափառաց  
 լիամասն համաձայն գտանին ընդ կարգաց և աւանդու-  
 թեանց Արևելեան Եկեղեցւոյ, յորում սակի գտանի և  
 Եկեղեցին Հայաստանեայց, և թէ կանոնադրութիւնն վասն  
 դպրոցացն Հայոց տեսանի այնու չափով և յայնմ՝ իսկա-  
 պէս անհամաձայն ընդ կանոնաց Եկեղեցւոյ, որով չափով և  
 էյորս նորին անհամաձայն գտանին ընդ կանոնաց, Բարձրա-  
 գոյն հաստատելոց, վասն ծխական դպրոցաց Ուղղափառաց».

«Ըստ իմուս կարծեաց, կիրառութիւն այսոցիկ կանո-  
 նաց և ի ծխական դպրոցան Հայոց առաւել համապա-  
 տասխան գտանէր թերևս, կարեաց և պիտոյից Հայաս-  
 տանեայց Եկեղեցւոյ և անդորրէր զմիտս Հայոց, ամբո-  
 լսելոց այսօր մերժմամբ իրաւանց Եկեղեցւոյ իւրեանց,  
 զկանոնս որոյ նորա պահպանեցին յընթացս դարուց գնով  
 ամարտիրոսական անձնագոհութեան. մինչև Տէր Աստուած  
 չլուաւ աղօթից նոցա և արժանի արար բաղդի՝ լինիլ  
 զքաղաքացի Բրիտանոնեայ Պետութեան, վասն ծաղկման և  
 բարգաւաճութեան որպիսւոյն աղօթեն անդադար և  
 զի պաշտպանութիւն որոյ չինային ոչ զգոյս և ոչ զկեանս».

«Ճշմարիտ յարգանք և կատարեալ անձնանուիրու-  
 թեամբ ունիմ շնորհ լինել՝ Ձերդ Պայծառափայլութեան  
 հեղափոխ աղօթարար առ Աստուած».

Սրբազան Սինոդդ գրութեամբ կառավարչական Մա-  
 սին իւրոյ՝ յ3 Դեկտեմբերի անցեալ 1884 ամի թուահա-  
 մարաւ 3342, եդ յիմ վերայ զսուրբ պարտականութիւն՝  
 պիտեալ հասանել ի Սանկտպետերբուրգ և տեսաւորեալ  
 ընդ կառավարչապետին Կովկասու՝ Իշխան Կորսակով—  
 Երոզուկովի, հայցել զմիջնորդութիւն նորին առ Տէր Նա-  
 լիարար Ներքին գործոց, կամ առ Ամենաողորմած Կայսրն  
 համայն Ռուսիոյ՝ յաղագս թէ ոչ իսպառ դադարեցուցա-  
 նելոյ, գէթ յետաձգելոյ ցընտրութիւն և հաստատութիւն  
 Վիթոզիկոսի Ազգիս Հայոց զգործադրութիւն հրահան-  
 քաց վարչութեան ազգային դպրոցաց մերոց, ի հակառակ  
 զդէպս չմիջամտելոյ նորին Պայծառափայլութեան յայս  
 «գործ» յանձն լինէր ինձ ներկայանալ Տեառն Նախարա-  
 րին Ներքին գործոց, անգամ և Օգոստոսափառ Թագաւո-  
 րին, և թախանձելոյ զնոյն շնորհ».

Փութացեալ ի կատարումն վերոյգրեալ վսեմ յանձ-  
 նարարութեան՝ ի 26 անցեալ Դեկտեմբերի մեկնեցայ  
 էյաստրախանայ և ի 1-ն այսր Յունուարի հասի ի Մայրա-  
 բաղաքս Տեսեալ աստանօր, զի Իշխան Կառավարչապետն  
 բացակայեալ է ի կալուածս իւր՝ օգտեցայ պատեհիւն և  
 Ելի ի տեսութիւն Նախարարի լուսաւորութեան, Օգնա-

«կանի նորին և կառավարչի դիւանատանն, մտի առ Օգ-  
 ենական Նախարարին ներքին գործոց և առ Կառավարիչ  
 «դիւանատան նորին, հասուցանելով զծրար գրութեան  
 «Ռորին առ Պայծառափայլ Կոմս Տուստոյն, տեսաւորեցայ  
 «ընդ նշանաւորս ի մերադնէից և ընդ կառավարչի Դի-  
 «ւանատան Իշխան Կորսակով-Դոնդուկովի: Սորա ամե-  
 «նեքին ընդ տեղեկանալն զպատճառէ առաքելութեանս՝  
 «օրոշակի և հասու բանիւք արարին զպատասխանի, «յան-  
 «հընարիցն է զկայսերական հրաման թողուլ երբէք անկա-  
 «տար, կամ յետաձգել ցընարութիւն և հաստատութիւն  
 «Հայրապետի Ազգիս:»

«Անցին ի վերայ աւուրք շաբաթուց երկու, վերա-  
 «գարձաւ ի քաղաք այսոր նորին Պայծառափայլութիւնն  
 «Կորսակով-Դոնդուկով, ի 14 ամսոյս ընկալեալ եղէ ի  
 «նմանէ և պատաղեալ յընդերկար խօսս բացատրութեանց  
 «և խնդրանաց՝ ուր ուրեմն առ ի ըերանոյ նորին զխոս-  
 «տունն առ ի միջնորդել առաջի Տեառն Նախարարին  
 «Ներքին Գործոց, որպէս վասն յետաձգելոյ զգործադրու-  
 «թիւն նորոց հրահանգաց, նոյնպէս և տարածանելոյ ի վե-  
 «րայ մերոց ծխական վարժարանաց զիրաւունս ամենևինք  
 «համանման արտօնութեանցն՝ շնորհեալ հոգևորականու-  
 «թեանն Ռուսաց Բարձրագոյն հաճութեամբ ի 13 Յունիսի  
 «անցեալ 1884 ամի, որ հրատարակեալն է ի հաւաքածուի  
 «օրինաց և կարգադրութեանց Կառավարութեանն ի 25  
 «Սեպտեմբերի այնք ամի ընդ համարաւ 100, Ռուսի և  
 «առանց ժամակորոյս լինելոյ ի 19 սորին մատուցի նորին  
 «Պայծառափայլութեան զնամակաձև խնդիր՝ զորոյ օրինակն  
 «ընդ այսմիկ, հանդերձ հայացին թարգմանութեամբ, շնորհ  
 «ունիմ՝ մատուցանել ի բարենկատողութիւն Տեարց Ատե-  
 «նակալաց Սրբազան Սինոդիդ:»

Մասնաւոր եղանակաւ տեղեկանալով՝ որ իշխան Կա-  
 «ռավարչապետ մեր իրեն մատուցած նամակաձև խնդրա-  
 «գիրն՝ Յունվարի 21-ին ընդ համարաւ 102, առաջարկած  
 է Լուսաւորութեան Նախարարին իւր օրոշումն տալու այն  
 մասին, նոյն ամսոյ 25-ին պաշտաւորութիւն համարեցի

պատճառաբերութիւններով յետաձգել:»  
 Երրորդ անգամ ներկայանալ նորին Բարձր Գերագանցու-  
 «թեան և թախանձագին հայցել իւր հզօր միջնորդութիւն  
 այս ազգային ամենակարևոր, ամենակենսական խնդրոյն  
 մէջ: Այս տեսակցութիւն առաւել քան զառաջինս խորհրդ-  
 դական կերպարանք ստացաւ: Բարձր Գերագանցն ինքնին  
 դռներ զդուշութեամբ վերայ բերաւ և մտահոգութեամբ  
 նստելով բազմօցի վերայ՝ իւր մօտ հրաւիրեց զմեզ և ցան-  
 կացաւ մանրամասնութեամբ լսել մեզանից այն նախատե-  
 սանելի վտանգներ՝ որոնք կարող են յառաջ գալ նոր հրահան-  
 գի գործադրութենէն մեր դպրոցական շրջանին մէջ: Որով-  
 հետև մեք համոզուեցանք ճանաչել Լուսաւորութեան Տէր  
 Նախարարին իբրև բարի քրիստոնեայ, գիտակից, ազգեցիկ  
 Պետական գործող և ճրմարիտ զգացմունքով Հայ մարդ,  
 վասն որոյ ամենայն վստահութեամբ խօսեցանք յետագայք:

«Առաջին և մեծ վտանգ այդ հրահանգի գործադրու-  
 «թեան այն է՝ որ ամենայն ուսման մատակարարութեան  
 հսկողութիւն, բաց ի կրօնից, Լուսաւորութեան պաշտօ-  
 նեաներին է հաւատացուած բոլոր դպրոցաց մէջ: Ինչպէս  
 արդէն յայտնի է, տակաւին Պետութեան սրտ տնօրէնու-  
 «թեամբ ընդունուած չէ ամէն այլալեզու հպատակ ազգաց  
 և ժողովրդոց մէջ քաղաքական աստիճանաւորք լինին բա-  
 ցառապէս նոյն ցեղերից՝ որոնք գիտենալով նոցա բար-  
 բառ կարողանան օրինաց և կանոնաց բուն հոգին նոցա  
 հասկացնել, նոցա արդարացի պահանջներին վերահասու  
 լինել առանց թարգմանի, որոնք երեմն կորուստ են պատ-  
 ճառում, և խաղաղ հոգւով կառավարել նորանց: Այդպէս  
 է ըստ մեծի մասին և դատաստանական ծառայողների  
 վերաբերութեամբ, որոնք ուսազգիներ լինելով՝ չգիտեն  
 տեղական լեզուներ և երկրորդ անձնաւորութեան միջոցաւ  
 են տեղեկանում գործողութեանց օրպիսութեան: Այսպէս  
 անշուշտ լինելով և Լուսաւորութեան շրջանում գործող-  
 ներ՝ տարակոյս չկայ, որ չեն կարողանալ պարտ ու պատ-  
 շած կերպով հսկել առարկայից և լեզուաց դասաւանդու-  
 «թեանց եղանակին և չափին, ուսուցչաց և ուսանողաց

ընդունակութեանց և աշխատանաց. սորանից կյառաջանայ անվերջ տարակուսութիւն, անբաւականութիւն և գանգատներ, մինչև վերջ ի վերջոյ յառաջ կգայ—հարց առարկայից և լեզուաց դասախօսութիւնք ուսական լեզուով լինելու, որ Ազգային լեզուի ուսման մահաբեր հարուած կտայ»:

«Երկրորդ վտանգն է՝ որ եկեղեցական արդեանց հաշուով պահպանուող միջակ կարգի, պրոգրիսնագիական դասընթացքով, վարժարաններ ճանաչուելով իբրև ժողովրդական՝ բոլորովին կենթադրուին շրջանների վերատեսչաց և ուսմանց ծրագրով ահագին փոփոխութիւններ կրելով այլ ևս ընդունակ չեն լինիլ տալ Հոգևոր Տեսչութեան եկեղեցական պաշտօնեայք: Ուրեմն՝ Հոգևորական Վարչութիւն կորցնելով վիճակային ուսումնարաններ, միևնոյն ժամանակ կսրցնում է և իւր Տեսչութեան տակ գտնուած դրամներ, որովք կարող կլինէր հիմնել իւրաքանչիւր Առաջնորդական թեմում Դպրանոցներ. ըստ որում Բարձրագոյն կարգադրութեան—պոլսթենիայի—տրամադրութեամբ՝ եկեղեցական դուժարներ միաժամանակ պատկանում են հաւասարաբար և՛ Հոգևոր Իշխանութեան և՛ ժողովրդեան: Այսպիսի անորոշ կացութիւն ևս՝ առանց անբաւականութիւններ յառաջ բերելու Հայ Հոգևորականութեան մէջ, կարող չէ տեսական լինել»:

«Երրորդ՝ հրահանգի ճշգիւ գործադրութիւն յառաջ կբերէ բոլոր առարկայից և Հայոց լեզուի հայազգի ուսուցիչներին հարկադրութիւն՝ ունենալ օրինաւոր քննութեամբ ստացուած վկայութիւնք վարժապետական կոչման մասին. այն ինչ նոքա բաւականին դժուարութեամբ պէտք է կարողանան զայնս ձեռք բերել: Եւ որովհետև այժմեան մեր ուսուցիչք մեծաւ մասամբ ներսիսեան դպրանոցի և էջմիածնի ձեմարանի սաներ են, ուստի և նոցա կրկնաբըննութեանց ենթարկելը կարող է բերել և վտանգ այդ հաստատութեանց բարոյական նշանակութեանն ժողովրդեան առաջ: Ուրեմն, եթէ հրահանգի գլխաւոր դիտումն է Ռուսաց լեզուի, Ռուսաստանի պատմութեան և աշխարհ-

հայկական վարժարաններում, առաւել բանաւոր է այդ առարկայից շաբաթական դասուց թիւ, ձեռնարկ, չափ ուսման և վարժապետք իրենք իսկ, շրջանական Արքունի տեսուչք, նշանակեն և անձամբ հսկեն: Կարծում ենք, այսպիսի մերձաւոր հսկողութեամբ Հոգևոր Տեսչութիւնն առաւել արդարանայ, թէ ըստ մարթելոյն խնամ է տարուած միշտ և ամէն ուսումնարանում վերոյիշեալ առարկայից և լեզուի արդիւնական ուսուցման համար»:

«Չորրորդ՝ Ռուսիոյ Պետութեան և իւր օրինաց հաւանութեամբ Հայոց ժողովուրդ ճանաչուած է մի առանձին Քրիստոնեոյ Ազգութիւն, որ ունի իւր որոշ Վարչութիւն և դորա միակ Գլուխ և Կառավար է սուրբ Էջմիածնի Մայրադոյն Պատրիարք Կաթողիկոս, որոյ մահուամբ այսօր այդ հայկական համայնք անգլուխ է և անիշխան. որովհետև մինչև այսօր բոլոր Պետական կարգադրութիւններ մեր եկեղեցական խնդրոց մասին Սրբազնագոյն Հայրապետի միջոցաւ են հաղորդուած Հայոց հասարակութեան ի գործադրութիւն, վասն որոյ առաւել բանաւոր կլինէր այդ հրահանգի գործադրութիւն թողուլ ցընտրութիւն և հաստատութիւն Կաթողիկոսի: Այսպիսի անգլուխ ժամանակում դպրոցաց կառավարութեան մէջ հիմնական փոփոխութիւն մտցնելն մեզ կասկածաւորութեան է տանում, իբր թէ բարոյական մրցման մեր հրամանատար ընկած լինելով՝ զինադադարի առաջարկութիւն դիմաժարտի կողմանէ չէ ընդունուում: Չեզ դիմում եմ իբրև Պետական ազդեցիկ Պաշտօնէի և իբրև ճշմարիտ զգացմունքով Հայ մարդու՝ գործադրեցէք Չեր յարգելի միջնորդութիւն Սինոդի անդամոց ապագայ պատասխանատուութենէն թէ պատմութեան, թէ ազգի և թէ Կաթողիկոսի առաջ, փրկել, որով յաւիտեան կպարտաւորէք զիս և զՀոգևորականութիւն Հայոց»:

Նորին Բարձր Գերազանցութիւն հակիրճ խօսքերով պատասխանեց. «Կայսերական հաւանութեամբ հրատարակուած օրէնք չէ կարող օգոյ մէջ կախուած մնալ և սպասել Կաթողիկոսական ընտրութեան: Մօտենում է տարին

լրանալու այդ հրանդի հաստատութեան օրից, Դուք ունեցաք Պատրիարքի ընտրութիւն, ո՞վ է երաշխաւոր՝ որ այնպիսի մի սխալ, անյաջող ընտրութիւն ևս չկատարուի, ուրեմն՝ մինչև որ ժամանակ յետաձգուի այդ հրահանգին գործադրութիւն: Սինոդի բռնած դիրք իրեն չէ կարող արգարացնել օրէնադրութեան մօտ, որովհետև դպրոցների համար սահմանուած հսկողութիւն չընդունելն ծանր հետեւանքներ կարող է ունենալ: Ուսուցչաց ընդունակութիւն որոնելն ամէն տեղ յարգուած է. ուստի պէտք է էջմիածնի ձեւաբանի և Տփլիսի ներսիսեան դպրանոցի վարչութիւնը աշխատեն այնպիսի յաջող դրից մէջ գնել այդ ուսումնաւարք՝ որ իրենց բարձր կոչման և միակ նշանակութեան համաձայն, ուսեալ եկեղեցականներ և ուսուցիչներ արտադրեն: Ամենայն առաջնորդական վիճակում թեմական դպրանոց ունենալու մասին՝ Հոգևոր Բարձրագոյն Իշխանութիւն շատ վաղուց պէտք է ուշադրութիւն դարձուցանէր: Եթէ պակասում են նրան նիւթական միջոցներ՝ կարելին էր պարտապատշաճ ճանապարհու այդ խնդիր առաջարկել ուր հարկն է: Դալով լուսաւորութեան հսկող աստիճանաւորների տեղական լեզուներ չդիտենալուն՝ օրից սպասուում է վտանգ առարկայից գասախօսութիւն ուսուց լեզուա յառաջ տանելու, պէտք է ասեմ, որ մեր պաշտօնեայք առաւել երկիւղած են օրէնք և հրաման յարգելու: Նորա երբէք իրենց արտօնութեան սահմանից դուրս գնալ չեն վստահանալ: Հայոց հոգևորական դպրոցների դասընթացից բազմազանութիւն եղած է գլխաւորապէս առիթ այսպիսի հրահանգ յառաջ բերելուն: Ուրեմն քաղաքական Իշխանութեան կողմանէ հսկողութիւն յոյս կտայ ուսումնարանաց կրթութեան միակերպութիւն ունենալու, և այդ հաստատութեանց բարեկարգութիւն տեսնելու: Պակաս նշանակութիւն չէ ունեցած և այն հանգամանք, որ քանի մի տեղեր գիտութեամբ ուսումնական շրջանի աստիճանաւորը ներս չեն ընդունուած Հայոց ծխական վարժարաններում: Դարձեալ կասեմ, բարեւք էր Սինոդի համար այդ կանոնադրութեան գործադրելն՝ քան

պատճառաբերութիւններով յետաձգելը:

Տէր Նախարարի խուսափող անգրագարձներով չբաւականացանք, հապա վերստին և վերստին՝ նորա հայագրի և նշանաւոր ազգատոհմի շառաւիղ լինել մէջ բերելով և Լազարեանց ազգապետաց աշխատութիւնը յիշատակելով՝ հայցեցինք զիարգ և իցէ օգնականութիւն ցոյց տալ մեզ իւր յաջողակ դիրքով սոյն վսեմ խնդրոյն կատարման մէջ: Նորին բարձր Գերագանցութիւն դժուարին կացութեան մէջ գտնելով զինքն՝ երկիւղած համեստութեամբ ասաց. «Պետութեան շահեր պաշտպանելու երդնուած եմ իբրև պաշտօնեայ, բայց ի վերայ այսր ամենայնի ներքին գործոց Նախարարին կտեսնեմ այս մասին և նորա ուշադրութիւն կհրաւիրեմ հնարաւոր եղածը կարգադրելու թէև ոչ լիայոյս, սակայն և այնպէս՝ կիսանգորր խղճմբտանքով արձակուեցանք Նորին բարձր Գերագանցութեան ներկայութիւնից: Կայսերական մայրաքաղաքում ո՞վ որ անձնական կամ հասարակական գործով գտնուած է՝ շատ լաւ գիտէ, թէ մէկ պաշտօնական թղթի յետևից քանի քանի գործատուն պէտք է երթիւեկէ, քանի քանի պաշտօնակալաց պէտք է ներկայանայ, քանի քանի մանրիկ, ստորնակարգ ծառայողաց պէտք է հարց ու խնդիր լինի իւր տուած թղթոյն ընթացից համար: Այս դժուարին բաժին մնացած էր արժանապատիւ Մելքիսեդեկ քահանային Քալանթարեանց՝ գրեթէ օրընդմէջ յայտնուիլ Շեպելեփի մօտ, Ազգային լուսաւորութեան և Ներքին գործոց Նախարարների դիւանատանց Կառավարիչների և Գերագանց Պարոն Եգեանցի մօտ, առաջիններից մեր խնդրարկութեան ինչ կացութեան մէջ գտնուիլն իմանալու և վերջինից որպիսաբար վարման յատակագիծ խնդրելու: Դեռ լիանովին տեսակցելուց քանի մի օր յետոյ պատուարժան քահանային ուղարկեցինք Պարոն Շեպելեփի մօտ՝ որ վերագաւենալով ծանոյց, թէ արդէն լուսաւորութեան Նախարար մեր գրութեան մասին իւր ննթագատութիւն տուած է և վերագարձուցած առ իշխան Դոնդուկով—Կարսակով և վերջինս առաջարկած է ի վերջնական տնօրէն

նութիւն ներքին գործոց նախարարին: Ուստի փութացինք յ2 Փետրվարի յետագայ ծանուցագիր ուղղել յանուն Պայծառափայլ ԳրաՑ Դիմիտրիյ Անդրէեւիչ Տոլստոյին, որոյ հարազատ թարգմանութիւն յայտարարութեամբ յ3 նոյն ամսոյ թուահամարաւ 6, մատուցինք ի բարենկատողութիւն անդամոց Սրբազան Սինոդի սրբոյ էջմիածնի:

«Ողորմա՛ծ Տէր.

«Կոմս Դիմիտրիյ Անդրէեւիչ.

«Ի հետևումն դէմ՝ յանդիման բացատրութեանց ընդ «Տեառն Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու ըստ եզելոյ ի վերոյ իմ՝ յանձնարարութեան ի կողմանէ «Սինոդի սրբոյ էջմիածնի՝ միջնորդել առաջի Բարձրագոյն «Կառավարութեան սակս յետաձգելոյ զկատարումն կանոնադրութեան եկեղեցական դպրոցացն Հայոց և համաձայն ցցանկութեան Նորին Պայծառափայլութեան, մատուցի նմին զգրաւոր յայտարարութիւն ըստ այսմ՝ առարկայի:

«Պարտ առանձին վարկանիմ զյայտարարութիւնն զայն «Ի պատճէնի առաջի առնել ի բարետեսութիւն Չերդ Պայծառափայլութեան և ընդ նմին թոյլատրեմ ինձ յուսույ, «զի, ոչ միայն իբրև այր Պետական, կոչեցեալ ի պաշտպանութիւն հայրենեաց յերեսաց վարդապետութեանց, միապէս կործանիչ համարելոց, որպէս վասն պետութեան, «նոյն և եկեղեցւոյ, այլ և որպէս անձն ուսումնական, որում մերձաւորապէս յայտնի է, թէ Հայաստանեայց «եկեղեցին, երբէք ոչ արտայայտելով, ոչ զիշխանասիրական և ոչ զքաղաքական ձգտողութիւնս, յընթացս դաւրաւոր ժամանակաց Սրբութեամբ և անխուսափելի կատարէր զիւրն հոգևորական պարտաւորութիւն,— Պայծառափայլութիւն Չեր երբէք հաւան ոչ գտլիք ընդ միջոցս, «որք հային ի թուլացումն հեղինակութեան եկեղեցւոյ, «ի նեղսակրութիւն հոգևոր Տեսչութեան ի կատարման «պարտաւորութեանց իւրոց և ի հարկադրել զնոյն ի մուսուլման արկանել զպարտիս իւր առաջի եկեղեցւոյ և «Քահանայապետական ենթադրութեան:

«Լայնարձակ ուսումնականութիւն Չերդ Պայծառափայլութեան ըստ խնդրոցս այսոցիկ ազդէ յիս զհաւաստիս, զի Դուք բարեհաճ և համակրանօք ունիք բերիլ առ «ենթադատութիւնս, գծադրեալս յիմում յայտարարութեան, չունիք երկբայիլ յանկեղծութիւնս նոցին, և ոչ «նախապատիւ գործեսլիք զենթադրութիւնս, որք առաւել կամ նուազ չափով երկուանալի համարին, քան զնուիրական պահանջս եկեղեցւոյ և Պետութեան:

«Ներողամիտ լերձեր, Չերդ Պայծառափայլութիւն, «զի ես դիմեմ առ Ձեզ լիամասն պարզաբանութեամբ և «ընկալարձք զհաւաստիս խորին յարգանաց իմոց և նոյնպէս «անձնուիրութեան, որովք ունիմ շնորհ լինել՝ «վասն Չերդ Պայծառափայլութեան հեղամիտ աղօթարար «առ Սատուած:»

«Տեղեկացեալ, զի իշխան Կառավարչապետն Կովկասու զնամակաձև խնդիր իմ՝ մատուցեալ ի 19 նախանցեալ «Յունուարի, գրութեամբ իւրով ի 21 նորին ամսոյ թուահամարաւ 102 առաջի արարեալ է յենթադատութիւն «Նախարարի լուսաւորութեան, ի 25 Յունուարի ներկայացայ «Նորին Բարձր գերազանցութեան Տեառն Յովհանու «Դաւթեան Դելիանով և յերկարաձիգ բանս բացատրեցի զեզմանակ կառավարութեան հոգևոր դպրոցաց Հայոց ընդ «զերիշխան տնօրէնութեամբ Հայրապետի Հայաստանեայց «եկեղեցւոյ՝ յօրէ անտի տարածմանն քրիստոնէական կրօնի «և այսրս Նորին Բարձր գերազանցութիւն նեղեալ ի վաւրանս ընդ բազմօրեայ անգործադրութիւն Բարձրագոյն «հաստատեալ հրահանգաց ծխական դպրոցացն՝ խորհուրդ «ետ չառարկել ամենևին զյետաձգութիւն նորին, ըստ «որում այդպիսի խնդրարկութիւնք ամեն, տանեն զհոգևոր վարչութիւնն ի դժուարին կացութիւնս դէմ ընդ «դէմ՝ պահանջից և հրամանաց Պետական կառավարութեանն: Ո՛չ շատացեալ բացարձակ բացասականաւ Նորին «բարձր Դերացանցութեան՝ կրկնեցի և երեքլինեցի նմին «զթախանձանս, չինայել յիւրմէ կողմանէ զժողովուրդ գործնականութիւն ի կատարումն միջնորդութեան Սրբազան

Մինողիդ՝ առաւել ևս այնու պատճառաւ, զի ուսումնաւեկան տարին մերձ ի վախճան հանգրիւ և վերատեսուչք արքունի վարժարանաց անարգել ել և մուտս ունին յուսումնարանս մեր: Իժուարութեամբ բաղմաւ յանձն էառ Վորին բարձր Իերազանցութիւն խորհրդակցել ընդ Նախարարի Ներքին գործոց՝ յաղագս ըստ մարթելոյն տալոյ տեղի խնդրանացս, որպէս վասն յետաձգութեան գործադրութեան հրահանգացն ցընտրութիւն և հաստատութիւն Կաթողիկոսի ազգիս, նոյնպէս և ի սակս տարածանելոյ ի վերայ մերոց վարժարանաց զարտօնութիւնս Վժխական ուսումնարանաց հոգևորականութեանն Ռուսաց:

Յետ այսոցիկ ամենայնի ի 1-ն այսր Փետրուարի ընկելալ զհաւաստութիւնս ի գլխաւոր կառավարչէ գիււանատան իշխան Դոնդուկով—Կորսակովի, ի գեներալ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Շեպիլիովէ, թէ Նախարար լուսաւորութեան արդէն յայտնեալ է Տեառն Կառավարչապետին Կովկասու զենթադատութիւն իւր՝ սչ ի նպատակ խնդրարկութեանց Սրբազան Մինողիդ, և թէ այդ խնդիր տունի առաջարկիլ ի վերջնական լուծումն Նախարարի Ներքին գործոց, անժամակորոյս յ2 ամսոյս մատուցի Պայծառափայլ Կոմս Իրմիտրիյ Անդրէեւիչ Տալստոյին զժանուցազիր՝ վասն տալոյ դպրոցական գործոյն զցանկալի ընթացս, զորոյ հարազատ օրինակն՝ հանդերձ հայկական թարգմանութեամբ, ընդ այսմիկ շնորհ ունիմ՝ մատուցանել ի բարետեսութիւն Տեարց Ատենակալաց Դորին»:

2.

Այն ինչ օր ընդ օր և ժամ առ ժամ ըօպասում էինք Ներքին գործոց Նախարարից վերջնական պատասխան ստանալ մեր յ2 Փետրուարի մատուցած ժանուցագրով դպրոցական հրահանգի գործադրութիւնը յետաձգելու մասին՝ ընտանեկան և առանձին ազգարարութիւնք են լինում առ մեզ Նորին բարձր Իերազանցութեան Յովհաննէս Դաւթեան Իելիանեանցի կողմանէ: Արժանապա-

տիւ Մելքիսեդեկ քահանայն նոյն ամսոյ 3-ին իւր սեփական գործով—դուստրը Կայսրուհւոյ հովանաւորութեան ներքոյ եղած մէկ բարձրակարգ օրիորդական ուսումնարանում տեղաւորելու համար, ներկայանում է նորան՝ որից սիրով ընդունելութիւն է գտնում և զկնի իւր անձնական խնդրոյ մասին պատշաճաւոր պատասխան լսելու Տէր Նախարարից՝ մերձաւորապէս յետագոյ խօսքերն է լսում մեր վերաբերութեամբ, որոնք ըստ մասին համարուում են իրեն (քահանային) մեղադրական ազգարարութիւնք:

«Նս մտադիր էի Ձեզ կանչել, լաւ է որ Դուք ինքնին երևեցաք ինձ մօտ: Ինչպէս յիշում եմ, Դուք Աստրախանայ Աղաբաբեան ուսումնարանում այժմս կրօնուսոյց էք, դոյն պաշտօն վարել էք և գեմնագիտներում, օրեմն հաւատի եմ որ Ձեր յատուկ մասնագիտութիւն եղած սրբազան պատմութիւն շատ կրկնած էք և ծանօթ նորան: Կյիշէք արդեօր Դաւթի Սաւուղ արքայի զօրօք շրջափակ բանակը մտնելն Ձիւփ անապատի մէջ, նորա ջրի կուժ և գեղարդ առնել, լերան գլուխ բարձրանալ և թագաւորի Աբեններ զօրավարին մեղադրութիւն կարգայն, արժանի ես մահու, ըստ որում քո արքայիդ կենաց պարտուպատշաճ կերպով հսկողութիւն չես առնում»: Նոյնպիսի մեղադրութիւն, բայց բարեկամական սիրով, այսօր ես Ձեզ կկարդամ՝ որ Դուք վայելուչ զգուշաւորութեամբ չէք շարժում Ձեր մեծաւորի անձնական արժանիք և կոչման բարձր պատիւ պաշտպանելուն մէջ: Դուք՝ իբրև կրթուած անձնաւորութիւն, Ռուսաց օրէնքագրութեան հոգւոյն ծանօթ մարդ և ծառայութեան պարտիք գիտեցող, պէտք է չթոյլատրէիք Ձեր եպիսկոպոսին այդպիսի վտանգաւոր յանձնարարութեամբ մայրաքաղաք գալ և ի դուր այս և այն Պետական պաշտօնէից դռներում դեգերել բանիւ և թղթով, անհնարին գործոց համար խնդրարկութիւն առնելով, ես ի մօտոյ գիտեմ, որ այդ հոգևորականը կառավարութեան մօտ բաւական բարի համբաւ էր ունեցած իւր ծառայութեանց մասին. աժմս այս պատգամաւորութեան պաշտօնով իւր անձնական

համարմանը մեծ փնտս պատճառեց, մեծ փնտս պատճառեց և իւր առաջնորդական տեսչութեան ժողովրդոց յառաջ, ըստ սրում անկատար մնացին իւր ձեռնարկութիւնք՝ որ արհամարհանք է»:

Արժանապատիւ քահանայն իւր կողմանէ պատասխանում է: «Իբրև ստորագրեալ անձն ես չէի համարձակիլ Նորին Սրբազնութեան արգելք դառնալ այս ճանապարհորդութեան մէջ, որ իւր Բարձրագոյն հոգևոր իշխանութեան յանձնարարութեամբն էր: Սակայն թէ ես, թէ այլ շատ բանիմաց մարդիկ նորան հաւաստիացրած ենք, որ այդպիսի առաջարկութիւնք դժուար թէ կատարումն գտնեն քաղաքական Բարձրագոյն վարչութեան մօտ: Նոյն ինքն եպիսկոպոսը համոզուած էր տակաւին Աստրախան եղած ժամանակ՝ որ Կայսերական հաճութեամբ տրուած հրահանգի գործադրութիւնն անհնարին է յետաձգել. բայց իւր իշխանութեան հրաման իրեն համար սուրբ համարած, ինչպէս քանիցս կրճնած է, սիրով յանձն է առել ամենակերպ բարոյական և նիւթական փնտս կրել և գալ այստեղ»:

Սոյն Փետրուարի 4-ին, դեռ ևս պատասխան չստացած Նորին Պայծառափայլութիւնից, Կոմս Տալստոյից, մեր զեկուցագրի վերաբերութեամբ, աշխատութիւն տուինք Տէր Մելքիսեդեկին գնալ, ներկայանալ Կենսակուզէնին և մեր կողմանէ խնդրել՝ Ներքին գործոց Նախարարից թոյլտուութիւն ստանալ՝ մեզ համար տեսչութեան ժամանակ նշանակել մեր գրաւոր խնդրարկութեան մասին բերանացի կարևոր բացատրութիւններ տալու: Մի և նոյն միջոցին ծանուցանէ, որ մեք կցանկանք Նորին Կայսերական Մեծութեան ներկանալ, ուստի բարեհաճի և այդ մասին հարկաւոր ճանաչուած կարգադրութիւնք առնել: Արժանապատիւ քահանայն մեծապատրաստակամութեամբ յայտնուում է Նորին Պայծառափայլութեան մեր յանձնարարութիւն հաղորդելու: Հեղամիտ գրաֆ Սպերանսկին երեք քառորդ ժամու չափ պահում է իւր մօտ նորան և առանձնաբար մաքուր

վշտակցութեամբ՝ ներքոյ դրուած զրոյրներն անում մեր և գործոյն համար:

«Շատ վշտանում եմ ես իմ անհրաժեշտ դրութեան մասին. այլադաւան ազանց հոգևոր գործերի բոժանման կառավարիչ լինելով՝ Ներքին գործոց Նախարարութեան մէջ՝ իմ յատկական պարտաւորութիւնն է այդ ազգաց բարձրատիճան հոգևորականներին ցոյց տալ ամենասիրալիր ընդունելութիւն. պատրաստ լինիլ կատարումն տալու նոցա ամենայն կարելի առաջարկութեանց. բայց որքան ցաւում եմ՝ որ նախ չեմ կարողանում կատարումն տալ Ձեր եպիսկոպոսի խնդրանաց, և երկրորդ՝ չեմ կարողանում բացարձակ իրեն ասել այն պատճառներն՝ որոնք առիթ են լինում այսպիսի սառն ընդունելութեան: Այս երրորդ անգամն է՝ որ Նորին Սրբազնութիւն ցանկութիւն է յայտնում պարոն Նախարարին տեսնելու, և ես ցաւօք սրտի պէտք է ասեմ, չեմ հնարաւորուում այդ տեսակցութիւն յաջողել: Արդարև՝ հիւանդ է նախարար, սակայն այնքան դժուարին չէր նորա համար եպիսկոպոսին մէկ քանի վայրկեաններով ընդունելը, մանաւանդ առաջին օրերն: Տխրալին այն է՝ որ Նորին Պայծառափայլութիւն սաստիկ զայրացած է ինչպէս Էջմիածնի Սինոդի վերայ, որ ցայսօր դիմադրում է Կայսերական տարևոր ժամանակով յառաջ տրուած հրաման կատարելուն համար, նոյնպէս և Կովկասեան Իշխան Կառավարչապետի՝ որ մինչև այստեղ թողել է բանն հասնելու և խիստ միջոցներ ձեռք չէ առած այդ հրահանգը դպրոցների մէջ գործադրելու: Ահա, այսպիսի ժամանակ և մէկ նոր պաշտօնական պատգամաւորութիւն՝ Աստրախանայ վիճակի Հայոց կառավարիչ և թեմական տանի անգամ, Սինոդի կողմանէ լրակատար հաւատարմութեամբ հասնում են թագաւորական քաղաք և հետամուտ լինում պարոն Նախարարին ներկայանալ, որպէս զի ասեն. «Մեք Կայսերական հրաման կատարելու յօժարութիւն չունինք, յետաձգեցէք զայն մինչև Կաթողիկոսի ընարութիւն»: Ասացէք խնդրեմ, ինչպէս թոյլ տայ գրաֆ Տալստոյն՝ որ Սինոդի գրով առաջարկելէն

յետոյ՝ եպիսկոպոսը ներկայանայ և բանիւ մի և նոյն խօսքեր կրկնէ, կամ Կայսեր ներկայացնելու կարգադրութիւն առնէ: Ինչպէս կարելին է թոյլ տալ հաւատալու, թէ այդպիսի խնդիրներ հնարաւոր են գրով կամ՝ բանիւ բարձրացնել Նախարարի և Կայսեր մօտ: Ինչո՞ւ գոնէ միաք չեն բերում հայոց հոգեօրականք՝ որ Մայրագոյն Պատրիարքն է թագաւոր Կայսրից հաստատուում՝ հաւատարիմ՝ հպատակութեան երդումն տալով, ուրեմն առաւել բանաւոր է, որ նա առանց այլ և այլի, յանձն առնէ կատարել Պետական հրաման, քան յուսալ թէ՛ փոխել կամ խափանել կարելին է այն: Այդ հրահանգի կատարելն իրենց շահն է: Պետական լեզուի ուսումն համապատշաճ ձևով հայկական դպրոցներում յառաջ տանելու համար է խմբագրուած: Յայտօր ևս հայք պարսից և տաճկաց լեզուներն գիտեն, բայց Ռուսաց բարբառ իւրացնելուց խորշում են: Իորանով ահա նոքա ցոյց են տալիս իրենց հակակրօթիւն և տանջութիւն առ Պետական կառավարութիւնն՝ որ այնքան մարդասիրութիւն և շնորհ է ցոյց տուած իրենց՝ պարսկական և տաճկական ստրկութեան լուծն վերացնելով և ընչից, պատուոյ և համոզման սեփականատէր շինելով իրենց»:

«Որովհետև այսքան ընդարձակուեցայ Ձեր արժանապատիւութեան մօտ՝ թոյլ տուէք որ ասեմ, երբ պարսն Նախարար իմացաւ եպիսկոպոսի և Ձեր պատգամաւորութեամբ մայրաքաղաքս գալու համբաւն, անմիջապէս հեռագրեց Աստրախանայ Նահանգապետին, որպէս զի թոյլ չտայ Ձեզ ճանապարհ դուրս գալ: Տարաբաղտաբար այդ հեռագիր նշանագծերով լինելով՝ հեռագրատան մէջ գլխաւոր ծառայող չէ կարողանում հասկանալ և սխալանք է մտնում հեռագրի մէջ, որով իմաստ այլայլուում է: Մինչև Նահանգապետի կողմանէ հարցումն է տրուում այս տեղ Պետերբուրգ և բացատրութիւն խնդրուում, Դուք նոյն օրը, Դեկտեմբերի 26-ին առաւօտեան ժամ 10-ին ուղևորուած էք լինում. այն ինչ այդ բացատրութիւններ հասնում են Նահանգապետի ձեռք չորս ժամ յետոյ,

այսինքն զինի կէս աւուր ժամ 2-ին: Թէ և քաղաքապետն խնդրում է հեռագրով հրահանգութիւն Ձեզ վերադարձուցանելու, բայց Նախարարը՝ խնայելով եպիսկոպոսի առաջնորդական պատուոյն, թոյլ է տալիս շարունակել իւր ճանապարհորդութիւն: Այժմս Դուք դատեցէք, այստեսակ նախընթաց գործողութիւններից յետոյ՝ կարելին է յուսալ Նախարարի կամ Կայսեր տեսութեան: Սկզբէն ասացի Ձեզ՝ որ շատ եմ վշտանում. Սուքիաս եպիսկոպոսի վերայ Կառավարութիւնը բաւականին լաւ համարումն ունէր, թո՛ղ նա այս դործով եկած չլինէր, այլ ուրիշ մէկ յանձնարարութեամբ, հաւատացէք անկեղծութեանս, ես նորան երկաթուղւոյ կայարանում կհանդիպէի և վայելուչ եղած յարգանքով կընդունէի: Այն ժամանակ ոչ միայն Նախարարի հետ տեսակցութիւն հեշտ էր յաջողել նորա համար, այլ և Նորին Կայսերական Մեծութեան: Տրտմութիւն է ինձ համար, ինչպէս յայտնեմ գրաֆ Տարտոյին եպիսկոպոսի ներկայանալ փափագ ունենալու մասին, կամ՝ ինչպէս պատմեմ Նորին Սրբազնութեան՝ որ Ձեզ չէ կամենում տեսնել Կոմսն և դժուար է համարում թագաւոր Կայսեր ներկայացնել: Ճշմարիտ ասեմ, ես ամաչում եմ. նա ևս իւր աստիճանն և բարձր կոչումն ունի, բայց ցաւալի է՝ որ առ եպիսկոպոսն տհաճութիւնը իրողութիւն են, մինչև անգամ դիտաւորութիւն կար նորա քաղաքս հասած ժամանակ ազգարարել՝ շուտով թողնի վերադառնայ՝ առանց իրեն յանձնուած գործի մասին ում հետ որ լինի բանակցութիւնը սկսանելու»:

Քուրանթարեանց իւր կողմանէ խնդրում է Նորին Պայծառափայլութիւնից, եթէ հնար է, գրով մեզ տեղեկութիւն տալ Նախարարի ընդունել չկարողանալուն համար, և իւր կողմանէ յարգարացուցումն մեր ասում է՝ որ իշխանութեան յանձնարարութիւն չկատարել կարող չէինք իբրև ստորադրեալ, և թէ ինք մեզ հետ նշանակուած չէ իբրև անդամ պատգամաւորութեան, այլ իբրև սոսկ թարգման եկած է, և այն միայն մեր ընտրութեամբ

և ոչ հոգևոր տեսչութեան ցուցմամբ, վերադառնում է կացարան.

Հետեւեալ օր առաւօտուն ստանում ենք կնեազ Կանդակուզէից գրութիւն արձակուած ի Ծ Փետրուարի ընդ համարաւ 629, որով ծանուցանում է. «Կառավարիչն բաժանման հոգևոր գործոց այլադաւան ազանց արտայայտելով զլիակատար յարգանս առ Նորին Սրբազնութիւն «Սուքիաս Եպիսկոպոս Պարզեանց, ունի պատիւ տալ տեղեկութիւն թէ՛ առողջական գրութիւն Տեառն Նախարարին ոչ թոյլ տայ նմին նշանակել զժամանակ ի մասին ընդունելութեան Նորին Սրբազնութեան»:

Նոյն իսկ օրը՝ գրութեան ստացումից գրեթէ երկու ժամ յետոյ, ազնուամիտ Իշխանն անձամբ շնորհ բերեց Դեմուտ հիւրանոց մեզ այցելութեան: Թերևս մեր վշտացած սիրտ մի կերպ սիրաշահելու պատրուակաւ, անտարակոյս գիտելով թէ՛ հայր Քալանթարեանցին խօսածներ արդէն ինձ յայտնի կլինին, և թէ Տէր Նախարարի տեսակցութեան մերժումն՝ իբրև մի կողմնակի հրաման— թողնել Պետերբուրգ և հեռանալ, հոգւոյ կարիվէր վիշտ և տրամութիւն պատճառած կլինին: Բարձրագոյն պաշտօնէից նրբին քաղաքագիտական վարժութեամբ սովոր շարժուածք ի նկատի ունենալով՝ բնազդաբար զգում էինք, որ այդ օր կարևոր այցելուք կհանդիպին, վասնորոյ և օրահաշուով վարձած էինք մի պատշաճաւոր կահաւորուած դահլիճ երկրորդ յարկում, այնինչ մեր բնակում էինք վեցերորդումն: Պատուագիր յարգանքով ընդունեցինք Նորին Պայծառափայլութիւն՝ որոյ առաջին խօսքն էր սղջունելէն յետոյ, «Ձերդ սրբազնութիւն՝ իբրև քրիստոնեայ ամարդ և առ հոգևորականս ջերմեանդ մեծարանաց սովոր, պարտաւորութիւն համարեցի յայտնուիլ Ձեզ մօտ և ներողութիւն խնդրել ակամայ ըստ պաշտօնիս պահանջման, Ձեր բաղձանքի կատարման գրաւոր մերժումն ատարուս մասին, կյուսամբ բարի լինիք թողութիւն տալ ինձ որպէս հովուապետ»:

Կամենալով զգացնել Նորին Վսեմափայլութեան թէ

ծանօթ եմ իւր հաղորդածներին՝ պատասխանեցի. «Որպէս այնցաւոր բնակին իրաւունք չունիմ Ձեր Պայծառափայլութեան պաշտօնական վերաբերմունքից վշտանալու: Եթէ իրաւունք ունենայի իրաւացի արդարութեամբ կտրամէի «Տէր Նախարարի վարմունքից՝ որ իբրև մեծ և իշխանաւոր, ինքն է երեսապահ լինում մեղաւորիցս, փոխանակ ես յանցանքիս ծանրութիւն կշուելու: Ստորագրեալ լինելով հոգևոր իշխանութեանս՝ չէի կարող նորա հրամանն ամբօքել, չընդունել ամենայն ակնածութեամբ՝ ծանուցանելու բարեխնամ Կառավարութեան, նախ՝ թէ Հայրապետի մահուանից յետոյ՝ ս. Սինոդ կգժուարի— որպէս լիազօր— ընդունել ի գործադրութիւն դպրոցական հրահանգ, և երկրորդ՝ բաւարար չէ այդ ծաւալ կրթութիւն հայ ժողովրդեան պիտոյից: Ուստի և առաւել ուրախ կլինէի Տէր Նախարար շնորհ արած լինէր ընդունելութեան. ըստ որում իւր մերժումն դարձեալ իրեն զօրութեան մէջ կմնար, երբ բարեհաճէր ասել, Ձեր հայցուածք անհնար է կատարել, որովհետև այդպիսի առաքելութիւն ընդունելը Ձեր կողմանէ յանձնապատասանութիւն է»:

Ըստ որում իմ բան և գործ դպրոցական խնդիրը լինելով՝ շարունակ յառաջ էի բերում մի և երկդասեան վարժարանների այսպիսի ժամանակ անբաւարարութիւն կրթութեան կարօտաւոր հայ ժողովրդի պահանջից նկատմամբ. ուստի Իշխանն թոյլ տուեց իրեն՝ որպէս վշտացած առարկել. «Կառավարութիւնն այսպիսի գէպքերում հրահանգուում է իւր տեսչութեան ստորագրեալների պատճառաբանութիւններով: Եթէ Հայոց եկեղեցական իշխանութեան պահանջն իւր համայնքի դաստիարակութեան կամ այլ խնդրոյ վերաբերութեամբ տարբերէ լուսաւորութեան աստիճանաւորների հայեացքներից՝ առաւել խոհական է ամիշտ այստեղ Պետերբուրգ մի բարձրաստիճան եկեղեցական ւունենալ, ինչպէս ունի Հռովմայ սրբազան Պապն. որպէս զի իրողութեանց իսկութիւնը հարազատութեամբ և բացատրութեամբ՝ զեկուցանէ ուր հարկն է, նախ քան նոցա ավճառահատութիւնն: Ըստ իս Ձեր պատճառաբերութիւն-

աներ՝ ուսման պաշարով անբաւականութեան մասին, կվե-  
 րանան, եթէ Հոգևոր Իշխանութիւն գաստիարակութեան  
 ամիօրինակ հրահանգ և ուսուցման ծրագիր տալով՝ ստո-  
 քրինները միջակայնոց՝ և սոցա հոգևոր ձեմարանի հետ  
 զկապակցէ. այնպէս որ միգասեան վարժոց մտնող զիւ-  
 շղական մանուկ կատարեալ յոյս ունենայ ձեմարան հաս-  
 անելու: Այսպիսի բարի նպատակ իրագործելու համար՝  
 զկարող է նա Ռուսաստանում եղած իւր վեց վիճակն՝ որ  
 ամնօրինուած է 1836 թուին—երկրի սակաւաբնակ ժա-  
 ւմանակ, տասն և երկուսի վերածել և դոցա թուով ու-  
 անենալ հոգևոր դպրանոցներ՝ որոնք անշուշտ բաւակա-  
 անութիւն կտան հասարակութեան պահանջներին՝ որքան  
 և մեծ լինին նոքա: Եթէ արգարև կայ կարիք՝ որոյ վե-  
 րայ այդքան պնդում էք, պէտք է ապագայ ընտրելի  
 «Հայրապետին տրամադրել վիճակների թիւ շատացնելու  
 ամասին առաջարկութիւն առնել Կառավարութեան և  
 Եյատկապէս այստեղ ունենալ մի բարձրաստիճան ներ-  
 զկայացուցիչ: Սովորական է ասացուածս՝ մինչև տղայն  
 զլաց չլինի, մայրն ծիծ չի տալ. խնդրեցէք՝ որ ստանաք,  
 «տակաւին այդ փորձ չէ եղած Ձեր կողմից» 1):

1) Ի նկատի ունենալով բարեսիրտ Իշխանի ուղղագատ  
 խօսքեր՝ իւր ժամանակին թէ՛ հանդուցեալ Տէր Մակար և թէ՛  
 ներկայ Աեհափառ Հայրապետին—որպէս երևանի թեմի փոխ-  
 թեմակալ—պաշտօնական յայտարարութիւններով խնդրած եմ՝  
 Արարատեան աշխարհի մնակ առաջնորդութիւնն հինգի վե-  
 րածել: Խնդրած եմ զպրոցական հաստատութեանց մէջ կըր-  
 թական ուսման աստիճանեալ կարգ պահպանել, որպիսի անօ-  
 րէնութիւն եղած է բարեյիշատակ վախճանելոյն կողմանէ: Հո-  
 գացուած էր և կողմնակի ձանապարհով, որպէս զի Տէր Խորեն  
 վարդապետ Ստեփանէ՛ իբրև զարգացած անձնաւորութիւն,  
 ընդ պատրուակաւ քարոզչի և բարձրագոյն ուսումնական  
 հաստատութեանց ունեկիւր մերազգիների կրօնուսուցչի պա-  
 հանջուի մայրաքաղաք, ուրանօր սակաւ առ սակաւ ժողովրդա-  
 կանութիւն գտնելով և կառավարչական պաշտօնէութեանց  
 ծանօթանալով՝ ի ղէպ ժամանակին Հոգևոր բարձրագոյն իշխա-  
 նութեան ներկայացուցչի պաշտօն ստանձնի: Այլ աւանդ, հան-

Դորանից չորս օր յետոյ հասնում է մեր ձեռք  
 Կովկասեան Իշխան Կառավարչապետի կառավարութեան  
 գլխաւոր Շեպելիովի հաղորդագրութիւն՝ զբուած յՑ  
 Փետրուարի թուահամարաւ 184, որ ունի այսպիսի բո-  
 վանդակութիւն: «Ձերք Սրբադնութիւն, նամակ Սրբադ-  
 անութեան Ձերոյ յանուն Կառավարչապետի քաղաքական  
 ամասին Կովկասու ի 19 անցելոյ Յունուարի, յորում Դուք  
 բարեհաճեցոյք ըլծալի համարել զտարածումն կանոնաց  
 Քարձրագոյն հաստատելոց ի 13 Յունիսի 1884 ամի, վասն  
 ձխական դպրոցաց Ուղղափառաց և ի վերայ Հայոց-  
 «Պրիգորեան եկեղեցական դպրոցաց ի Կովկաս՝ հաղորդե-

ճարաշատ Հայրը՝ բուռն նախանձանդուութեան հոգևով գործե-  
 լու սովոր լինելով, իւր Պետերբուրգ գտնուած բոլոր ժամանակ  
 նուիրեց Պայծառափայլ Իշխան Սիմէօն Գաւթեան Աբամելիք-  
 Լազարևի հետ խիստ վիճաբանութեան՝ տեղոյն եկեղեցւոյ  
 գանդահարութեան և ուսու ժամակույի աստուածալաշտութեան  
 միջոցին ո՛չ վերարկուով երևելուն համար: Ուստի վերջ ի վեր-  
 ջոյ՝ նոյն իսկ Իշխան Կանտակուզէնի, որ Հայոց հոգևոր բարձ-  
 րագոյն իշխանութեան ներկայացուցիչ էր ցանկանում տեսնել  
 կայսերական մայրաքաղաքում, ստիպաւ թ ըողորովն առ Տէր  
 Մակար կաթուղիկոս՝ իսպառ հեռացաւ շնորհալի վարդապետն  
 չյաջողելով իւր պահանջները կատարումն տեսնել: Արդւ՛րև,  
 եթէ հոգևոր բարձրագոյն իշխանութիւնն անփոյթ չգտնուէր  
 եռանդուն պահանջով վիճակաւորութեանց թիւ 12—15-ի վե-  
 րածել և ունենալ դոյն չափով թեմական դպրանոցներ՝ Մայր  
 Աթոռոյ ձեմարան վաղուց դադարած կլինէր որքանոց—աղքա-  
 տանոց լինելու վիճաբանական տաւապեցուցիչ հարկէն, այլ  
 ստանալով յամի ամի առ նուազն տասնական դպրանոցաւարտ  
 ուսանողներ համօրէն թեմերից՝ կունենար կանոնաւոր մասնա-  
 գիտական ձեմարան, ո՛չ ստուկ անուամբ ինչպէս այժմս, այլ և  
 արգեամբ: Եւ ո՛չ, այսչափ միայն, կընձեռէր ապաքէն և զիւ-  
 րութիւն վիճակատէր առաջնորդոց՝ ըստ կանոնաց տիեզերա-  
 կան ժողովոց, երեք տարին մի անգամ շրջել իւր թեմ և ան-  
 ձամբ վերահասու լինել բարեկարգութեան թերութեանց՝ իբրև  
 պատասխանատու առաջի Աստուծոյ, խղճի և իշխանութեան:  
 Այնինչ այժմեան կացութեամբ Տիփլիսի և Երևանի թեմակալք  
 հազիւ տասն տարին միանգամ ատակեն իւրեանց վիճակներէ  
 համօրէն եկեղեցիք և համայնք տեսնել:

«ցաւ ի նախընթաց եզրակացութիւն նախարարաց Ազգային  
 շրջաւարտութեան և Ներքին գործոց: Ունելով ի նկատի, զի  
 «հաստատեալն դեռ ի 16 Փետրուարի անցելոյ ամի հրա-  
 ւմանն Բարձրագոյն երբէք ոչ զնէ ի սահման անձուկ  
 «զհսկողութիւն հոգևորականութեան Հայոց ի վերայ դպրո-  
 ցաց տեսչութեան նորին յանձն եղելոց և դասատուու-  
 «թեան ի նոսին Կրօնի և մայրենի լեզուի, և թէ ի մէջ  
 «եկեղեցական դպրոցաց Ուղղափառաց և Հայոց գտանի  
 «այն տարբերութիւն, զի յառաջինսն բոլոր դասատուու-  
 «թիւնք աւանդին ի լեզու Ռուսաց և յայս սակս հո-  
 «գևորականութիւն ուսաց կարէ յառաջադիմութեամբ  
 «հսկել ի վերայ նոցա. այն ինչ հսկողութիւն ի վերայ դո-  
 «սատուութեան պարտաւորեալ առարկայից ի լեզու Ռու-  
 «սաց ի Հայոց եկեղեցական վարժարանս չկարէ հաւա-  
 «տացեալ լինիլ Հայ հոգևորականութեան, մեծամասնու-  
 «թիւն որոյ բոլորովին անգէտ է այնմ լեզուի. և թէ ի  
 «վերջոյ՝ հոգևոր ուսումնարանք Յունաց ի Պետութեան,  
 «որք պատկանին հանգոյն Հայոց նոյնպէս միոյ Արևելեան  
 «եկեղեցոյ, ենթադրին այնու ամենայնիւ հսկողութեան  
 «և հրահանգութեան ընդհանուր ուսումնական տեսչու-  
 «թեան,— Տեսրք նախարարք Ներքին գործոց և Ազգային  
 շրջաւարտութեան՝ անհիմն համարին առնել՝ զոր և իցէ  
 «փոփոխումն ի կանոնադրութիւնս, Բարձրագոյն հաստա-  
 «տեալս ի 26 Փետրուարի 1884 ամի, վասն Հայոց Գրի-  
 «գորեան եկեղեցական դպրոցաց ի Կովկաս:

«Հաղորդելով զայսմանէ Սրբազնութեան Ձերում՝  
 «ըստ յանձնարարութեան Տեառն Կառավարչապետի, ու-  
 «նիմ պատիւ տեղեակ գործել թէ՛ նկատմամբ վերոյ-  
 «գրեալ եզրակացութեանց, Նորին Պայծառափայլութիւնն  
 «յիւրմէ կողմանէ անհնարին վարկանի տալ զընթացս  
 «միջնորդութեան Ձերում, որ գծադրեալն է ի Ձերում նա-  
 «ւակի ի 19 անցելոյ Յունուարի:

«Ապաստան առնելով զանձն իմ աղօթից Ձերոց,  
 «խնդրեմ զՍրբազնութիւն Ձեր, ընդունել զհաւաստիւ  
 «իմոց ճշմարիտ յարգանաց և կատարեալ մտերմութեանս:

Սոյն գրութեան հարազատ օրինակ յայտարարու-  
 «թեամբ ի 10 Փետրուարի ընդ համարաւ 9 մատուցանում  
 «ենք Սրբազան Սինոդին ի միջի այլոց ակնարկելով՝ որ  
 «այդ Ուղղափառաց դպրոցաց հրահանգի զօրութիւն մեր  
 «վարժարանաց վերայ ևս տարածանելն՝ արտաքոյ էր ինձ  
 «հաւատացուած յանձնարարութենէն, որպէս զի բոլոր-  
 «վիմբ անհաշիւ գործած չերևիմ, եթէ դէպք պահանջեն  
 «ընդ երկար գրագրութիւնք սոյն առարկայի վերաբերու-  
 «թեամբ: Ահա յայտագրոյ իսկ օրինակ:

«Որպէս արդէն յայտնի է Սրբազան Սինոդիդ ի յայ-  
 «տարարութենէս ուղղեալ ի 22 Յունուարի տարույս  
 «թուահամարաւ 2, նամակաձև գրութեամբս յանուն Նո-  
 «րին Պայծառափայլութեան Տեառն Կառավարչապետին  
 «քաղաքական մասին Կովկասու ի 19 այնր ամսոյ զերկու  
 «րինչ խնդրեցի, մի՛ թողուլ զգործագրութիւն նորոց հրա-  
 «հանգաց դպրոցաց մերոց ցընտրութիւն և հաստատու-  
 «թիւն Կաթողիկոսի ազգիս, և միւս ևս՝ տարածանել ի  
 «վերայ ուսումնարանաց Հայոց զարտօնութիւնս՝ շնորհեալս  
 «հոգևորականութեան Ռուսաց:

«Ի պատասխանի այնորիկ ընկալայ զգրութիւն Կա-  
 «ռավարչի դիւանատան Իշխան Կառավարչապետին քա-  
 «ղաքական մասին Կովկասու յ8 այսր Փետրուարի ընդ  
 «համարաւ 184, որով բացասի երկրորդ մասն խնդրար-  
 «կութեանս՝ առանց ամենեկին յիշատակութիւն ինչ առ-  
 «նելոյ յազագս առաջնոյն, որ յատկական յանձնարարու-  
 «թիւնն էր ինձ ի կողմանէ Կորին:

«Ընդ այսմիկ յարգոյաբար մատուցանելով ի բարի  
 «հայեցողութիւն Տեսրք Ատենակալաց Դորին զհարազատ  
 «օրինակ վերոյիշեալ գրութեան Կառավարչի Իշխան Դոն-  
 «գուկով-Կորսակովի դիւանատանն՝ խօստանամ փութով  
 «այոյժ ծանուցանել և զարարեալ տնօրէնութեանց նախա-  
 «երարաց Ազգային լուսաւորութեան և Ներքին գործոց ի  
 «մասին յետաձգութեան գործադրութեան նորոց հրա-  
 «հանգաց ցընտրութիւն Հայրապետի ազգիս»:

Յանուն Սրբազան Սինոդի պատրաստած ծրարն ար-

քունի նամակատուն ուղարկելէն յետոյ՝ Հայր Մելքիսե-  
դեկ քահանային առինք սուրբ եկեղեցի գնացինք: Այսօր  
մեծի պահոց երկրորդ կիւրակէն էր, որոյ մարգարէական,  
աւետարանական և առաքելական ընթերցմունք պահոց  
օրէնսգրութեան վերայ են մասնացոյց լինում. և սրբոյն  
Ներսիսի Շնորհալոյ բազմիմաստ և խորամիտ երգեր  
նոցա՝ համառօտակի խորհուրդ և բացատրութիւնք նկա-  
րագրում: Ժողովրդապետ հոգևորականի համար, եթէ  
գիտէ նա իւր պարտուց նուիրականութիւն, և նորա լի-  
ուրի կատարման մէջն է տեսնում քաղցրութիւն—հոգևոր  
բաւականութիւն, շատ դժուարին է այսպիսի յորդորակ-  
ներ կարգալու սահմանուած օրերում բացակայ դանուիլ  
իւր հօտիցն: Սակայն ինչ արած, անհրաժեշտ հարկ զմեզ  
զրկած էր այդ հոգեկան մխիթարութենէն: Որովհետև  
նախ՝ մեք քանիցս Ոսկիա-Պետերբուրգի մերազգի սա-  
կաւաւոր ժողովրդեան ըստ մեր հոգևոր կոչման և պար-  
տաւորութեան խօսեցած էինք խրատ, և երկրորդ քանիցս  
առանձինն Պայծառափայլ Իշխան Սիմէոն Դաւթեան Արա-  
մելիք—Լազարիին և առաջնակարգ բանագէտ անձնաւո-  
րութեանց նկատողութիւն արած էինք, ըստ տեղոյն  
յարմար և պատշաճ, արժանաւոր և բարեկիրթ հոգևո-  
րականներ\*) չունենալու մասին, վասն որոյ այսօր յանձ-  
նեցինք Տէր Մելքիսեդեկին ի մխիթարութիւն ժողովրդեան  
բանախօսել, որպէս զի մերայինք փորձով համոզուին սե-  
փական ընդունակ քահանայ ունենալու կարօտութեան  
մէջ: Սիրով ընդունելով մեր առաջարկութիւն՝ Յիսուսի

\*) Արդարև, այս զգալի պակասութիւն Հայոց հոգևորա-  
կանութեան համար առաւել քան զՄոսկուայ Սանկտ-Պետեր-  
բուրգումն է աչքի դիպչում: Եթէ Հայոց Հոգևոր Բարձրագոյն  
Իշխանութիւն ցայս վայր հոգ տարած չէ ունենալ այդ գլխա-  
ւոր քաղաքներում բարձրաստիճան հոգևորական ներկայացու-  
ցիչ, որպէս զի կարևոր յանձնարարութիւնք կարողանայ նորա  
միջոցաւ յառաջ տանել օրինասահման ճանապարհաւ, կարո-  
ղանայ նորա հսկողութեան ներքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ  
հանդիսական ծիսակատարութիւնք, որոնք այսօր գրեթէ օտա-

պատուէր. «եղերուք կատարեալք, որպէս և հայրն Ձեր  
երկնաւոր կատարեալէ» բնաբան առաւ իւր բեմբասացու-  
թեան և գեղեցիկ բացատրութիւններով հրաւիրեց զժո-  
ղովուրդն անդադար ի կատարելութիւն առաքինութեանց,  
բարի վարուց: աստուածսիրութեան, ազգասիրութեան,  
ընկերհաշտութեան և ուսումնասիրութեան թեւակոխել:  
Այս բանախօսութիւն այնքան քաղցր տպաւորութիւն  
թողեց տեղական մերազգի հասարակութեան վերայ՝ մին-  
չև մայրաքաղաքքի ուսւ լրագիրներում գովասանու-  
թեամբ վերաբերուեցան առ պատուարժան ատենախօսն,  
զոր և երկար ժամանակով կյիշատակեն:

Սրբազան պատարագից յետոյ այն ինչ տուն էինք  
վերադառնում, եկեղեցւոյ գաւթում հանդիպեցանք Գե-  
րազանց եղեանցին և գերազնիւ Եւանգուլեանցին, որոնք  
հետաքրքրութեամբ հարցրին Կառավարչապետ Իշխանից

բացած են, անվթար և անփոփոխ կատարել. կարողանայ եկե-  
ղեցական խորհրդոց և հանդիսից պայծառութիւն, կրօնի և  
դաւանութեան նախնականութիւն փառլեցնել են. հոգ տարած  
չեն նոյնպէս և Մոսկուայի և Պետերբուրգի հայազգի շարունա-  
կաբար ունենալ արժանաւոր հոգևորականներ, և այս այն  
ժամանակ, երբ նորանց բաւականաչափ և կանոնաւոր եղանա-  
կաւ տարեկան ռոճիկ է արուում այլ զիւրութեանց հետ.  
Ուր թողունք արքունի բարձրագոյն ուսումնարանաց մէջ եղած  
Հայոց լեզուի և կրօնի ուսման մատակարարութեան անհրա-  
ժեշտ հարկ: Երկու փոքրիկ տպացոյցներ քահանայից անդիսակ-  
ցութեան մասին: Պետերբուրգում ժամարարը ու Վարդանանց  
տօնի օր, սրբազան պատարագից յետոյ՝ ընդհանուր ննջեցե-  
լոց, կամ ազգային բարերարներ յիշատակին կատարուած  
հոգեհանդուտի ժամանակ, աղօթքի մէջ մտղթում է «գթան ի հո-  
գիս Վարդանանց զօրավարաց»: այն ինչ զինուորեալ եկեղեցին  
նոցա դասելով յաղթական սրբերի կարգում՝ նոցա բարեխօ-  
սութեանն է ապաւինում: Իսկ Մոսկուայ հանգուցեալ Գէորգ  
Գ. կաթողիկոսն իւր մահուանից տարիներ յետոյ՝ տակաւին  
յիշուում էր ու պատարագի և այլ քարոզներ մէջ կենդանի-  
ների և ոչ ննջեցեալ բարունապետների կարգում: Սորանք ի  
հարկէ շնորհիւ Տէր Պողոսեանց և Տէր Ղուկասեանց Յովհաննէս  
և Յարութիւն աւաք քահանաների:

սպասուած պատասխանի մասին: Պատասխանեցինք նոյնին յարգութեանց՝ թէ գեներալ Շեպելիով Պայծառափայլ Դոնդուկով-Կորսակովի կողմանէ մեր առաջարկութեան մի մասին բացասականով պատասխանած է. իսկ միւս մասն լուծեան տուած: Յանկացան նորա տեսնել այդ գրութիւն, մեք սիրով և յօժարութեամբ գնալով մեծապատիւ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցի Խոռնն ի ներկայութեան պարոնայց պրոֆեսոր Պատկանեանցի, բժիշկ Շահպարոնեանցի և Խաղիսեանց Յովհաննիսի յանձնեցինք իրենց կարգալու: Ամենեքեան ևս այն թուղթ պակասաւոր գտան, ուստի և խորհուրդ տուին վաղիւն կամ առանձին գրութեամբ, կամ մասնաւոր եղանակաւ ապսպարելով գեներալ Շեպելիովից լրիւ պատասխան Պառնուր:

Մինչդեռ մեք այն պատրաստութեան էինք երբեմն Կովկասեան Փոխարքայ մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեւիչին ներկայանալու և իւր ողորմած ուշադրութիւն հրաւիրելու սրբազան Սինոդի խնդրանոց կատարման համար, պատուէր ենք ստանում գերազանց եղեանցից, որ նոյն իսկ օրն, Փետրուարի 11-ին, Հայր Բարանթարեանց երեկոյեան 8 ժամին անուշտ իրեն ներկայանայ. իսկ մեք այլ ևս Շեպելիովին ոչ թուղթ գրենք և ոչ մարդ ուղարկենք՝ լուծեամբ մնացած հրահանգի գործադրութեան յետաձգութեան մասին տեղեկութիւն հարցնելու: Այդպէս ևս լինում է: Դառն անհամբերութեամբ սպասում ենք քահանայի վերադարձին: Անագան ուրեմն, գիշերոյ 11 ժամին, լքեալ, պարտասեալ վերադառնում է նա և բաժնայն ինչ կորած է՝ ասելով՝ գուժում է դժբաղդութիւնն:

Նորին գերազանցութիւն, շարունակեց ասել. յետին աստիճան վրդովման մէջ է: Դպրոցների հարց վճռուած է խիստ: Այսուհետև աւելորդ յետաձգութիւնն հրահանգի կատարման ազգային ուսումնարաններ բոլորովմբ կմատնէ կորստեան վտանգի: Իշխան Կառավարչապետ արդէն բարձրագոյն հաճութեամբ հեռագրած է Սինոդին, առաջնորդաց և ուսումնական շրջանների կառավար

րիչներին՝ երկու շաբաթուայ ընթացքում գործադրել գալրոցական հրահանգներ, ի հակառակ դէպս բոլոր վարժարանները փակել: Բաւական չէ այդ, Սինոդի անդամք և առաջնորդք անձնականապէս կենթարկուին օրինասահման պատժոց՝ իբրև Պետական ապստամբք, և հոգևոր իշխանութիւնն կգրկուի միանգամ ընդ միշտ անկախ ուսումնարաններ ունենալու արտօնութիւնից: Ձեզ կմնայ միայն Սինոդից խնդրել հեռագրով՝ անյետաձիգ կատարել վերջին հրամանն:

Յանկարծակիի եկած ինձան դեռ ևս լսածներին համար մի գաղափար չկարեցած կազմել՝ շարունակում է բարեկրօն քահանայն: «Ահա ի՞նչպէս է լինում գործի ընթացքը: Ներքին գործոց Նախարար գրով վարկումն է հարցնում Կովկասեան Իշխան Կառավարչապետից թէ՛ իւր կարծիքով ի՞նչ պէտք է առնել Սինոդին՝ որ չէ կատարել հրամանս: Վերջինս պատասխանում է, նախ՝ փակել բոլոր դպրոցներ, երկրորդ՝ զրկել Հայոց հոգևորականութիւն անկախ ուսումնարաններ ունենալու արտօնութիւնից, և երրորդ՝ պատժել Սինոդի անդամներ իբրև օրինազանց, ապստամբ: Սոյն վարկոււմը ուղարկուում է Ազգային լուսաւորութեան Նախարարին իւր եզրակացութիւն տալու: Նա դպրոցներ փակել դեռ կանուխ է համարում, լաւ կլինի՝ որ միանգամ ևս յանուն Բարձրագոյն պատուէր աւանդուի հրահանգի գործադրութեան համար: Հայոց հոգևորականութիւն զրկել անկախ վարժարաններ պահպանելու արտօնութիւնից՝ արգարութիւն չէ, քանի որ ամենայն կրօնական հասարակութիւնք Ռուսաստանում այդ իրաւունք վայելում են, և քանի որ Հայք քրիստոնէական եկեղեցի են կազմում: Սինոդի անդամոց դժուար է ենթարկել օրինական պատասխանատուութեան, ըստ որում նորա՝ Կաթողիկոսի մօտ ապագայում յանցաւոր երևելու երկիւղից, հարկադրուած չեն կտտարել հրահանգ, և ոչ թէ յամառ ապստամբութեամբ: Վերոյգրեալ երկու կարծիք յայտնուում է թագաւոր Կայսեր սոյն Փետրուարի 8-ին, որ բարեհաճում է մակագրել: «Մեք

Համաձայն գտանիւք ընդ ենթադատութիւն Տեառն Նա-  
«խարարին լուսաւորութեան»:

Երբ լուսմ է խօսելուց, հանում է գրպանից հե-  
ռագրութեան նախարտակ՝ որ գրած է յանուն Սինոդի  
մեր կողմանէ Նորին գեազանցութեան իսկ թելադրու-  
թեամբ, և յանձնում է շուտափոյթ ուղարկել: Վարա-  
նում ենք: Սրբազան Սինոդ սրբան և այս կենսական  
խնդիր մեզ է հաւատացած, բայց և պատուիրած է «խոր-  
«հրդակցութեամբ ընդ երևելի անձինս ի մերազնէից՝ որք  
«ի Սանկտ-Պետերբուրգ, հասուն մտօք և խոհական մի-  
«ջոցօք ղելս հնարից գտանել»: Ո՞վ է այն երևելի անձն  
«ի մերազնէից այս խառնակութեան Բաբելոնում, եթէ ոչ  
միայն Պարոն Եղեանց, որոյ ազգասիրութեան, անձնուի-  
րութեան և խոհականութեան համբաւ՝ ոչ միայն Ռու-  
սաստանի բոլոր հայաբնակ քաղաքներին է յայտնի, այլ  
և արտասահմանի: Որ ի հեռուստ իբրև ի մօտոյ ղեկա-  
վարում է մեր ազգային-եկեղեցական շատ կարևոր և  
կենսական գործերն: Որոյ կոչմամբ Մակար Սրբազան  
Սրբեպիսկոպոսի ի Պետերբուրգ չղնալն 1883 թուին՝ այն-  
քան մեծ և անթողլի յանցանք դրեցաւ, մինչև դպրոց-  
ների այս կացութեան հասնելուն միակ պատասխանատու  
ճանաչել նորան: Որոյ մատնացոյց նախագծով բոլոր ժա-  
մանակ գործած ենք և մեք այս անձանօթ մայրաքաղա-  
քում: Հաւաստեալ գիտէինք, որ Սինոդ բնաւին մեզ լսել  
չի կամենար: Գիտէինք՝ որ հասարակաց դատաստանի  
առաջ պարտաւոր կմնանք: Գիտէինք ևս՝ որ դիւրին չէր  
մեզ ապագայում արգարանալ առաջի խղճի, ժողովրդեան  
Հայոց և Հոգևոր իշխանութեան, եթէ զանց առնենք  
համազգային Մենտորի խորհուրդ: Ուստի բարեք համա-  
րեցինք ընտրել յերկուց չարեաց զփոքրագոյնն, մեր անձ-  
նական համարումն տալ անարգանաց, քան ազգային ու-  
սումնարանաց ապագայն՝ անչուշտ վտանգաց: Նոյն իսկ  
դիշերը, ժամ 12-ին, ընկճուած տրտմութեան և յուսա-  
բեկութեան ծանրատար բեւին տակ՝ որ այնքան աշխա-  
տութիւնք և չարքաշուծիւնք ի զուր անցին, գեղեցիկ

յոյսեր անձրևոց պղպճակի նման պայթեցան, հարուածող  
ձեռն չկատեցաւ, հեռագրեցինք առ Սրբազան Սինոդ:

է.

### Յ Է Ջ Մ Ի Ա Ժ Ի Ն

#### Հեռագիր Սինոդին

«Խնդրարկութիւնք մերժեցան, սպառեալ զամենայն  
«օրինական միջոցս և օրինակաւս այսու լցուցանելով զիւրն  
«պարտիս, մնայ Սինոդիդ առանց հեռաւոր դիմագրու-  
«թեանց կատարել զՊետականն հրաման՝ զարտայայտեալն  
«հեռագրաւ, և հեռացուցանել զանխուսափելի ծանրա-  
«զոյն հետևանս: Պատրաստիմ՝ յելանել, խնդրեմ հե-  
«ռագրել զարարեալ տնօրէնութեանցն»:

Հետեւեալ օրն, ի 12 Փետրուարի դարձեալ հաճու-  
թեամբ պարոն Եղեանցի առաւել բացայայտ տեղեկագիր  
ենք ուղարկում յանուն Սինոդի ընդ համարաւ 11, որոյ  
հարազատ օրինակն է. «Համաձայն խոստմանս գծագրելոյ  
«ի յայտարարութեան իմում ի 10 ամսոյս համարաւ 9, որ  
«յազագս տալոյ զլրացուցիչ տեղեկութիւնս ի մասին յե-  
«տաձգելոյ զգործադրութիւն կանոնադրութեան, ունիմ  
«չնորհ ցաւօք սրտի յայտ առնել թէ՛ սրպէս տեղեկացայ  
«բանաւոր եղանակաւ արդէն հեռագրական պիտակօք  
«արարեալ է տնօրէնութիւն ըստ Բարձրագոյն հաճու-  
«թեան յանուն Սինոդիդ յազագս անյապաղ գործադրու-  
«թեան կանոնադրութեան»:

«Ըստ իմուսն կարծեաց ի կիր արկան ի կողմանէ Սի-  
«նոդիդ համայն օրինական միջոցք ի կատարումն սրբազան  
«պարտուց իւրոց առաջի նորօգ ընտրելի ծայրագոյն Գլխոյ  
«ազգի և ամբողջութեան նորին. իսկ ապագայ դիմագրու-  
«թիւն Դորին վասն այսր առարկայի ունի համարիլ ան-  
«չուշտ ապստամբութիւն իմն ի դէմս կառավարութեան և  
«յառաջ բերել զգառն հետևանս, յորոց սակի համարիմ»:

«իբրև մերձաւորապէս տեղեակ հանգամանաց ամբողջ  
 «գործոյս, փակումն ներկայ դպրոցաց, զրկումն Հոգեւոր  
 «իշխանութեան յիրաւանց ունելոյ զնոյնպիսի դպրոցս  
 «յապագայի և ենթարկումն Ատենակալաց սրբազան Սի-  
 «նոդիդ օրինական պատասխանատուութեանց անձնակա-  
 «նապէս: Ուստի ամենախոնարհարար խնդրեմ զփութա-  
 «ջնորհ տնօրէնութիւն Սինոդիդ յազդարս բառականապէս  
 «ի կատար ածելոյ զԲարձրագոյն հաճութեամբ տուեալն  
 «կանոնադրութիւն առանց իրիք ժամավաճառութեան և  
 «պատճառաբանութեանց, և զկատարմանէն յայտ առնել  
 «ըստ պատկանելոյն. զորպիսի վարկումն վստահիմ ի մէջ  
 «բերել իբրև կատարումն վերջնական պարտուց ըստ արա-  
 «բեալն ինձ ի կողմանէ Սինոդիդ յանձնարարութեան»:

Սորանից յետոյ նոյն Փետրուարի 13-ին ստանում  
 ենք սրբազան Սինոդի նոյն օրուայ քարշած հեռագիրն՝  
 որով պատուիրուում է. «Ընդ ստանալն սոյն հեռագրոյ  
 «աճապարեցէք յէջմիածին ց20 ամսոյս: Կոչեցեալք են  
 «նոյնպէս համայն վիճակաւոր առաջնորդք»: Նոյն իսկ օրն  
 «զկնի միջօրէին 11 ժամում, մեք հեռագրաւ պատասխա-  
 «նում ենք սրբազան Սինոդին. «Հասանել ց20 ամսոյս չկա-  
 «րեմ. թախանձագին տամ խորհուրդ կատարել զպահանջն  
 «ի խուսափումն ի չարեաց՝ որք պատրաստին, զկարգա-  
 «դրութենէն խնդրեմ հեռագրել, սպասեմ պատաս-  
 «խանւոյ»:

Մինչև վերջին պատուէրի հասնելը՝ մեք վերջին այցե-  
 լութիւն ենք տալիս բոլոր ծանօթներին: Ներկայանում ենք  
 Նորին Կայսերական Բարձրութեան՝ Մեծ Իշխան Միխայէլ  
 Նիկողայեւիչին, երբեմն Փոխարքայ Կովկասու, որ քառօրդ  
 ժամու չափ խօսակցութեան մէջ՝ մտաբերում է իւր մեր  
 խնդրանօք Բորժոմի Հայոց հասարակութեան համար եկե-  
 ղեցւոյ տեղ որոշելն և նորա հիմնարկութեան օժութիւնն  
 կատարած ժամանակ իւր Սենեկտպետ հանդիսական ու-  
 ղարկելը: Բայց մեր առաքելութեան պաշտօնի համար  
 խօսք չենք բանում՝ գործ վճարուած համարելով, թէ և  
 հասարակաց կարծիք էր, որ Կայսերազունք այդպիսի խընդ-

րում միջամտել չեն բարեհաճիլ<sup>1)</sup>:  
 Ներկայանում ենք վսեմափոյլ կոմս Յովհաննէս Դաւ-  
 թեան Դելիանովին և որպէս հայ եկեղեցական՝ իրաւունք  
 ենք համարում մեզ ասել ամօթահար սրտաբեկութեամբ.  
 «Թո՛ղ տուէք ինձ՝ Ձերդ բարձր Գերագանցութիւն, յայտ-  
 «նել հոգւոյս անսիրտիկ ծանրատար վիշտն՝ որ պատուի-  
 «րակութիւնս դպրոցական խնդրի մասին չյարգուելով  
 «բարեխնամ Կառավարութեան կողմանէ՝ հարկադրուած  
 «եմ արտասուաթոր աչքերով վերադառնալ Հայ հասա-  
 «րակութեան մէջ: Դուք՝ իբրև մերձաւոր հարապատ ազ-  
 «գապարձանք Լազարեանց ազգատոհմին, դժբաղդաբար  
 «չըջապատուած լինելով դժուարին հանգամանքներով՝  
 «Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյն — հակառակ Ձեր հոգ-

1) Երբէք և երբէք չենք կարող մոռանալ Նորին Կայսերա-  
 կան Բարձրութեան դառնութեամբ սրտի նկատմունք՝ Էջմի-  
 ածնի անշքմանկատ գործողութեանց մասին, որոց մէկը լինելով  
 և յետագայ պատմութեամբ՝ խիստ շեշտով ակնարկեց այս խօս-  
 քերով. «Երևակայեցէք ձեզ այսպիսի մի անսխորժ գրութիւն:  
 «1877 թուականին մեր զօրքերի զիբքերն ակնարկելով՝ Աղեք-  
 «սանդրապոլից սահմանադժի ուղղութեամբ հասնում եմք Իգ-  
 «գիւր: Հարկաւոր կարգադրութիւն անելէն յետոյ՝ գալիս եմ  
 «Վաղարշապատ: Գաւառապետի տան հանդէպ ինձ զիմաւո-  
 «րում են Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողները թիւրքա-  
 «կան կարմիր ֆետեր զլիններին: Մեր զինուորներ սահմանից  
 «զուրս կառուում են տաճիկ զօրքի հետ, և անձ մեզ պատու-  
 «հում են տաճիկան տարագի նոր մարդիկներ մեր ըուն երկրի  
 «մէջ: Այս իրողութիւնն շատ անար ասպարուութիւն արեց  
 «մեզ վերայ, և մեք նկատեցինք այդ մասին դեներալ Ազգարեւի  
 «միջոցաւ ամենայն Հայոց վեհափառ կաթուղիկոսին»:

Թէպէտև՝ 1862 թուականից ի վեր, մեշա դարսերը պաշ-  
 տօնավարելով միայն 1874/3 ուսման տարին գտնուած եմ Մայր  
 Աթոռում ճեմարանի տեսչութեան և ուսուցչութեան պաշ-  
 տօններով, ուստի և չեմ ակնատես աշակերտների տաճիկան  
 գլխարկներ կրելուն, սակայն և այնպէս՝ շատերից լսած եմ այս  
 անսխորժ դէպքի մասին, որոց պատճառաւ և ծագած գրա-  
 դրութիւններ Տեր Գէորգ Գ. Հայրապետի: Սա իւր հաւանած  
 բացատրական պատասխան տալուց յետոյ՝ վերջ ի վերջոյ կար-  
 մեր ֆետերը փոխանակել է սեաւ թաւիչ արախիւնների:

ւոյ յօժարութեան, անտարակոյս հաւատացած եմ, դժուարացաք մի անմտանալի ծառայութիւն—օգնականութիւն Վատուցանել, ինչպէս յաւերժայիշատակ Իշխանապետներն: Վիտեմ, այս անաջօրութիւնն Ձեզ ևս դժուարին է տանել: Այս խօսքերին հետեւելով փոքր ինչ լուծիւն՝ Նորին վսեմութիւնը տեղից վեր կացաւ և անհաճոյ արտնայութեամբ երկու ձեռքեր խողովակաձև շրթունքներին մօտեցնելով՝ յետ քարշեց և ասաց. «Այս խնդրում ա՛յ կոռավարութիւնն է մեղադրելի, ո՛չ Իշխան Կառավարչապետ, ո՛չ Ներքին դործոց Նախարար Տալստայն և ա՛յ ես՝ որ Դուք նպատակի չէք հասնում, այլ այն ջերմեռանց մերազգի ծառայողներն՝ որոնք երկու բանակի միջավայրում կանգնած փողահարի դեր են կատարում, «մէկին յարձակման և միւսին փախուստի ազդանշան տալով՝» Այժմս անցած է այլ ևս ժամանակ Կոյսերական հարանութեամբ արտած հրահանգը չգործադրելու. դուցէ

1) Տէր Նախարարի ընդդժած ակնարկն՝ ըստ մեր կարծեաց և ըստ հաւատելի կայութեանց զիտակ անձանց, վերաբերում էր Նորին Վերադանցութիւն Կարապետ Ազեանցին՝ որ կազմողն է եղել թէ՛ Հայոց եկեղեցական-ձխական մի և երկգոտեան վարժարանների նախագիծ և թէ՛ այլ հպտակ քրիստոնեայ ազգերի գաւազանց տարրական կրթութեան ծրագիր և է վարձատրութիւն ստացել է բարձրակարգ շքանշան: Այս դործողութիւնն կատարուած է այսպիսի հանգամանքներում: Ներքին դործոց Նախարար՝ համաձայն զեկուցման Կովկասու Կառավարչապետի—ըստ խնդրոց Հոգաբարձու պարոն Նանովսկու, ցանկացել է անդրկովկասու ազգերի կրթութեան նպատակաշարմար ուղղութիւն տալ, ուստի և հրաւիրել է լուսաւորութեան Նախարարին՝ համապատասխան հրահանգ կազմել ազգահասակների գաստարակութեան համար Նորին վսեմափայլութիւն Կոմս Ռիչկանովն՝ զոյն աշխատութիւն յանձնարարել է պարոն Ազեանցին՝ իբրև գերեկար—կարգաւորի կրթական բաժանման ազգաց: Երևի վերջինս չհարելով լստ ստիւել այդպիսի առաջարկութեան կատարումից, ակամայ կամօք ամենայն հպտակ ազգերի կրթութեան համար մի կշիռ և չափ տալով՝ ներքին գիտակցութիւնից խցճահար՝ տանջուում է և հետամուտ լինում հնարների, զեւրգ և իցէ այդ ակամայ վերապահն ուղղել:

առուրբ էջմիածնի Մինոզն յանձն առնի կատարել Տէր Նախարարի պահանջ. իսկ ապագայ ընտրելի Կաթուղիկոս դուցէ առաւել բազդաւոր լինի իւր առաջարկների կատարման վերաբերութեամբ: Դուք՝ իբրև եկեղեցական անձնաւորութիւն և զրկանքի սովոր, լայն սիրտ համբերութեամբ եղարձէք ձեր վիճակի ժողովրդեան մէջ և յուսադրեցէք ձնորան գալոց բարեփոխութիւնների մասին. մշտական բան չլիայ աշխարհիս մէջ, մանաւանդ որ ես դժուարանում եմ տեսչութեանս ներքոյ առնել Հայոց եկեղեցական թխական վարժարաններն: Ի դէպ՝ Դուք Մոսկուայից պիտի անցնէք, պարոն Յովհաննէս Ստեփաննոսեան Յովնանեանցին այժմս իմ յանձնարարութեամբ յորդորում են իւր ուղարկած պատգամաւորներ, որպէս զի Տփլիսու վարավանսարան միայն և եթ իւր ամուսնոյ յիշտակին ձուլիբելիք ուսումնարանին կտակէ՝ առանց ժառանգների թմանակցութեան: Այդ վարժարանի ապագայն ապահով չե բազդաւոր կլինի, հայերին մեծ ծառայութիւն կանի. արովհեաև նա Կաթուղիկոսի տեսչութեան ներքոյ է: Անչնչտ կհաստատուի Օգոստափառ Կոյսեր կողմանէ նորա վտակաւանդութիւնն՝ եթէ նիւթականով ապահով լինի: «Օգնեցէք այն պարոններին՝ բարեգործ Յովնանեանցին համոզելու, և Դուք միխթարութիւն կունենաք տեսնել մի լճտատե դպրոցական հաստատութեան դռներ՝ միջնակարգ ուսումնաւորութեան համար, հայազգի օրիորդների

Վտան այնորիկ է՝ որ նա քանիցս առաջարկած է եղել Սրբազան Մակար արքեպիսկոպոսին՝ երբ սա Մոսկուայ է եղել Օգոստափառ Կոյսեր թագադրութեան առթիւ, որպէս զի բարեհաճի Պետրեբուրգ դնալ, և տակաւին վերջնական հաւանութիւն և որոշումն չստացած՝ գպրոցական նոր կանոնադրութեան համար բարեփոխութիւններ հայցել Նախարարաց խորհուրդից: Իսկ վերջինս լուսապէս ճանաչելով Կառավարութեան քաղաքականութիւնն, որ անիշխանութեան ժամանակն է ձախորդ պահանջներ անում, հրաժէշա տուած է այդ հրաւերին համակերպելէն՝ ընտրելի Հայրապետին վերապահելով այդ օրինակ միջամտութեանց արտօնութիւն:

առաջ բացուած Կտակաւանդ պայմանով կայ բացուած  
 և և Աստրախանում՝ Աղաբաբեան վարժարան՝ ինչպէս Չեզ  
 արդէն յայտնի կլինի: Աշխատեցէք՝ Հայոց ազգի մէջ  
 հարուստ անհատներին համոզել, որպէս զի մասնաւոր  
 արտօնութիւններով ամէն տեղ, մահաւանդ մեծ քաղաք-  
 ւներում, դպրոցներ բանան և եկեղեցական Տեսչութեան  
 Վերահաստիւթեան թողնեն նոցա կառավարութիւնն: Իմ  
 Վերջինս Չեզ՝ որպէս հայ մարդոյ սրտով խօսողի յանձ-  
 անարարութիւններ են. յուսամ փոքր ինչ սփոփուած վե-  
 րադառնաք և աներկիտ լինիք՝ թէ այսպիսի կտակների  
 հաստատութիւնք իմ մասնակցութեամբ անշուշտ կ'յա-  
 յջողին:

Շնորհակալիքս յայտնելով Նորին բարձր Գերազան-  
 ցութեան՝ վերջին այս մտերմական զրուցատրութեան մա-  
 սին, ածապարեցի իշխան Սիմէոն Գաւթեան Աբամելիք-  
 Լազարեին տալ հրաժեշտի ողջոյնս և մատուցանել սրտա-  
 գին գոհունակութիւնս նորա առանձինն մարդասէր վե-  
 րաբերմունքի համար դէպի պանդուխտ հոգևորականներս:

Ներկայանում ենք կնեազ կանգակուղէնին, որ սիրե-  
 լաբար ընդունելով քաղաքավարական խօսքերով կամենում  
 է մեզ վերայ եղած ծանր տպաւորութիւնք ցրել: Ներ-  
 կայանում ենք Նորին Գերազանցութեան Կարապետ Յա-  
 րութիւնեան Եզեանցին և դռնում արդարեւ վշտահար  
 դրութեան մէջ, ինչպէս մէկ բազմաշխատ այգեգործ իւր  
 բազմօրեայ վաստակ և քրթնաթոր ուշխատութիւն կտեսնի  
 մէկ ժամու մէջ կարկտահար ոչնչացած: Հնար չունինք,  
 ասում է նա, ամենայն կարելի ուշխատութիւնք գոր-  
 ծադրուեցան, ոչ խիզ, ոչ ժողովուրդ Հայոց և ոչ Հա-  
 յաստանեայց եկեղեցւոյ Քահանայապետ չունին իրաւունք  
 մեղադրել Սինոդին. կմնայ անթերի կատարել հասանգը  
 մինչև Աստուած յաջողէ Կաթողիկոսի հաստատութենէն  
 յետոյ վերստին այս խնդիր շարժելն: Գրեցիք Սինոդին  
 հեռագիր և յայտարարութիւն՝ զոր ես թելադրած էի.  
 Երբ ստորասական պատասխան ստացաւ՝ յաւելացրաւ.  
 Պարոն Եւանգուլեանցին ճանապարհորդեցինք, ես յանձ-

նեցի նորան Մոսկուայից անպատճառ Տիխիսի առաջնորդ-  
 Արիստակէս Եպիսկոպոսին հեռագրել \*), որպէս զի առանց  
 յետաձգութեան կատարուի Կառավարչապետ Իշխանի հե-  
 ազրով պահանջ: Իւրք իմ անունս պաշտօնական կամ  
 մասնաւոր նամակների մէջ չէք ցոյց տուած՝ որ ես այս  
 գործին օգնականութիւն եմ արած. որովհետև կարող էր  
 պատահել, որ Չեզ ծրարներ նամակատան մէջ բացուէին  
 և ընդօրինակուէին: Յիշեցինք Մակար Սրբազանի դրու-  
 թեան նախատես խօսքեր. «Անձինք՝ առ որս խնդրէք տալ  
 դիր յանձնարարութեան, գուցէ առ երկիւղի չյօժարես-  
 ցին յայտնապէս տեսաւորիլ ընդ Չեզ», և նորա նկատելի  
 անհանգստութիւնն տեսնելով՝ ոչ ասացինք, թէ և մէկ տեղ  
 միայն առ նոյն Արքեպիսկոպոսն ուղղած նամակի մէջ  
 դրած ենք՝ «այլ սատար դորձոյն կայ Գերազանց Եզեանցն,  
 այլ արդարեւ խոհական, ազգասէր և անաչառ»: Այն և  
 մեր ամէն ժամանակ դիշերախառն այցելած ենք նորան,  
 նոյնպէս մարդ ուղարկած՝ կասկածաւորութեան տակ  
 չդնելու համար և փոխանակ բարոյն չարիք առթելու:

Որովհետև ժամ առ ժամ Պետերբուրգի անմխիթար  
 դրութիւնս՝ մանաւանդ Դեմուտ հիւրանոցի շրջափակ  
 բանդարգելութիւնն, ախուր և հեղձուցիչ աղբեցութիւն  
 էին անում մեզ վերայ, և որովհետև արդէն նոյն իսկ  
 Փետրուարի 13-ին յանձնել էինք մեր 12 թուահամարաւ  
 յանուն Սինոդի յայտարարութիւն փոստային, որով վերա-  
 դարձուցինք ամբողջութեամբ ի ձեռնարկութիւն և ի հրա-  
 հանգութիւն մեզ ուղարկուած դպրոցական խնդրոց մասին  
 կազմուած գործերը. վասնորոյ ոյլ ևս անտանելի համա-  
 րելով սպասողութիւնն՝ ուրբաթ օր ընդ երեկս, ամսոյն  
 15-ին թողինք անկարեկից Սանկա-Պետերբուրգ, միւս օր

\*) Թէ յերաւի հեռագիր քարշուած էր Գերապատիւ Արեւ-  
 տակէս Եպիսկոպոսին՝ մեր ի Սուրբ Եջմիածին ստուգեցինք նո-  
 բանից ի ներկայութեան Սինոդական անդամ Սրբազան Յովակիմ  
 և Երեմիա Եպիսկոպոսաց և Պրոկոբորեւ ստուգեցինք ի Տիխիսի  
 և պարոն Գևորգ Եւանգուլեանցից, որոնք վկայեցին ճշմարտու-  
 թեանն:

ընդ երեկս 9-ն ժամին հասանք Մոսկուայ և սրբազան Սինոդից հեռագրաւ խնդրեցինք՝ առ մեր վերջին հեռագրութիւն տալիք պատասխանն այն տեղ յեւրոպայ հիւրանոց ուղղել, զոր և ստացանք ի 18 Փետրուարի, որով մեզ պատուէր էր աւանդուում վերադառնալ ուղղակի Աստրախան:

Ռուսաստանի հին մայրաքաղաքում երկար մնալու գործ չունէինք, 16-ին մասնք 19-ին ելանք: Երեք օր բաւական եղաւ մեզ տեղւոյն Հայոց վերացման Սուրբ Խաչի փոքրիկ եկեղեցին տեսնել, նորա զգեստներ, կալուածներ, կալուածագրեր, զարդք և անօթեղէնք, մասունք և սրբութիւնք, յիշատակարանք և դպրութիւնք աչքէ անցուցանել և գովել Պարոն երեսփոխան Փանիեանցի ուշադիր և հռչակաւոր կարգապահութիւնք, հոգացողութիւնք: Տեսնել Լազարեանց ազգապարծանք իշխանապետաց արևելեան լեզուագիտութեան ճեմարանն՝ իւր հարկերաւոր ձրիավարժ և թօշակատու որդեգիր աշակերտներով, բազմութիւն ուսուցիչներով և վերակացուններով, հարուստ գրանցով և հաւաքածուներով, մաքրափայլ ննջարաններով, դասարաններով, հիւանդանոցով, սեղանատնով և ընդունարաններով, ի պսակ ամենայնի իւր աշխոյժ, բազմահմուտ և մարդասէր գերազանց վերատեսչով—Քանանեանց, և յիշատակաց մատենում արձանագրել օրհնութիւն նորա կառուցանողաց սուրբ, անմահ յիշատակին, երախտագիտութիւն նոցա բարեշատաւից իշխանազուն ժառանգաց: Տեսնել հին, միջնադարեան բարուց և ճարտարութեան դրոշմ ու ճաշակ կրող կառավարանք: Ազատութեան երկրացիկ, վերամբարձ դրունք, կրեմլէի պալատն և բազմամասն սրբարան, ուր լինում է Կոյսերաց թագադրութիւն, սրբայթնդանօթ և իւր պատուակից թագաւոր զանգակ. ի յազմանակ աւարուած հաղարաւոր մեծ և փոքր թնդանօթներ, մեծ և փոքր ազգայ սեփականութիւններ: Տեսնել բիւրաւոր ազգի ազգի դրօշակներ և ծոպակիր լուսնավառներ, որոնք նոյնպէս մրցանակաբաժին եղած են ռուսական անվեհեր զօրականին: Տեսնել Փրկչական վե-

հասքանչ Տաճար, ուր Ռուսաստանի անբաւ հարստութիւն: մտաւոր և նիւթաւոր, հանքային և դանկային իւրբաւականաչափ հաւաքածուն զարմանահրաշ ներդաշնակութեամբ մթերած է ի յիշատակ այդ մեծ ժողովուրդեան որդւոց անցելոյն, ի գովեստ ներկային ի պարծանս ապագային և ի շլացողութիւն համօրէն տեսողաց, տեսնել և մտովի յիշատակել,—աշակերտաց առ աստուածային Վարդապետն ասացուած «տես սրպիսի են քարինքս և սրպիսի շինուածք»: Տեսնել Աստրախանի Հայոց պատուաբեր Պարոն Սարգիս Զանուսեանցին իւր տիրապարգև, հրեշտակագեղ դասրիկներով, վայելել նորա առատ սեղան սրտի սիրոյն և համագամ կերակրոցն և ստանալ յօգուտ օրիորդական դպրոցին իւր հայրենի քաղաքի՝ մի տոմսակ արևելեան փոխառութեան հազար ռուբլի արժէքով: Տեսնել վերջապէս և մեծապատիւ Յովհաննէս Ստեփանոսեան Յովհաննեանց և ըստ սիրալիր յանձնարարութեան վսեմափայլ Դեղիանով լուսաւորութեան Նախարարի՝ յորդոր կարգալ լսել գերազնիւ Շահպարտեանց բժշկապետի և մեծարգոյ Եւանգուլեանցի խորհրդոց:

19-ին, յուզի անկանք, մինչև կայարան քանի մի ծանօթք, քահանայք և ուսանողք ընկերեցին: Զմեռնային տխուր եղանակ, ձիւնաթաղ անհուն դաշտորայք, գեղաշիտակ մշտականաչ գիհները չագեկառաց արշաւասոյր ընթացից հետ փոփոխակի շրջընում էին մեր մտապատկերներ և երբեմն ի մօռացօնս տանում, ցնդում, ցրում այն զազիր գարշահոտութիւնք՝ որք բնակակից են բազմութիւ ծխող ուղևորաց, մանաւանդ մաքրութեան թշնամի երբայականաց: 20-ին հասանք Գրեհաղի: Որքան թարմ անմօռացութեամբ յիշում ենք երկու ամիս յառաջ այս բարեբաղդ տեղ չարաբաղդութեամբ քաշած ճանապարհորդական, սովորական տկարութեան սպանիչ յիշատակ, երբ ժամերով տագնապում էինք, ոչ բժիշկ կայր և ոչ փրկութիւն: 21-ին հասանք Յարիցին, տեղւոյն փոքրաթիւ պատուելի հայազգի գործակատարք և վաճառականք դիմաւորեցին, սփոփանք գտանք, հրաւիրեցին ճաշկերոյթի:

զոր յատկապէս կայարանում ի պէտս մեր պատրաստած էին, յայտնեցինք շնորհակալութիւն, փութացինք փոստային իջևանն՝ ուր թողած էինք կառք խաղտուածք ամրացուցանելու, հատուցինք պարտքերնիս և ընդ երեկս ճանապարհորդեցինք դէպ ի Սարեփթայ՝ որ իւր Սիդոնացուց համանունին յիշատակ կարող է պարծիլ՝ գեղեցիկ բայլզամի և մանանելսի գործարաններով:

Վերադարձին ճանապարհ չէր այնչափ հեշտին՝ որչափ յառաջընթացին: Յերթին ձմերան սկզբի ամիս իւր հզօր զօրութեամբ ձուլած, միապաղաղ, նոյնատարր գործած էր հողային բոլոր կոշտեր, քարեր, մանրամուղ փոշիներ, այնպէս՝ որ անհամար թաւալող երկաթահեց անիւններ փայլուն հայելուղի դարձրած էին, ամարնային ճահճուտ և փոշոտ ճանապարհներ՝ յորս տուընջևան և գիշերոյ լուսաւորը ախորժ հաճութեամբ նշողարձակ ճառագայթից անդրացողուն կտանային: Ի դարձին ուժասպառ Փետրուար եղանակին յոխորդ ասպատակին տեղի տուած ձիւնահար, անձրևաբերք, ջերմաշողիկ յաճախակի ի կօիւ իրերաց գալով՝ ապականած, շաղախած, իրար խառնած էին հակառակ բնութեամբ տարերք, հող և ջուր—պինդ և կակուղ—հաստուածեղէն եղբարք՝ յորս ոտնակոխ ռահահորդ իբրև յորդայթ կրօնուէր, կթակարթուէր և կկապուէր: Այսպիսի ժամանակ՝ ոչ մեք և ոչ այլք, չտեսնենք այլ ևս կիրեատ և Զամիան—իջևանների մէջ ինկած ճանապարհ: Ուղիդ 7 ժամ տեեց մէկէն մինչև միւս կայարան հասնելնիս: Գիշերոյ ժամ 8-ին ելանք, կառավարք արբած, երկվարք վաստակած, ձիւնախառն անձրև բռնած. ցուրտ հիւսիս փակարանէն դուրս վազած, աղջամղջին գիշեր տիրած, ահ ու դողի արհաւիրք զմեզ շուարած, կշարժենք, կերթանք, կյառաջենք, բայց դեռ չենք հասնիր:

Ուր ուրեմն Փետրուարի 26-րդ օր, ցերեկուան 11 ժամին հասինք Վոլկայ գետոյն աջ ափ, Աստրախանին յանդիման: Փոստային իջևանէն վտաւանաչափ վեր ենք: Կառք և ծանրութիւնք տակաւին անդր յալիս Գայլ գետոյն փոխադրել անհնարին են: Զարմանախառն զուգա-

դիպութիւն, 26 Դեկտեմբերի ելք յԱստրախանայ՝ նոյն թիւ Փետրուարի մուտքս 26 Դեկտեմբերի նոր և անհաստատ կամուրջ ձմերան—սառոյց. նոյն թիւ Փետրուարի պահն միայն միջաբեկ և անհարթ ընթացք: 26 Դեկտեմբերի յաջմէ և յահեկէ զգուշաւորք կառաջնորդեն զմեզ յայնկոյս, նոյն թիւ Փետրուարի յաջմէ և յահեկէ ընդ սառնակոյտ ալիսն ուղղաձիգ առասանք կապահովեն զմեր երերուն փրկութիւն, զոր թիաքարչ նաւակն տասնաւոր նողայից խառնաչփոթ աղաղակաւ յինքն բարձած դանդաղ դեղերանօք ընդ միջաբէկ սառնահոլով գետոյն հօսանս հասոյց յափն ձախակողմ: Փնօք նախախնամողի առաջնորդական ձեռին. «Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր և ևհան զմեզ ի հանգիստ»:

Բայց գերեզմանի ափեր չհասած մարդոյ համար կայ հանգիստ. ոչ երբէք: Ինչպէս մինչև Սանկտ-Պետերբուրգ բանիւ և գրով՝ հարիւրաւոր ստութեան բարուրանքներ մեր վերաբերութեամբ տարածուած էին՝ շնորհիւ սուտակասպաս բամբասասէրների, նոյնպէս և մինչև Աստրախան հասած էին այլ ընդ այլոյ անհեթեթ զրոյցներ: Առաջակայ դատաւորի կիւրակէն մեծի պահոց եկեղեցի ենք իջնում բաւականին բազմութիւն, արք և կանայք, ծերք և տղայք հետաքրքիր մեր շուրջն են դառնում: Որքան անձկալից կարօտով սպասուած ենք եղած մեր հօտի բարեպաշտօն ժողովրդէն՝ անցուցանում ենք մեր մտքէն. և ամենայն նեղութիւն մօռացած ենք համարում նոյա դատարկ սիրային ակնարկի առաջ: Սակայն որքան մօտատես միամիտ ենք՝ ծաղկանց փունջին ներքև դարանած ատելութեան թունաւոր օձ չտեսնելու: Այդ հետաքրքիր և թափանցիկ հայեացք որսնում են մեր պարանոցով քարշուած տեսնելու Սրբոյն Աննայի առաջին կարգի շքանշան՝ զոր մեք լիովին ի վարձ վաճառման աղգային վարժարանաց ստացած ենք ռուսական Պետութենէն, ինչպէս ընդհանրացած հաւանական կարծիք եղած է: Տեսնել ի մեզ վարձատրութիւն այն Վեհապետի, որոյ երեսաց տեսութեան անգամ՝ իբրև արհամարհ ոք, ար-

ժան չբռնուեցանք: «Յուցից ձեզ, ում նման է ժողովուրդս այս, նման է մանկաւոյ՝ որք նստիցին ի հրապարակս և ասիցեն, փոզս հարաք ձեզ և ոչ կաքաւեցիք մեզ»: Յանկաւք ի բոլոր սրտէ Հայ ժողովրդեան ամենակերպ յաջողուած և բազմաւոր գործիչներ՝ որք մաքերով անգամ չանցուցած առաքինութեանց Տեարք համբաւութիւն և ըստ հռչակին գնահատուին, ըստ որում տակաւին իրականութիւն մէկ կողմ՝ թողած՝ երևակայականով կգրագուինք:

Ը.

Ներկայ հաշուէտուութիւն ընթերցողներից իւրաքանչիւր ոք իւր հայեացքին և համոզման համաձայն՝ կգայ մէկ եղբակացութեան, այն է՝ կամ անմեղադիր առնել զմեզ, կամ դատապարտել: Վասն զի մեր գործողութեանց մերձաւորապէս տեղեակ եղողներ յօգուտ և ի վնաս մեր՝ ձայն բարձրացրած են գրական ասպարիզում: Դոցանից առաջինն է Տփլիսից տարւոյս Մարտի 1-ին Կոստանդնուպոլսոյ Թէրճէմանը էֆրեար հայատառ թրքաբարբառ լրագրին ուղարկած թղթակցութիւն, որ տպուած է նոյն ամսոյ 28-ին նորա 2291 թուահամարում, և շարունակելի լինելով մեզ ոչ ստորագրութիւնն է յայտնի և ոչ բովանդակութիւնն, բայց յիշուած համարում տպուածն, որ թէև արգարացուցիչ մեզ, սակայն այլատարազ խօսքերով ճշգրտանման է քան ճշմարիտս երկրորդն է, Արեւելք լրագրին իբր թէ երևանից սոյն Մարտի 12-ին ուղարկուած յօդուածն, որ տպագրուած է նոյն ամսոյն 23-ին նորա 367 թուահամարում երեք ատողանիչ կրող թաքնութեամբ, որ գլխովին դատապարտող է մեզ ինքնահար, մտացածին սուտերի վերայ հիմնուելով: Վերջին թղթակցութիւնս ևս Տփլիսից է, ինչպէս ուշագիւր ընթերցող կարող է ռից և տեղեկութեանց դասաւորութեանէն ճանաչել, մանաւանդ սա կտորից. «Էջմիածնի Պրովուրորին հեռագրով կանչել են Թիֆլիս, շուտով պիտի

գայ»: Կարող է ճանաչել և ժամանակի սղութենէն՝ որ 11 օրուայ մէջ երևանից Պոլիս նամակ հասնիլ և տպագրուիլն, թէ ոչ անհնարին, գէթ բաւականին դժուար է, Մեք այդ թղթակցութեանց հետ հաշիւ տեսնելիք չունինք. բաւական է, որ մեր հաշիւ ներկայացրինք ամէն ընթերցող հայ անհատի և զմեզ առաջի խղճի և ապագայի անդատապարտ կացուցինք. բայց ինչպէս ամէն հաշիւ կունենայ իւր տարբերութեանց բացատրութիւն և գումար, նոյնպէս և մեք տանք սորա համոզման տարբերութեանց բացատրութիւն և ընդհանուր հաւաքարանսութիւն:

Մեր յանուն սրբազան Սինոդին ուղղած յայտարարութիւն ի 20 Յուլիսի 1883 թուականի ընդ համարաւ 96, առ գերապատիւ Ներսէս Սրբազան եպիսկոպոս արձակած նամակաց հատուածք յ2, յ30 Հոկտեմբերի և ի 11 Նոյեմբերի 1884 ամի, և առ վերատեսուչս ժողովրդական դպրոցաց Բաքուայ Նահանգի-Դաղստանու գաւառի և Կուպանի շրջանի տրուած հաղորդագրութիւնք ի 28 Մայիսի և ի 11 Սեպտեմբերի նոյն տարւոյ թուահամարք 127 և 267, կարգացողք ստուգապէս վերահասու են, որ մեք նոր հրահանգների հօդեոր դպրոցների մէջ գործադրութեանն՝ նախ քան զկաթողիկոսի հաւանութիւն, հակառակորդ ենք եղած: Նոյն գաղափար կկազմեն և մեր յանուն Կովկասեան Կառավարչապետի ի 19 Յունուարի տարւոյս և Ներքին գործոց Նախարարի յ2 Փետրուարի մատուցած ծանուցագիր ընթերցողք, ևս և լուսաւորութեան Նախարարի և Դոնդուկով-Կորոսկովի դիւանատան Կառավարչի հետ ունեցած առարկութիւնք վերձանողք: Սակայն յանուն Սինոդին ի 11, ի 12 և ի 13 Փետրուարի տարւոյս տուած հեռագրութիւնք և յայտարարութիւն կարգացողք կդանեն զմեզ տրամադիր և հաւան հրահանգաց անմիջական գործադրութեան: Ի՞նչ էր այս անակնունելի, յանկարծական, դաւաճանոյ փոփոխամտութիւն և երկչտութիւն: Առանց թաղուցանելու պէտք է խոստովանինք՝ որ Սանկա-Պետերբուրգ գնալով մեր կարծիք փոխեցինք հրահանգի գործադրութեան վերաբերու-

Թեամբ, և առաւել անարդար գտանք մեր հոգեւոր բարձ-  
 րագոյն վարչութիւն քան Պետական կառավարութիւն.  
 ըստ որում նախ՝ 1874 թուականին տրուած հրահանգներ  
 հոգեւոր դպրոցաց մէջ ժողովրդական ուսումնարանաց  
 տեսչի հսկողութիւն ունենալու իրաւանց մասին, հան-  
 գոցեալ Հայրապետի կողմանէ պակասաւոր է հաղոր-  
 դուած ի գործադրութիւն սրբազան Սինոդի և վիճակաւոր  
 առաջնորդաց, և վերջինքս անմեղութեամբ պակասաւոր  
 են գործադրած: Երկրորդ՝ դպրոցական վարչութեանց  
 համար եղած վերջին կարգադրութիւնք ընդհանուր են  
 գրեթէ ամենայն հպատակ ազգաց համար, որոց կարգից  
 բացառութիւն չեն կարող ունենալ մեր վարժարաններ:  
 Եւ երրորդ՝ այս կենսական խնդրոց մէջ Նորին գերա-  
 զանցութիւն՝ Մեծարգոյ կարապետ եղեանց, երբէք և  
 երբէք չէր թոյլատրիլ իրեն վարուիլ այլ կերպով՝ քան թէ  
 պատշաճն էր: Մեր անուանաբեկութեամբ նա այնքան  
 չէր մխիթարուիլ, որքան գործոյն խանգարմամբ կտարա-  
 կուէր և կտխրէր, ուրեմն և ամբարշտութիւն կհամարիմք  
 կարծել՝ որ գիտութեամբ սխալ ուղղութիւն տուած լինի  
 Նորին յարգութիւն մեր գործակատարութեանն:

Մակար Սրբազան Արքեպիսկոպոսի ի 24 Դեկտեմբերի  
 1884 ամի քարշած հեռագիր վերժանողն ևս կմեղադրէ  
 զմեզ՝ իբրև սրբազան Սինոդի մեզ համար գծադրած  
 գործողութեան շրջանակից դուրս եկողի, բայց եթէ այն-  
 պիսին բարեհաճի Սինոդի յՅ նոյն ամսոյ թուահամարաւ  
 3342, մեզ տրուած հաւատարմագրութիւնն ուշի ուշով  
 վերժանել՝ անմեղադիր կարճակէ. որովհետև լիակատար  
 իրաւունք էր տրուած մեզ, և մեք լաւապէս գիտէինք  
 թէ՛ հոգեւոր բարձրագոյն իշխանութեան գիտումն գլխա-  
 ւորապէս այն էր և է, որ հոգեւոր դպրոցները ժողովրդա-  
 կան տեսչաց անընդմիջական հսկողութիւնից ազատ լինին,  
 և Պետական կառավարութեան լիակատար հաւատարմու-  
 թիւնն վայելեն, ինչպէս և մինչև ցարգ. նոյնը կբաղձայ և  
 Հայրապետ ամենայն Հայոց, ով և լինի նա: Ապա ուրեմն  
 ի 13 Յունիսի 1884 թուականի ուսաց հոգեւորականու-

թեան ձեռք գտնուած հոգեւոր ծխական դպրոցների հա-  
 մար շնորհուած հրահանգի Հայոց վարժարանաց վերայ  
 ևս տարածիլն ինդրելով Կովկասեան իշխան Կառավար-  
 չապետից՝ ուղղակի ծառայեցինք սրբազան Սինոդի գիտ-  
 մանն: Մերազգիներից ով որ մտադրութեամբ ուսումնա-  
 սիրած է Փետրուարի 16-ին և Յունիսի 13-ին Բարձրագոյն  
 հաճութեամբ շնորհուած դպրոցական հրահանգների ամէն  
 մէկ գիրն ու բառ, յօդուածն ու հրահանգ, շատ լաւ  
 կհասկանայ թէ ի՞նչ մեծ շնորհք կլինէր, եթէ այն արտօ-  
 նութիւն մեզ տրուէր: Վասն զի վերջին օրէնսդրութեամբ  
 երկդասեան հոգեւոր դպրոցներ քառամեայ դասընթացից  
 վերայ ունին և միամեայ գնացք, իբրև լրացուցիչ յաւելուած,  
 իսկ միադասեան վարժոյցներն՝ նոյն կարգով, ունին եռա-  
 մեայ շրջան: Այս չափերը մեր գաւառական քաղաք-  
 ների, աւանների և գիւղերի մէջ եղած ուսումնա-  
 րանաց համար շատ և շատ բաւական են, եթէ միակերպ  
 և կանոնաւոր ուղղութիւն կտրուի նոցա բանիմաց թե-  
 մական տեսչի առաջնորդութեամբ, և անցելոյն նման չի  
 թողնուիլ նորանց ի հաճոյս տեղական հոգաբարձուաց և  
 վարժապետաց անգործութեան դատապարտուած: Կմնայր  
 քանի մի տեղերի, գորօրինակ Աղբւսանդրապոլի, Ախալ-  
 ցըխայի, Ղարսի, Գանձակի, Ղզլարի ևն վիճակային վար-  
 ժարաններն, որոնք չէին բաւականանալ հինգամեայ շրջա-  
 նով, դորանց ուղղակի հոգեւոր իշխանութիւնն կփոխարկէր  
 թեմական դպրանոցի-սեմինարիայի, ըստ որում թէ ան-  
 շուշտ պէտք կայ, թէ կառավարութեան նիւթական բա-  
 ւարար միջոց և թէ անփախչելի անհրաժեշտութիւն  
 ստիպում է ուսաստանի Հայոց առաջնորդական վիճակաց  
 թիւ ու քանակ աւելացնել և տեղադրական զգուշու-  
 թիւններով նոցա դասաւորել:

Ախտակցութեան և կարեկցութեան արժանի կտես-  
 նենք այն կարգի բանաւոր և գրաւոր հրապարակախօսք,  
 որոնք ուղեղի բորբոքման հիւանդութեամբ բռնուած՝  
 ցնորաբանեցին թէ մեք քանի մի բարեկամաց ճարպիկու-  
 թեան և խորհրդատուութեան շնորհիւ գնացինք Սանկտ-

Պետերբուրգ Մակար Սրբազան Արքեպիսկոպոսի Կաթողիկոսական ընտրութիւնն յաջողելու: Ողորմելի երազատեսներ, իրենք գիշեր և ցորեկ զառանցում են իւրեանց դիտաւորութիւններ յառաջ վարելու համար և կարծում են թէ այլք ևս ոչինչ հոգս չունին: Չարմանք է, ինչ որ հնարաւոր էր յէջմիածին առնել, և իսկ գործելու տեղն ևս մայր Աթոռն էր, ինչ հարկ կայր Պետական քաղաքի հրապարակներում թարթափելու, տեղական Հայոց ձայնու կարծիք էինք հարցնելու, թէ քաղաքական իշխանութեան միջամտութիւնն էինք որոնելու: Ինչ պարտք մեզ վերայ դրուած էր՝ կատարեցինք զայն սրբութեամբ և ամենայն անձնուիրութեամբ: Այլ և ձախ վայրաբանութեանց նշանակութիւն բնաւին չենք տուած և չենք տալու: Յամենայն սրտէ կփափագէինք՝ առաջակայ ուսումնական տարեսկզբին դպրոցների դրանց աւետաւոր և հրահանգի ազդեցութենէն բնաւին դուրս բացմամբ զմեզ դատապարտելի, սխալական և անհեռատես ճանաչելու. իսկ զսրբազան Սինոդականս և զառաջնորդս հանդերձ համանգամայն յայտնի և գաղտնի խորհրդականօք մեծարելի իմաստուն և անսխալական դաւանելու:

Թ.

Որովհետև բարեյական պատասխանատուութեան վերաբերուած բաժնին հաշիւ և համար տուինք, ուրեմն մեր ժողովրդեան, մանաւանդ փարիսեցի ոմանց, հետաքրքրութիւնն յագեցուցանելու մտօք ներկայացնենք և մեր դրամական ծախուց պատկեր, որպէս զի ըստ այնմ դատաստան առնեն: Ահաւասիկ իսկական մեր յառաջադրութիւն յանուն Վիճակային Կոնսիստորիային Հայոց Ատարախանայ ի 15 Մարտի տարուոյս ընդ համարաւ 62: Եւ կատարումն առաջադրութեան մերոյ ի 21 Դեկտեմբերի «անցեալ 1884 ամի թուահամարաւ 410. Վիճակային Կոնսիստորիայդ Հայոց Ատարախանայ հատոյց մեզ ճանապարհածախք ուղիորութեան ի Սանկտ-Պետերբուրգ յար-

ադեանց թեմիս հինգ հարիւր բուրլի արծաթոյ: Գիտելովք զի այնքան դրամք չբաւէին մեզ, հեռագրաւ խնդրեցաք «ի սրբազան Սինոդէ Սրբոյ էջմիածնի այլ ևս մի հազար հինգ հարիւր բուրլիս արծաթոյ, զորս ամբողջովին հատոյց «առ մեզ կառավարիչ ակթուպատկան կարուածոց Բիշնևի՝ արժանապատիւ Կարապետ Վարդապետն Այվազեանց: Բաց յայսմանէ խորհուրդն կառավարութեան «եկեղեցեաց Հայոց Սանկտ-Պետերբուրգի և Մոսկուայի «քարեհաճեցաւ ընդ ձեռն նախագահի իւրոյ՝ Պայծառափայլ իշխան Սիմէոնի Դաւթեան Աբամելիք-Լազարեանց, «յանձնել ի ձեռս մեր բուրլիս արծաթոյ երեք հարիւր: «Ռուբին ընդ ամենայն հասին առ մեզ յանուն ճանապարհածախք և սննդեան ի մայրաքաղաքին երկու հազար երեք հարիւր բուրլի արծաթոյ:

«Ի վերոյիշեալ գումարաց ծախսեցան ընդ ամենայն «ի վարձ եօթն երկվարաց վասն 820 մզոն փոշտային ճաւապարհի, ի պարզեւ ձիավարաց և ծառայից, ի գին երկց «տոմսակաց երկաթուղւոյ և կշռոց ծանրոցաց, ի վարձ «հիւրատան և սննդեան երկց անձանց և ի վճար կառաց, «հեռագրութեանց և այլոց պիտոյից յերթ և ի դարձն «մեր ի Պետերբուրգ յընթացս ամբողջ երկուսնեայ տաւուրց մի հազար երեք հարիւր սասն բուրլի սասն կոպէկ: «Այլ որովհետև արտաքոյ այսոցիկ ծախուց արժանապատիւ անդամք Դորին՝ ի պատճառս անհնարութեան գտաւնել զծածկեալ կառս դիւրավճար վարձուք, պարտաւորեցան բանաւոր յանձնարարութեամբ մերով գնել զյաւտուկ ճանապարհական կառս՝ մի հարիւր վաքսուց եւ «երեք բուրլի արծաթով, որք տակաւին մնան անվճար, «վասն որոյ զմնացորդ ինն հարիւր ուքսուց եւ ինն «բուրլի իննսուց կոպէկս արծաթոյ ընդ սմին առաքելով «ի Դոյնն, առաջադրեմք, նախապէս բառնալ ի մէնջ առաջարկեալ գումարաց զգինս կառացն և ապա զյաւելեալ «ուրթ հարիւր քսան և վեց բուրլի իննսուց կոպէկս արծաթոյ ամբողջովին մատուցանել ի Սինոդն Սրբոյ էջմիածնի. իսկ զկառսն՝ եթէ ձեռնտու գնով անհնարին լիցի

«վաճառել, համարել սեփականութիւն առաջնորդական  
«տանն վիճակիս Աստրախանայ»:

Ո՛վ ոք Պետերբուրգի սղութեան՝ ուտելեաց և բնա-  
կարանաց, ծանօթ է և գիտէ Ղեմուտ հիւրանոցի գիրքը,  
յուսանք որ զմեզ անգր քան զչափն խնայող կղտնէ ազ-  
գային կոպէկներով հաւաքուած գումարի ծախսարարու-  
թեան համար: Ո՛վ ոք մանրամասնաբար կտեղեկանայ՝ որ  
առաւել քան երկու հարիւր բութի ուտելեաց և ըմպե-  
լեաց համար ծախսուած չէ, կարող է գաղափար կազմել  
թէ ինչպիսի զրկութեանց ենք համբերել: Երանի՛ թէ  
աշխարհիս մէջ վանելու անհնարաւոր, ահագին ուժեր  
չկանգնէին տկարների և ընկճուածների ընթացքի յառաջ-  
այն ժամանակ թէ հեշտ էր ամէն մէկ ժողովուրդի իւր  
գոյութեան կռուի ասպարիզում շարունակել գնացքը  
մինչև մէկ որոշ բաղդասահման կէտ, և թէ նիւթական  
և բարոյական զոհողութիւններն կունենային իւրեանց  
նշանակութիւն:

ՍՈՒՔԻԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՉԵԱՆՅ:



### Յ Ա Ն Ե Լ Ո Ւ Ա Ճ

Յաջողութիւն չունենալով՝ դպրոցական խնդրոյն վե-  
րաբերութեամբ մեր գործելու եղանակի մասին, ազգային  
լրագրական հրատարակութեանց մէջ յայտնուած մե-  
ղադրական դրութիւնները յառաջ բերելու, ընթերցողների  
ծանօթութեան համար նոյնութեամբ զետեղում ենք կով-  
կասեան Կառավարութեան կողմից յայտարարուած տե-  
ղեկագիրն՝ որ տպագրուած է «Նոր Դար» օրագրի 1885  
թուականի 41 համարում: Յարգելի վերծանողք կարող  
են համեմատել մեր պատճառաբանութիւն Կառավարու-  
թեան առարկութեանց հետ և վերջիչել նախանցեալ  
տիւր իրողութիւնները դպրոցների դռները փակուելու  
ժամանակ:

Ներկայսուս տէրութեան կարգադրութեամբ փակվում  
են բոլոր այն հայոց ծխական ուսումնարանները, որոնց  
վարչութիւնը չէ ուզում կատարել այդ ուսումնարանների  
համար տէրութիւնից դրուած կանոնները: Որովհետև այս  
տեսակ ուսումնարանների փակուելու առթիւ հասարա-  
կութեան մէջ դիտմամբ տարածվում են անճիշդ լուրեր,  
ուստի հետևեալ ծանուցումը տպվում է պարզելու ներ-  
կայ հանգամանքը և ցոյց տալու իսկական պատճառները,  
որոնք ստիպեցին տէրութեան գիմելու վերոգրեալ ցա-  
ւալի միջոցին:

1873 թ. նոյեմբերի 22-ին Բարձրագոյն հաստատուած  
Պետական խորհրդարանի կարծիքով կովկասում և Ան-  
դրրկովկասում ուսումնարանական մասի կաղմակերպու-  
թեան համար կարգադրուած է, որ բոլոր տէրունական  
գաւառական և սկզբնական ուսումնարանների, նաև հա-

օտարակալան և մասնաւոր դպրոցների կառավարութիւնը, նոյնպէս այլադաւան ծիսական դպրոցների վերայ հսկողութիւնը յանձնուին ժողովրդական ուսումնարանների վերատեսուչներին և տեսուչներին: Սորա հետ յիշեալ բոլոր ուսումնարանների վերայ պէտք է տարածուին կայսերութեան մէջ ներգործող այն օրէնքները, որ պարտաւորացնում են աւանդել ուսուսաց լեզուն բոլոր ուսումնարաններում և ուսուսաց պատմութիւնն ու Ռուսաց կայսերութեան աշխարհագրութիւնը այն տեղերում, ուր ուսուցանում են առհասարակ պատմութիւն և աշխարհագրութիւն: Այս Բարձրագոյն հրամանը կատարելու միջոցին առաջ եկան մի քանի թիւրիմացութիւններ հայ լուսաւորչական բարձր հոգևոր իշխանութեան և Կովկասի գլխաւոր վարչութեան մէջ: Ապագայում այս թիւրիմացութիւնների առաջն առնելու համար ներքին գործոց նախարարի ամենահպատակ զեկուցման առթիւ թագաւոր Կայսրը 19 յուլիսի 1874 թ. Բարձրագոյն բարեհաճեց հաստատել իբրև հրահանգ թէ հայ լուսաւորչական հոգևոր իշխանութեան և թէ ժողովրդական ուսումնարանների տեսուչների համար հետեւեալ կարգերը:

1) Համաձայն 975 յօդ. XI հատ. 1 մ. օր. ժող., հայ հոգևոր իշխանութեան պարտաւորութիւնն է՝ հիմնել ծիսական դպրոցներ և նոցա կառավարել, նոյնպէս հոգալ մտցնելու կանոնաւոր և յարմար դասաւանդութեան եղանակ և պահպանել բարոյականութիւնն ուսանողների և ուսուցիչների մէջ:

2) Ժողովրդական ուսումնարանների տեսուչների պարտաւորութիւնն է՝ վերաբերութեամբ հիմնուող և Հայոց հոգևոր իշխանութեան ձեռքով կառավարուող ընդհանուր կրթողական ծիսական ուսումնարանների բարձրագոյն հաստատուած 22 նոյեմբերի 1873 թ. Պետական խորհրդարանի կարծիքի զօրութեամբ, — հսկել՝ 1) որ բոլոր ուսումնարաններում՝ աւանդուի ուսուսաց լեզուն, իսկ այն ուսումնարաններում, ուր ուսուցանում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, — աւանդուին ուսուսաց

պատմութիւնն ու աշխարհագրութիւնը ուսուցիչներէն լեզուով: 2) որ այդ ուսումնարաններում ուսուցիչները լինին դուսաց հպատակներ պարտ ու պատշաճ բարոյականութեամբ: Իսկ տեսուչներին իրաւունք չէ տուած խառնուելու ուսումնարանների տնտեսական մասի մէջ կամ սոցա վերաստուգելու: 3) այն ուսումնարանները, որոց նպատակն է պատրաստել եկեղեցական պաշտօնեայք, ժողովրդական տեսուչների հսկողութեան չեն ենթարկվում և մնում են հոգևոր իշխանութեան բացառական կառավարութեան տակ: Այս տեսակ ուսումնարանների դասընթացը և նոցա ներքին կարգի մասին կանոնները պէտք է ներկայացնուին ի հաստատութիւն Բարձրագոյն վարչութեան (յօդ. 100):

Սորա հետ թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել, որ համաձայն վերոգրեալ բացատրութեան, Կաթողիկոսը իւր կողմից անյաղաղ պարտ ու պատշաճ կարգադրութիւն անէ որ Հայոց հոգևոր իշխանութեան կառավարութեան ներքոյ գտնուող ընդհանուր կրթողական ծիսական ուսումնարանները ենթարկուին, վերոյիշեալ հիմանց վերայ, ժողովրդական ուսումնարանների տեսուչներին հսկողութեանն և որ սոցա հաղորդուի այդ ուսումնարանների ցուցակը, նոյնպէս պարտաւորացնել նշանակուած թեմական վերատեսուչներին, որ իւրեանցից կախուած օգնութիւնը հասցնեն ժողովրդական ուսումնարանների տեսուչներին, որպէս զի սրբա կատարեն իւրեանց վերայ դրուած պարտականութիւնը:

Վերոգրեալ կանոններից երևում է որ՝

Ա) Հայոց հոգևոր իշխանութիւնը պարտաւոր էր նոր բացուելիք և փակուելիք ուսումնարանների մասին իսկոյն սոցա բացուելուց և փակուելուց յետոյ յայտնել ուսումնարանական վարչութեան, որովհետև հակառակ դէպքում նոր բացուած ուսումնարանները կարող են մնալ տուռնց հսկողութեան շատ թէ փոքր ժամանակուայ ընթացքում, կամ թէ փակուած ուսումնարանների վերաստուգութեան համար ուսումնարանական վարչութեան

անձինք պարտաւորած կլինէին ի զուր տեղը ճանապարհորդութիւն անել:

Բ) Հայոց հոգևոր իշխանութիւնը պարտաւոր էր տեղեկութիւն տալ ուսումնարաններում նոր նշանակուած ուսուցիչների մասին, ցոյց տալով նոցա բնակութեան տեղը, մինչև ուսուցչութեան պաշտօն ստանալը, և նոցա կրթական ցենզը, որովհետև առանց այդ տեղեկութեան ուսումնարանական վարչութեան անձինքն անկարող կը լինէին ուսուցիչների հպատակութեան և բարոյականութեան մասին տեղեկութիւն հաւաքել:

Ներքին գործոց նախարարութիւնը, իւր գրութեան մէջ 20-ին ապրիլի 1876 թ. № 1481, Փոխարքայի Գլխաւոր վարչութեան Կառավարչին նոյնպէս բացատրած է որ 19 յուլիսի 1874 թ. Բարձրագոյն հրամանի զօրութեամբ, Հայոց հոգևոր իշխանութիւնը պարտաւոր է հաղորդել ուսումնարանական վարչութեանը տեղեկութիւններ թէ նոր բացուելիք ուսումնարանների և թէ նոցա մէջ նոր նշանակուած ուսուցիչների մասին:

Գ) Բացի սրանից Հայոց հոգևոր իշխանութիւնը պարտաւոր է հաղորդել Կովկասի ուսումնարանական վարչութեանը ընդհանուր կրթողական ծխական ուսումնարանների ցուցակը, որը հարկաւոր էր այն հանգամանքի առաջնաւոր համար, որ երբեմն Հայոց հոգևոր իշխանութիւնը թոյլ էր տալիս մտցնելու ի թիւս ծխական ուսումնարանների այն տեսակ ուսումնարանները, որոնք պահպանվում էին կամ մասնաւոր անձանց կամ հասարակութեանց հաշուով: Այս տեսակ ուսումնարաններն ի հարկէ պէտք է մտնէին առ հասարակ մասնաւոր կամ հասարակական ուսումնարանների կարգը և պէտք է որ ամբողջապէս ենթարկուած լինին ուսումնարանական վարչութեանը:

Չը նայելով նորան որ 19 յուլիսի 1874 թ. յիշեայ օրէնքի ուսումնարանական վարչութեանը տրվում էր շատ սահմանափակ հսկողութիւն Հայոց ծխական ուսումնարանների վերայ և որ ուսումնարանական կրթական կէ-

տից ուսումնարանների վերայ դիտողութիւնը այդ օրէնքի զօրութեամբ ամբողջապէս մնում էր Հայոց հոգևոր իշխանութեան վերայ, այնու ամենայնիւ այս վերջինը զանց էր առնում հաղորդել ժողովրդական ուսումնարանների վերատեսչութեանց մինչև անգամ ամենակարևոր տեղեկութիւնները հաշուետուութեան համար թէ այն անձանց մասին որոնք նշանակվում էին ուսուցչի պաշտօնով հայոց դպրոցներում և թէ հենց դպրոցների մասին: Այսպէս ահա երբ ուսումնարանական վարչութեանը հարկաւոր եղաւ տեղեկութիւն ունենալ թէ Հայոց հոգևոր իշխանութեան ներքոյ գտնուած ուսումնարաններից որոնց նա համարում է հոգևոր և ուրեմն պէտք է ենթարկուին համաձայն 19 յուլիսի 1874 թ. Բարձրագոյն հաստատուած կանոնների ուսումնարանական վարչութեան դիտողութեանն, և որոնց ընդհանուր կրթողական, և հետևաբար սորա հսկողութեանը ենթարկուող, Կովկասի Փոխարքայի Գլխաւոր վարչութեան նախկին կառավարիչը 21 մարտի 1881 թ. դիմեց Կաթողիկոսին որ հաղորդուին նորան այդ տեղեկութիւնները: Նորին վեհափառութիւն 27 մայիսի 1881 թ. № 252 գրութեամբ պատասխանեց, որ ներկայ օրինաց հիման վերայ ժողովրդական ուսումնարանների վերատեսուչների և տեսուչների դիտողութեանը չեն ենթարկվում էջմիածնայ հոգևոր ձեմարանը, հոգևոր գպրոցներն և եկեղեցական ուսումնարաններից նոքա որոնց նպատակն է պատրաստել եկեղեցական պաշտօնետյր և որ նորին վեհափառութիւնը կարգադրել է որ թեմակալ առաջնորդները հաղորդեն Գլխաւոր վարչութեանը նորա ուզած տեղեկութիւնները: Սակայն այդ տեղեկութիւնները ոչ այն ժամանակ և ոչ յետայ թեմակալ առաջնորդերը չեն հաղորդած: Այն ինչ իսկապէս երևեցաւ որ մի քանի արական և մինչև անգամ իգական դպրոցներին, որոնք գլխաւորապէս պահպանվում էին հասարակութեան հաշուով և ունէին ընդհանուր կրթողական դասընթաց, դոցա հիմնադիրները և մինչև անգամ ինքը հոգևոր իշխանութիւնը հոգևոր դպրոցներէ

անուն էին տուել, ուստի և այդ դպրոցները խուսափում էին ուսումնարանական վարչութեան հսկողութիւնից: Մի թեմական առաջնորդն անգամ կարծում էր որ «ժողովրդական ուսումնարանների վերատեսուչները անկանոն են պահանջում Հայոց դպրոցների հոգաբարձուներից ուսանողների, ուսուցիչների թուի և այլ առարկաների մասին տեղեկութիւնները, և որ այդ տեղեկութիւնների հաւաքելը, յիշեալ անձի կարծիքով, նոցա իրաւունքի և պարտաւորութիւնների շրջանի մէջ չէ մտնում. նոցա որովհետեւ թոյլ է տուած տեղեկանալու միայն՝ 1) աւանդւում է արգեծք ուսաց լեզուն և ուսաց պատմութիւն ու աշխարհագրութիւնը և 2) ուսուցիչները ուսաց հպատակ են թէ ոչ»: Սորանից աւելի նորա, վերատեսուչները, եպիսկոպոսի կարծիքով, «ոչինչ բանի մէջ իրաւունք չունին»:

Ժողովրդական ուսումնարանների վերատեսուչների և տեսուչների և ուսումնարանական վարչութեան գիտողութիւնից երեւցաւ որ համարեա բոլոր Հայոց դպրոցներում պարտաւորեցուցիչ առարկաներից Ռուսաց լեզուն անբաւարար էր մատակարարվում:

Այսպէս ուրեմն Հայոց հոգևոր իշխանութիւնը իւր կառավարութեան ներքոյ գտնուած դպրոցները ձգեց բոլորովին բացառական դրութեան մէջ, այնպիսի դրութեան մէջ, որի մէջ չէ գտնվում Կայսերութեան մէջ ոչ մի դաւանութեան դպրոցը: Բայց որովհետեւ 19 յուլիսի 1874 թ. կանոնների հրատարակութեան օրից անցաւ մօտ 10 տարի: այն ինչ այլ ևս ոչինչ յոյս կար այս կանոններով Հայոց դպրոցներն աւելի սրոշ և Հայ ժողովրդի և Ռուսաց տէրութեան օգտին համապատասխան դրութեան վերայ դնելու, ուստի թագաւոր Կայսրը 16 փետրուարի անցեալ 1884 թ. բարեհաճեց հաստատել՝ ի լրումն 22 նոյեմբերի 1873 թ. օրէնքի, Հայ լուսաւորչադաւան ծխական դպրոցների մասին Կովկասում նոր կանոններ:

Այս կանոնների նպատակն է, նախ և առաջ՝ հաստատել ճիշդ հասկացողութիւն ծխական դպրոցների մասին

և հանել հոգևոր իշխանութեան կառավարութիւնից այն ուսումնարանները, որոնք բացառապէս ենթարկվում են Ազգային լուսաւորութեան նախարարութեան հսկողութեանը, այսինքն այն ուսումնարանները, որոնց գասընթացը տարրական ուսումնարանների դասաւանդութեան ծաւալից աւելի է, և որոնք Կայսերութեան բոլոր վարչութեանց մէջ ենթարկուած են բացառապէս ուսումնարանական վարչութեանը, և երկրորդ՝ սրոշել թէ տեղական Հայ լուսաւորչական հոգևոր իշխանութեան և թէ Ազգային լուսաւորութեան նախարարութեան ներկայացուցիչների յարաբերութիւնը գէպի ծխական դպրոցները: Թեմակալ առաջնորդներին իրաւունք է տուած ոչ թէ միայն հսկել այդ դպրոցների վերայ տնտեսական վարչական և մանկավարժական կողմից թէ անձամբ և թէ առանձին վերատեսչի միջնորդութեամբ, որ եկեղեցական դասից պէտք է լինի, այլ և ունին իրաւունք նշանակել և հրաժարեցնել ուսուցիչներին, բացել և փակել այդ դպրոցներն այն պարտաւորութեամբ, որ նա այս վերջին կարգադրութեանց մասին հաղորդէ ի գիտութիւն Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի: Ազգային լուսաւորութեան նախարարութեան տեղական օրգանները պէտք է հսկեն բոլոր առարկաների դասատուութեան վերայ, բացի կրօնից, պէտք է պահանջեն, որ ուսաց լեզուն աւանդուի պարտաւորեցուցիչ բոլոր դպրոցներում, իսկ նոցա մէջ, որտեղ աւանդվում են պատմութիւն և աշխարհագրութիւն,— ուսաց պատմութիւնը և ուսաց աշխարհագրութիւնը աւանդուին Ռուսաց լեզուով: Ուսումնարանական շրջանի հոգաբարձուին իրաւունք է տուած գիմել հոգևոր իշխանութեանը, հարկաւոր գէպըրում հրաժարեցնել այնպիսի ուսուցիչներին, որոնց գործունէութիւնը որեէ կերպով անհամապատասխան կը համարուի նոցա կոչմանը:

Վերոյիշեալ կանոնները յայտարարած էին հրամանաւ Կառավարող Սենատի 6 ապրիլի նոյն 1884 թ. և Գլխաւոր կառավարիչը քաղաքային մասի Կովկասում հաղորդած է

Էջմիածնայ հայ լուսաւորչական Սինոդին առաջարկելու գոցա թեմակալ առաջնորդներին ի գործադրութիւն և ի հրահանգս Բայց Սինոդը, յայտնելով որ նա իրաւունք չունի ընդունել այդ օրէնքը ի գործադրութիւն, որովհետեւ Հայոց գաղտնիքի վերաբերութեամբ որևէ կարգադրութիւն անելու իրաւունքը պատկանում է միմիայն կաթողիկոսին, և առաջի առնելով կաթողիկոսական դահի թափուր մնալը, միջնորդեց որ հրատարակած կանոնների գործադրութիւնը մնալ մինչև Հայ եկեղեցւոյ վեհապետի ընտրութիւնը: Այս միջնորդութիւնը, չը նայելով որ երկու անգամ կրկնուեցաւ, բոլորովին մերժուած էր, իբրև անհամապատասխան Տէրութեան սորա միասին ունեցած հիմնական օրինաց, սորա հետ Սինոդին բացատրած էր՝

ա, որ 945 յօդ. մ. 1, հատ XI օր. ժող. իսկական մտքով էջմիածնայ պատրիարքական աթոռի դատարկութեան միջոցին էջմիածնայ Սինոդի վճռին չեն կարող ենթարկուիլ միայն զուտ հոգեւոր գործերը:

բ, որ 16 փետրուարի վերոյիշեալ կանոնների գործադրութեան մասին կարգադրութիւնը այդ տեսակ գործերին անկարելի է վերաբերել, որովհետև այդ կանոնները հրատարակուած են ըստ բացատրութեան Կառավարող Սենատի միայն և եթ ի լրումն ուսումնարանների մասին Կովկասում ներգործող օրէնքի (8 կ. Բարձրագոյն հաստատուած 22 նոյեմբերի 1873 թ. Պետական խորհրդարանի կարծիքի Կայսերութեան ուսումնարանների ընդհանուր կանոնադրութեանց գործադրութեան մասին Կովկասի ուսումնարաններում), և

գ, որ իւրաքանչիւր օրէնք, Հիմն. Օրինաց 59 և 63 յօդուածների մտքով, (հատ I, օր. ժող.) նորա ըստ պատշաճաւոր յայտարարութիւնից յետոյ, սուրբ և անքակտելի պէտք է գործադրուի ամէնքի և ամէն մէկի կողմից:

Սակայն սորանից յետոյ էլ հայ լուսաւորչական Սինոդը իւրեան իրաւունք համարեց չկատարել Բարձրագոյն հրամանը և սորա տեղը յանձնեց Աստրախանի թեմակալի

պաշտօնակատար Սուքիաս Եպիսկոպոս Պարզեանցին որ սա Ս. Պետերբուրգում անձամբ նորոգէ Սինոդի նախկին երկու միջնորդութիւնները 16 փետրուարի կանոնների գործադրութիւնը կանգնեցնելու մասին: Յանուն ներքին գործոց նախարարի տուած հաղորդագրութեան մէջ նորից ցոյց էր տուած Սինոդի անձեռնհասութիւնը գաղտնիքի գործերի մէջ և ի միջի այլոց յիշուած էր որ Հայոց գաղտնիքի անձամբ կառավարելու Կաթողիկոսի իրաւունքը հիմնուած է Հայոց եկեղեցւոյ կանոնների վերայ, որ սրբազործուած է վերջին ժամանակներում և Ռուսաց օրէնսդրութեամբ:

Եւ այս միջնորդութիւնը, ի հարկէ, Տէրութիւնը անկատար թողեց մանաւանդ ևս որ վերոգրեալ առիթները, սոցա ստուգելուց յետոյ, բոլորովին անհիմն դտնուեցան: Այսպէս հանգուցեալ Գէորգ IV Կաթողիկոսը 1873 թ. հրատարակած կոնդակի մէջ յիշում է որ Հայոց եկեղեցւոյ կանոններով և աւանդութեամբ թեմակալ առաջնորդները և սոցա յաջորդները պարտաւոր են հոգալ թեմական և ծխական ուսումնարանների բարեկարգութեան և յառաջադիմութեան մասին և հսկել նոցա վերայ, աւելացնելով որ այս առաջարկութիւնը գրուած է և Հայոց եկեղեցւոյ մասին հրատարակուած 1836 թ. կանոնադրութեան (պրօթենիայի) մէջ, այսինքն 66 յօդուածում (այժմ 975 յօդ. մ. 1. հատ XI, օր. ժող.): Ինչ որ վերաբերում է մեր օրէնսդրութեանը, սորա մէջ որոշուած է, որ Կաթողիկոսի վերջնական վճռին առաջադրվում են միմիայն զուտ հոգեւոր գործերը, որոնք վերաբերում են հաւատոյ ուսմանը, աստուածապաշտութեան կատարմանը և այլն (յօդ. 929 նոյն հատորի և մասի): Իսկ Սինոդը վերահսկում է իւրեան ենթարկուող բոլոր վարչութեանց և պաշտօնական անձանց գործունէութեան վերայ (յօդ. 938), ի միջի այլոց, բնականապէս և Եպիսկոպոսների վերայ: Վերոյիշեալ 475 յօդ. ուսումնարանական գործերը ուղիղ վերաբերում է թեմակալ առաջնորդների գործունէութեան շրջանին, որոնք,

ըստ 975 յօդ. Սինոդին ներկայացնում են թեմերի կա-  
կառավարութեան միջոցին իւրեանց գործունէութեան  
հաշիւը, սորա հետ և ուսումնարանների կառավարութեան  
հաշիւները, իսկ 1003 յօդ. ենթարկում կաթողիկոսի  
գլխաւոր կառավարութեանը Էջմիածնայ հոգևոր ձեռա-  
րանը, մինչև անգամ հոգևոր դպրոցները այդ յօդուածով  
կախուած են եպիսկոպոսից, որի թեմում գտնվում են  
այդ դպրանոցները:

Աչքի առաջ ունենալով որ Հայ լուսա սրջական Սի-  
նոդը շարունակ դանց էր առնում կատարել ամէնքի հա-  
մար պարտաւորեցուցիչ և նորան յայտնած 16 փետրուարի  
1884 թ. Բարձրագոյն հրամանը, կառավարութիւնը հար-  
կաւոր համարեց աւելի որոշ միջոցների դիմել, որպէս զի  
գործադրուին Հայոց ծխական դպրոցների համար հրա-  
տարակուած նոր կանոնները: Այս մասին հետևացած  
Բարձրագոյն հրամանները կատարելու համար, Գլխաւոր  
կառավարիչը քաղաքային մասի Կովկասում անցեալ փե-  
տրուարի 8-ին ուղարկեց Էջմիածնայ Սինոդին Ս. Պետեր-  
բուրգից հեռեւեալ հեռագիրը՝

«Բարձրագոյն հրամանաւ առաջարկում եմ Սինոդին  
անյապազ հաղորդել բոլոր թեմակալ առաջնորդներին ի  
գործադրութիւն և ի հրահանգ 16 Փետրուարի կանոն-  
ները ծխական ուսումնարանների մասին, եթէ այս կա-  
նոնները այս առաջարկութիւնը սասանալուց յետոյ երկու  
շաբաթուայ ընթացքում՝ չեն գործադրուիլ, անյապազ կը  
կարգադրուի փակել այն դպրոցները, որոնք չեն կատարիլ  
ուսումնարանական վարչութեան օրինական պահանջները»:

Այս հեռագրի պատճէնը միևնոյն ժամանակ ուղար-  
կուած է Կովկասի բոլոր թեմակալ առաջնորդներին և  
կառավարութեան ձեռնարկած վճուի մասին յայտնուեցաւ  
թէ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին և  
թէ երկրիս առանձին վարչական մասի կառավարիչներին  
որպէս զի սքա հարկաւոր դէպքում համապատասխան  
կարգադրութիւններ անեն:

Գլխաւոր կառավարչի քաղաքային մասի Կովկասում

վերոյիշեալ հեռագրին Էջմիածնայ Սինոդը 29 փետրուարի  
ուղարկեց անուղղակի պատասխան: Որովհետև այդ մի-  
ջոցին արգէն անցել էր Փետրուարի 16 1884 թ. կանոն-  
ների գործադրելու համար տուած երկու շաբաթ ժամա-  
նակը, ուստի կարգադրուեցաւ փակել այն ծխական  
Հայոց դպրոցները, որոնք չեն ընդունել ի հրահանգ այդ  
կանոնները:

Մինչև այժմ ունեցած տեղեկութիւններից Հայոց դպրոց-  
ներից, որոնք մերժեցին ենթարկուիլ 16 Փետրուարի ան-  
ցեալ ամի պահանջներին, փակուեցան՝ Թիֆլիսում Ս.  
Գայիանեան օրիորդական ուսումնարանը և տասն և չորս  
դպրոցներ և, բացի սորանից, Երևալէտոպօլի նահանգի  
մի քանի դպրոցները:

Աչքի առաջ ունենալով թէ ուսումնարանական վար-  
չութեան Հայոց դպրոցների մէջ ճիշդ յարաբերութիւն  
հաստատելու անհրաժեշտ կարևորութիւնը և թէ Հայ  
ժողովրդի կրթութեան օգուտը, որ կառավարութեան  
համար միշտ թանկագին է, ուստի հրատարակուած էին  
16 փետրուարի 1884 թ. լրացուցիչ կանոնները: Այս կա-  
նոններով բոլորովին չի պակասում Հայոց հոգևոր իշխա-  
նութեան իրաւունքը դպրոցների կառավարելու մասին,  
միայն տեղական ուսումնարանական վարչութեան դրուած  
է պարտականութիւն՝ հսկել նոցա մէջ աւանդուող բոլոր  
աւարկանների վերայ, բացի կրօնից, նոյնպէս և պահան-  
ջել, հարկաւոր դէպքում, հրաժարեցնել այն ուսուցիչնե-  
րին, որոնց գործունէութիւնը անհապատասխան երևար  
նոցա կոչմանը:

Այս կանոնները ոչ թէ միտյն համաձայն են Ռու-  
սաստանի բոլոր ուրիշ այլադաւան ուսումնարանների հա-  
մար եղած կարգադրութիւններին, այլ և Հայ լուսաւոր-  
չական հոգևոր իշխանութեանը տալիս են մեծամեծ իրա-  
ւունքներ համեմատելով այն իրաւունքների հետ, որոնցից  
օգուտ են քաղում միւս այլադաւան եկեղեցիք: Էջմիած-  
նայ Սինոդը՝ 16 փետրուարի կանոնների գործադրութեան  
մեծուքը, ինչպէս վերև յիշուեցաւ, հիմնուած է անկանոն

բացատրութեան վերայ իբր թէ Հայոց դպրոցների մասին որևէ կարգադրութիւն անելու իրաւունքը պատկանում է միայն կաթողիկոսին և թէ այդ իրաւունքը ստանում է իւր զօրութիւնը Հայոց եկեղեցւոյ կանոններից, որոնք սրբազործուած են յետագայ ժամանակներում Ռուսաց օրէնսդրութիւններով: Այն ինչ յայտնի է, որ վեհափառ Կաթողիկոսին պատկանում է վճռողական ձայն միայն հոգևոր նշանակութիւն ունեցող գործերի մէջ, որոնք 945 յօդ. հատ. 1, օր. ժող. զօրութեամբ իրաւ չեն կարող վճռուիլ առանց կաթողիկոսի հաստատութեան. իսկ Սինոդը, որ կազմուած է 11 մարտի 1836 թ. Բարձրագոյն հրամանաւ իբրև Ռուսաց Կայսերութեան վարչութիւն, նորա օրգանն է, ուստի նա ենթարկուած է Հայոց լուսաւորչական եկեղեցւոյ գործերում, 940 յօդ. նոյն թուականի և հատորի հիման վերայ՝ կառավարող Սենատին, Կովկասի փոխարքային (այժմ՝ գլխաւոր կառավարիչ քաղաքային մասի Կովկասում) և ներքին գործոց նախարարութեան ի շարս միւս այլադուան բարձրագոյն հոգևոր վարչութիւնների, ինչպէս այդ բառացի յայտնուած է օրէնքի մէջ: Ինչ որ վերաբերում է եկեղեցական կանոններին, որոց վերայ մասնացոյց է լինում Հայոց հոգևորականութիւնը, կաթողիկոսի և Սինոդի Հայոց ուսումնարանների կառավարութեան իրաւունքները սրտելու ժամանակ, այդ կանոնները նոյն իսկ Հայոց հոգևորականութեան խօսքերով հաստուած են ուսուց օրէնսդրութեամբ: 11 Մարտի 1836 թ. Բարձրագոյն հրամանից յետոյ, որ որոշում է Ռուսաստանում Հայ լուսաւորչական եկեղեցւոյ օրէնսդրութիւնը, այս եկեղեցւոյ համար ոչ մի նոր եկեղեցական կանոն, որ անհամաձայն լինէր ուսուց Կայսերութեան օրինաց, ակներև է որ հրատարակուած չէր կա՛ող լինել: Ուստի էջմիածնայ Սինոդը բոլորովին հիմք չունէր հրաժարուել մտցնելու ի գործադրութիւն Հայոց դպրոցների մէջ 16 փետրուարի 1884 թ. կանոնները, որոնք Բարձրագոյն հաստատուած էին, և յետաձգել նոցա գործադրութիւն մինչև նոր Կաթողիկոսի ընտրութիւնը:

Այս պատճառաւ չափազանց միջոցների գործադրութեան հետևանքը, որին ցաւելով կառավարութիւնը ստիպուած էր այժմ դիմել, էջմիածնայ Սինոդի անկանոն միջնորդութեան պատճառաւ, ամբողջապէս պէտք է ընկնի այդ վարչութեան պատասխանատուութեան վերայ:

Հայոց հոգևոր իշխանութիւնը մերժելով 16 փետրուարի 1884 թ. կանոնների գործադրութիւնը, ինքնակամ հրաժարուեցաւ նորա վերայ դրած բաձր պարտականութիւնից կառավարել ծխական դպրոցները: Նոցանից շատերը գլխաւորապէս պահպանվում էին հասարակութիւնների հաշուով. ուստի եթէ այս վերջինները ցանկանան իւրեանց զաւակների օգտի համար, միջնորդել տեղական ուսումնարանական վարչութեան առաջ բաց անել ի տեղի փակուած կամ փակուելիք դպրոցների, մասնաւոր ուսումնարանները ընդհանուր հիմանց վերայ, այդ տեսակ ուսումնարանները կարող են բացուել իբրև 2-րդ, 3-րդ և մինչև անգամ՝ 1-ին կարգի ուսումնարաններ: Առաջին տեսակ ուսումնարանները իւրեանց դատընթացով համապատասխան են սկզբնական ուսումնարաններին մի և երկու դասարանով, 2-ը պրօգրիմնազիօնին և 3-ը գիմնազիօնին: Դասատուութիւնը կարող է լինել և Հայոց լեզուով հաւանութիւն ստացած դասագրքերով, միայն պտհպանելով թէ ուսուց լեզուի ուսուցման և թէ ուսուց պատմութեան և ուսուց աշխարհագրութեան մասին պահանջած պայմանները:

Անտարակոյս այդ տեսակ ուսումնարանների կազմակերպութեան մասին կը հոգայ հաստրակութեան այն ողջամիտ մասը, որին թանկագին է նոր սերունդի լաւապագան և որը հաւատարիմ է տէրութեան և յարգում է պետութեան օրէնքները:



Էջ	տող	սպուած է	պէտք է լինի
14	2	ներքի ից Դիլիանով	Դեյլիանով
20	15	վերևի ից Երբէք	Երբ էք
26	3	» Գեկտեմբերի	Դեկտեմբերի
27	18	» տղաղակներ	աղաղակներ
45	1	» պատճառաբերութիւններով	
46		» յետաձգելը: չը պէտք է կարգալ վերջին տողից յետոյ պետք է աւելացնել հետեւալ բառերը, որոնք չեն տպուած «հազարութեան ուսումն հաստատուն հիման վերայ դնելը».	
51	2	» ն. զզժրաւոր	զզօրաւոր
52	7	» ըսպասում	սպասում
54	17	» վ. կրճնած	կրկնած
60	14	» ն. երևանի	Երևանի
71	13	» մարդիկներ	մարտիկներ
72	7	» Դիլիանովն	Դեյլիանովն
78	13	» վ. ամարնային	ամառնային
»	12	» ն. ինկած	ընկած
80	16	» ն. էֆքեար	էֆքեար
»	13	» ստորագրութիւն	ստորագրութիւնն
85	15	» վ. ծախսեցան	ծախեցան
86	5	» կգտնէ	կգտնէ
87	15	» ն. ներկայումս	ներկայումս
88	14	» ն. «հայ բառից յետոյ աւելացնել զուսաւորչական»	զուսաւորչական
90	4	» յիշեայ	յիշեալ
»	3	» օրէնքի	օրէնքով
91	6	» առաջնորդերը	առաջնորդները
92	15	» կասեցումն	կասեցումն
»	14	» բոլորովին	բոլորովին
»	9	» տարի:	տարի,
94	9	» վ. մնալ	մնայ

»	10 »	Ա.յո	Ա.յս
»	12 »	միասին	մասին
96	9 »	լուսա սրչական	լուսաւորչական
»	5 ն.	ուսումնարանական	ուսումնարանական
»	4 »	մասի	մասերի
97	1 վ.	29	22
»	12 »	դպրոցներ	դպրոցներ
»	1 ն.	հիմնումն	հիմնում
98	8 »	օրէնսդրութիւնը	օրէնսդրութիւնը
99	4 »	կը հոգայ	կը հոգայ Հայ

Մամուլի քակ են եւ հետզհետէ յոյս կրթեսնեն.

1. «Յայտարարական թուղթ Սուքիաս Եպիսկոպոսի Պարզեանց յանուն վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ Դ ի»:
2. «Ազգարարական թուղթ Սուքիաս Եպիսկոպոսի Պարզեանց առ ոմանս յանդամոց միաբանական ուխտի որբոյ Աթուռոյն Կաթողիկէ Էջմիածնի»:
3. «Առձեռն վարձատրութիւն Երախտեաց մեծ և յայտնի բարերարիս, փոքր և անծանօթ բարեկամիս»:

Տպագրուած եւ վաճառվում են

Երևանում. Այվազեանց և Նազարեանցի տպարանում և պարոն Յովհաննիսեանցի գրախանութում:  
Իսկ Տփլիսում «Գուտտեմբերգ» և «Կենդրոնական» գրավաճառանոցներում:

1. «Սուքիաս Եպիսկոպոս Պարզիանցի Նամակը գրուած ս. Էջմիածնի Սինօզի Ատենապետի Տեղակալ Երեմիա Եպիսկոպոս Գալստեանի անուան» Գինն է: . . . 60 կոպէկ:
2. «Ճանապարհորդական տպաւորութիւնը և համառօտ նկարագիր դէպքերի վերջին Կաթողիկոսական ընտրութեան ժամանակ» . . . . . 50 կոպէկ:



«Ազգային գրադարան»



NL0228002

44. 6

